

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ
ԽԱՐԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

ՍՈՒՍԱՆՆԱ ԽՈՒՐՇՈՒԴԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՈՒՍՈՒ ՏՈՒՄԸ ԱՆԳԼ ԵՐԵՆԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

**ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակչության մեթոդիկա»
(անգլերեն և եզոլ) մասնագիտության մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

Գիտական ղեկավար՝
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
Մ.Գ. Սատվածարյան

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒ ԽՈՒ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏԻԱՅԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ 1.1. Քերականության դերն ու տեղը մասնագիտական դասընթացում	14

1.2. Իրադրայ ին քերականության ծագման և ձևավորման պատմությունը	26
1.3. Քերականական կոմպետենցիան որպես հաղորդակցական և եզրակացական կոմպետենցիայի գլխավոր բաղադրիչ	35

ԳԼՈՒԽ2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԱՆԿՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹՅՈՒՄ

2.1. Անգլերենի և հայերենի քերականական կառույցների գույքարական-տիպաբանական վերլուծություն	44
2.2. Ուսանողների անգլերենի իրադրային քերականության հայտորոշիչ թեստավորում և տիպական սխալների վերլուծություն	61
2.3. Քերականության ուսուցման դժվարությունների սահմանում մասնագիտական դասընթացում	73
2.4. Իրադրային քերականական կարողությունների գնահատում	76

ԳԼՈՒԽ3. ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

3.1. Անգլերենի քերականության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքները	79
3.2. Վարժությունների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանն ու տիրապետմանը	98
3.3. Իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկում	108
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	130
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	133

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1 Քերականության նվազագույնի ընտրության սկզբունքները	145
Հավելված 2 Դասերի պլանավորում	153
Հավելված 3 Վարժությունների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական մեխանիզմների ձևավորմանն ու ամրապնդմանը	160

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Յետագոտության արդիականությունը

Գլոբալացման և ժամանակակից բարձր տեխնոլոգիաների դարաշրջանում փոխվում են կրթության դերն ու նշանակությունը: Բուննիայի գործընթացի արդյունքում տեղի ունեցող կրթական բարեփոխումները տեղ են գտել ՀՀ կրթական համակարգի տարբեր պաշտոնական փաստաթղթերում և ծրագրերում: Կրթության միջազգայնացումը, բարձրագույն կրթության ոլորտում համադրելի կրթական համակարգերի ստեղծումը, որակավորումների համեմակական շրջանակը վերջին տասնամյակների այն մեծ նվաճումներն են, որոնք տանում են դեպի բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածք: Համաշխարհային զարգացման միտումները, լեզվական ու մշակութային բազմազանությունը, ինչպես նաև համապարփակ ինտեգրման գործընթացը՝ որպես ժամանակակից լեզվակրթության հրամայական, հանգեցրել են լեզվակրթության համակարգում հիմնական հայեցակարգային դրույթների փոփոխության անհրաժեշտության:

Մասնագիտական անգլերենի քերականության ուսուցումը հնարավոր է արդյունավետ կազմակերպել՝ հաշվի առնելով նախև առաջ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման միտումները: Հայտնի է, որ օտար լեզվի ուսուցման ցանկացած դասընթաց նախագծելիս վերանայվում են այսպես կոչված դասական քերականության ուսուցման նպատակները, սկզբունքներն ու ուսուցման մեթոդները, քանի որ հաղորդակցական մեթոդիկայում շեշտը դրվում է իրադրային քերականության ուսուցման վրա: Միևնույն ժամանակ, քերականության սիստեմատիկ ուսուցումը մղվում է հետին պլան:

Քերականական կառույցները իրադրություններում օգտագործելը նպաստում է բնավոր հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Այնուամենայնիվ, անգամ նախապես տրված լեզվակառավարները, հուշող թեմաները, ուսանողների վառ երևակայությունը լիովին

չ են ապահովում հաջող հաղորդակցություն: Արդյունավետ կլինի կյանքին մոտ խոսքային իրադրություններ ստեղծել՝ կիրառելով նոր մոտեցումներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Շատ կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ հաղորդակցական մոտեցումը ենթադրում է քերականության ուսուցում գործառական և իրադրային հիմքի վրա: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի պատմությունը վկայում է, թե ինչպես են տարբեր մեթոդական համակարգերում կոնկրետ մոտեցումներ ձևավորվել: Նորմատիվ քերականության ուսուցման մեթոդիկայում կիրառվել են թե՛ ներակա (immanent), թե՛ համեմատական, թե՛ «ուղիղ», թե՛ թարգմանական, թե՛ հաղորդակցական մեթոդները: Մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները բավականին լավ են յուրացնում նորմատիվ քերականությունը, սակայն դժվարությամբ են գործածում քերականական երևույթները տարբեր խոսքային իրադրություններում:

Մասնագիտական մեթոդաբանական գրականության մեջ քննարկվող թեմայի շուրջ կուտակված է որոշակի փորձ. կարևորվում են հատկապես մեթոդական և լեզվաբանական տիպականացմանը (Մ.Գ. Աստվածատրյան (2010), (2015), Ն.Ռ. Գասպարյան (2006), Գ.Լ. Դանիելյան (2007), Ի. Կ. Կարապետյան (2008), Լ. Յ. Տոնոյան (2008), Ա. Լ. Վարդանյան (2008), В.Д. Аракин (2008), И.М. Берман (1994), В.А. Бухбиндер (1986), И.В. Рахманов (1956), (1972), Г. Э. Хельбиг (1976), В.С. Цетлин (1961), (1966), С.Ф. Шатилов (1985) և այլք), ինչպես նաև քերականական նվազագույնին (В.Г. Гак (2002), А.Л. Зеленецкий (2004) և այլք) նվիրված աշխատանքները: Առանձնահատուկ նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են հաղորդակցական քերականության հիմնախնդրին (Լ. Յ. Տոնոյան (2009), И.Л. Бим (1988), В.В. Бузаров (2001), Л.И. Карпова (2006), П.Г. Курбанова (2010), Р.П. Мильруд (2002), В.В. Сафонова (2004), Шатилов (1971), А.В. Щепилова (2005), S. Belasko, D. Wilkins (1972), R.A. Carter and McCarthy (2010), G. Leech, J.A. Svartvik (2002), D.A. Newby (2006), В.Н. Palmer and F.G. Blandford (1969) և այլք):

Իրադրային քերականության ուսուցման գաղափարը ձևավորվել է տարբեր, երբեմն իրար հակասող մեթոդական համակարգերի

շրջանակներում: Դասական համարվող մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս, որ անգամ քերականական-թարգմանական մեթոդի ջատագովները իրենց ներդրումն ունեն իրադրային քերականության ուսուցման մոտեցումները զարգացնելու գործում:

20-րդ դարի երկրորդ կեսերին լեզվաբանության, հոգելեզվաբանության, մասնավորապես գործաբանական, ճանաչողական լեզվաբանության, ինչպես նաև ճանաչողական հոգեբանության, կառուցողական մանկավարժության շրջանակներում ձևավորված հայեցակարգերը նպաստեցին իրադրային քերականության ուսուցման ավելի արդյունավետ կադապարի ստեղծմանը: Այդ առումով կարևորվում են ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հեղինակների աշխատանքները:

Այսպիսով, հաղորդակցական մոտեցման նպատակը չի կարող լինել սոսկ քերականական կանոնների ուսուցում: Այս համատեքստում անհրաժեշտություն է ծագել սկզբունքորեն փոխել քերականության ուսուցման ուղղվածությունը դեպի իրական հաղորդակցական իրադրություններ: Վերջինս առնչվում է նաև հանրամշակութային և գործաբանական կոմպետենցիաների ձևավորվածության աստիճանին: Այն, ինչ ուսուցանվում է, սահմանափակվում է իրադրային շրջանակներով:

Ըստ հաղորդակցական մոտեցման՝ քերականական նվազագույնը և բառապաշարը ընտրվում են ըստ իրենց գործառույթների, որտեղ առաջնային են իրադրային ենթատեքստը և խոսակիցների դերաբաշխումները: Սովորողները պետք է տիրապետեն քերականական մեխանիզմներին, ինչպես նաև գիտենան բառաձևերը, դրանց նշանակությունները և գործառույթները՝ հաշվի առնելով սոցիալական իրադրությունները և գործի դնելով հաղորդակցական-ճանաչողական (communicative-cognitive) տեխնոլոգիաները: Վերոնշյալ աշխատությունները մեծ ներդրում ունեն օտար լեզուների քերականության ուսուցման և ուսումնառության բարելավման գործում, *սակայն դրանցում պատշաճ քննության չեն առնվել իրադրային քերականության հիմնախնդիրները, հատկապես չէին*

կարող արժևորվել ազգային բուհում քերականության ուսուցման առանձնահատկության նկատմամբ ու դժվարության նկատմամբ: Յարկ է նաև նշել ՀՀ-ում տվյալ թեմային նվիրված հետազոտության նկատմամբ սակավությանը:

Հետազոտության հիմնախնդրի լուծումը կարող է նպաստել առկա հակասության նկատմամբ հաղթահարմանը

- մասնագիտական կոմպետենտ կադրերի պատրաստման անհրաժեշտության և գործող ավանդական մոտեցումների,

- ուսանողներին ներկայացվող և եզրվի բազմամակարդակ տիրապետման ծրագրային պահանջների և քերականության ավանդական ուսուցման մեթոդների (ի տարբերության նկատմամբ տեսային, գործառնական, կառուցվածքային-գործառնական և խոսության մոտեցման),

- անգլերենի քերականության ուսուցման հաղորդակցական-ճանաչողական մոտեցման և նորմատիվ-ձևական քերականության ուսուցման միջև:

Այսպիսով՝ **թեմայի արդիականությանը** պայմանավորված է՝

- խնդրո առարկայի վերաբերյալ նշված առկա հակասության նկատմամբ,

- Յայաստանի Յանրապետության բուհերում իրարային քերականության ուսուցման և ուսումնառության հիմնահարցի վերաբերյալ մեթոդական հետազոտության նկատմամբ սակավությանը,

- իրարային քերականության հաղորդակցական-ճանաչողական և միջմշակութային հարացույցի մշակման անհրաժեշտությանը:

Հետազոտության նպատակն է իրարային քերականության ուսուցման մեթոդական համակարգի մշակումն ու զարգացումը՝ հաշվի առնելով ազգային և սարանում օտար և զուգակցության տիպական դժվարության նկատմամբ:

Հետազոտության օբյեկտը բուհերի անգլերենի մասնագիտական դասընթացում քերականության ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան բուհերի մասնագիտական դասընթացում անգլերենի իրարային քերականության ուսուցման և քերականական մեխանիզմների ձևավորման մեթոդական համակարգն է:

Յեռագոտու թյան գիտական վարկածը

Անգլերենի իրադրային քերականության ուսուցումը հնարավոր է արդյունավետ դարձնել, եթե

- իրադրային քերականության ուսուցման և ուսումնառության գործընթացը կառուցվի՝ հիմք ընդունելով հաղորդակցական-լեզվական կոմպետենցիայի ընդհանուր գաղափարը,

- մասնագիտական դասընթացում կիրառվի քերականության ուսուցման նոր մոդել՝ հիմնված համատեղ աշխատանքի և սկզբունքների և հաղորդակցական-ճանաչողական մոտեցումների վրա,

- հաշվի առնվեն հայերենի և անգլերենի իրադրային քերականության լեզվաբանական և մեթոդական տիպականացման առանձնահատկությունները,

- հայտորոշման արդյունքում սովորողների տիպական սխալների վերլուծության միջոցով բացահայտվեն իրադրային քերականության ուսուցման տիպական դժվարությունները,

- մշակված մոդելն ապահովի իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորումը՝ որպես հաղորդակցական լեզվական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչ:

Ըստ նպատակադրման և առաջ քաշած վարկածի առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել մասնագիտական գրականությանը, հատկապես լեզվաբանական, հոգեբանամանկավարժական, լեզվադիդակտիկական, մեթոդական մոտեցումները՝ իրադրային քերականության հասկացության վերաբերյալ անգլերենի մասնագիտական ուսուցման գործընթացում,

2. կատարել անգլերենի և հայերենի իրադրային քերականական երևույթների գույքագրական-տիպաբանական վերլուծություն,

3. հայտորոշման միջոցով բացահայտել սովորողների անգլերենի իրադրային քերականության տիրապետման մակարդակը և ուսուցման ընթացքում հանդիպող տիպական դժվարությունները,

4. ստեղծել վարժությունների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական հմտությունների ձևավորմանը՝ հաշվի առնելով հայալեզու ուսանողների ուսուցման դժվարությունները,

5. մշակել իրադրային քերականության ուսուցման գիտամեթոդական նոր համակարգ, մանկավարժական փորձառության հիմնավորել առաջարկվող վարժության նկերի համակարգի կիրառելիությունը և արդյունավետությունը:

Ջեռագոտության մեթոդաբանական հիմքում ընկած են տարբեր տեսություններ և հայեցակարգեր ներկայացնող աշխատություններ՝ հաղորդակցական-ճանաչողական (Մ.Գ. Աստվածատրյան (2010), И.М. Берман (1994), И.П. Бим (1992), В.А. Бухбиндер (1986), Р. Allen (1986), N. Spada (2007), կոմպետենտային մոտեցման (Արևառդյան Ա.Պ. (2014), А.Г Бермус (2005), И.А. Зимняя (2004), Е.Н. Соловова (2010), П.В. Сысоев (2012), А.В. Хуторской (2008), N.Chomsky (1966), CEFR 2001), կորսուսային և լեզվաբանության (O'Keeffe, McCarthy & Carter (2007), Collins-COBUILD (1990), G. Leech (2000), G. Nelson (1996)), խոսքային ակտերի տեսություն (J. Austin (1986), M. Halliday (1997), D. Hymes (1972), J. Searle (1969), D. Wunderlich (1997), և լեզուների դասավանդման շրջանակներում գործարանական, գործառական, հաղորդակցական-ճանաչողական, միջմշակության մոտեցումների (Р. П. Мильруд (2002), Е.И. Пассов (2007), А.В. Щепилова (2005), В.В. Сафонова (2004), J.C. Béacco (2010), D. Newby (2006), A. Ramos and A. Luque (2010), J. Sheils (1998), W. Westera (2001) և այլք):

Ջեռագոտության մեթոդները

Տեսական՝ և լեզվաբանական, հոգեբանամանկավարժական և և լեզվադիդակտիկական մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,

Էմպիրիկ՝ դիտարկում, ուսանողների անկետավորում, հարցում, հարցազրույց, թեստավորում (հայտորոշիչ և ստուգիչ), փորձարարական ուսուցում,

վիճակագրական՝ թեստավորման և փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Ջեռագոտության գիտական նորույթը

Ազգային բուհական կրթության մասնագիտական դասընթացում

- ստեղծվել է անգլերենի իրադրային քերականության ուսուցման գիտամեթոդական համակարգ՝ ուղղված իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը,

- իրականացվել է անգլերենի և հայերենի իրադրային քերականական կառույցների գուգարական-տիպականական վերլուծությունը,

- ճշգրտվել է ուսուցման բովանդակությունը՝ իրադրային քերականական նյութի մոդելավորման հիման վրա,

- բացահայտվել են ազգային և սարանում անգլերենի իրադրային քերականության ուսուցման տիպական դժվարությունները,

- ներդրվել են քերականական նյութին ծանոթացման/բացատրության, վարժանքի միջոցով ամրապնդման, քերականական մեխանիզմների ձևավորման և ստուգման տեխնոլոգիաներ,

- ստեղծվել և փորձարարական ուսուցմամբ հիմնավորվել է ինտերակտիվ վարժությունների համակարգ՝ ուղղված անգլերենի իրադրային քերականության յուրացմանը և քերականական մեխանիզմների ձևավորմանը:

Յետազոտության տեսական նշանակությունը

Օտար և եզրուների դասավանդման մեթոդիկայի տեսությունն ու պրակտիկան հարստացել են իրադրային քերականության ուսումնասիրության վերոնշյալ ձեռքբերումներով՝ հաշվի առնելով բուհական կրթության մասնագիտական դասընթացում անգլերենի իրադրային քերականության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները:

- հստակեցվել են «քերականություն» հասկացության ծավալն ու իմաստային ոլորտը, նպատակներն ու գործառնությունները,

- բացահայտվել են քերականորեն գրագետ և ազատ հաղորդակցվելու խոչընդոտող դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները,

- անգլերենի իրադրային քերականության ուսուցման մշակված տեսական դրոյթները կարող են հիմք ծառայել այլ օտար և եզրուների դասավանդելիս:

Յետազոտության գործնական նշանակությունը

Յետազոտության արդյունքները կարող են

- կիրառվել անգլերենի գործնական պարապմունքների անցկացման ժամանակ, ինչպես նաև բուհերում օտար և եզրուների

մեթոդիկայի տեսական դասընթացների և սեմինար պարապմունքների ընթացքում,

- ընդգրկվել նոր ուսումնական ծրագրերում, դասագրքերում, մեթոդական ձեռնարկներում,

- օգտագործվել դասախոսների և ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիայի բարելավմանն ու բարձրացմանն ուղղված վերապատրաստումների ընթացքում,

- համահեղինակությամբ ներկայացված ձեռնարկը կարող է ծառայել որպես անգլերենի իրադրային քերականության ուսուցման լրացուցիչ ռեսուրս:

Յետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է հոգեբանամանկավարժական, մեթոդական հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հիմնախնդրի վերաբերյալ տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությամբ, գիտահետազոտական մեթոդների կիրառմամբ, քերականության ուսուցման փորձաքննությամբ, մշակված և ներդրված մեթոդական համակարգի արդյունավետությամբ:

Յետազոտության հիմնական փուլերը

Յետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

Առաջին փուլում (2011-2012) իրականացվել է գիտական գրականության ուսումնասիրություն, քննության են առնվել քերականության ուսուցմանը վերաբերող լեզվաբանական, հոգեբանամանկավարժական և մեթոդական աշխատությունները: Կատարվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, լեզվաբանական, գուգադրական-տիպաբանական վերլուծություն, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածն ու պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները: Յստակեցվել են հայտորոշման և փորձարարական ուսուցման փուլերը, փորձարարական և ստուգողական խմբերում ներգրավված ուսանողների քանակը:

Երկրորդ փուլում (2012-2013) մշակվել են հայտորոշիչ թեստավորման ընթացակարգը, միջլեզվական քերականական սխալների կանխման և հաղթահարման ռազմավարությունը,

անցկացվել է նախաթեստավորում, ստեղծվել է վարժությունների համակարգ՝ ուղղված քերականական մեխանիզմների և իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանը:

Երրորդ փուլում (2013-2015) ստեղծվել է անգլերենի իրադրային քերականության ուսուցման վարժությունների նոր համակարգ, նախապատրաստվել և իրականացվել է փորձարարական ուսուցում, ստացված տվյալները վերլուծվել, համակարգվել և ընդհանրացվել են:

Պաշտպանության ներկայացվող դրույթները

1. Քերականությունը բարդ, բազմիմաստ, բազմագործառույթային երևույթ է, որը դիտարկվում է՝

ա) լեզվաբանության տեսանկյունից՝ տեսական/գործնական, պատմական, տիպաբանական, նորմատիվ, գործառական, ճանաչողական (cognitive): Վերջինս հակադրվում է խոսքային, հաղորդակցական, իրադրային քերականությանը, որը «սպասարկում է» հաղորդակցությանը՝ լայն իմաստով,

բ) մեթոդական առումով՝ ակտիվ/պասիվ (քերականական նյութի յուրացման), պրոդուկտիվ/ռեցեսսիվ (գործողությունների տիրապետման), ավանդական/նորմատիվ, գործառական/իրադրային տեսանկյուններից:

2. Անգլերենի և հայերենի իրադրային քերականության գուգարական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ենթադրություններ անել դրական և բացասական (transfer, interference) ներթափանցման դաշտը սահմանելու առումով, ինչի հիման վրա կատարվում է համապատասխան քերականական երևույթների մեթոդական տիպականացումը՝ հստակեցնելով ուսուցման դժվարությունների տարբերաստիճանները:

3. Քերականության ուսուցման գործընթացը կառուցվում է համակարգված-կոնցենտրիկ եղանակով, որն արդյունավետ է բուն նյութի յուրացման, քերականական մեխանիզմների, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացման առումով (B. H. Богородицкая (1974)):

4. Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացմանն ուղղված քերականական մեխանիզմների և իրադրային քերականական

կոմպետենցիայի ձևավորումն ապահովվում է վարժողությանն ներհամակարգի և համապատասխան ռազմավարության միջոցով:

Յետազոտության արդյունքների հավաստիությանն ու հիմնավորվածությանն ապահովված է հոգեբանամանկավարժական, մեթոդական հայեցակարգերի համալիր վերլուծությանը, հիմնախնդրի վերաբերյալ տեսական և մեթոդաբանական ուսումնասիրությանը, իրադրային քերականության ուսուցման փորձաքննությանը, մշակված և ներդրված մեթոդական համակարգի արդյունավետությանը, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և հետազոտության արդյունքում առացված տվյալների հուսալիությանը:

Յետազոտության փորձաքննությանը և ներդրումը

Աշխատանքը փորձաքննությանն անցել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտարլեզուների ֆակուլտետում: Յետազոտության արդյունքները քննարկվել են ՀՊՄՅ-ի օտարլեզուների դասավանդման մեթոդիկայի և գերմանական լեզուների ամբիոնների միացյալ նիստում և ներդրվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտարլեզուների ֆակուլտետում: Ատենախոսության նյութերը ներկայացվել են բուհական, միջբուհական հանրապետական և միջազգային գիտաժողովներում, որոնք նվիրված էին ժամանակակից լեզվաբանության և լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնահարցերին:

1. 2011թ. հոկտեմբերի 5-6, Երևան, ԵՊՀ, Երրորդ միջազգային գիտաժողով՝ Լեզուն մշակութային և միջմշակութային հարթությանն ենթարկում,
2. 2013թ. հոկտեմբերի 17-18, Երևան, ԵՊՀ, հանրապետական գիտաժողով՝ Թարգմանությանը որպես գիտական ուսումնասիրության առարկա և միջմշակութային փոխներթափանցման միջոց,
3. 2014թ. փետրվարի 20-21, Երևան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, 4-րդ միջազգային

գիտաժողով՝ 21-րդ դարի մարտահրավերները բանասիրության
և օտարլեզուների դասավանդման բնագավառներում,

4. 2014թ. հունիսի 30 և հունիսի 1-2, Մեծ Բրիտանիա, Քենթ,
Քենթրբերի համալսարան, միջազգային գիտաժողով՝
ճանաչել ուսանողի ինքնուրույնությունը,
ստեղծագործական և քննադատական մոտեցումները և լեզվի
ուսուցման գործընթացում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են
տպագրված հրապարակումներում (տե՛ս ատենախոսության սեղմագրի
վերջում ներկայացված հրապարակումների անվանացանկը):

Չեռագոտության արդյունքները օգտագործվել են Խ. Աբովյանի
անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար
լեզուների ֆակուլտետի «Գործնական քերականություն»,
«Անգլերենի գրավոր և բանավոր խոսք», ինչպես նաև «Պաշտոնական
անգլերեն» առարկաների դասավանդման ժամանակ:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը.

Ատենախոսությունը բաղկացած է 143 համակարգչային էջից
(առանց հավելվածների): Այն ներառում է ներածություն, երեք
գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ,
հավելվածներ, 9 աղյուսակ, 9 գծապատկեր, 13 տրամագիր:

ԳԼՈՒԽԸ.

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐՇ
ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՈՒՄ**

Այս գլխում քննարկվում են հետևյալ հարցերը.

- քերականության դերն ու տեղը մասնագիտական դասընթացում,
- իրադրային քերականության ծագման և ձևավորման պատմությունը,
- քերականական կոմպետենցիան որպես հաղորդակցական և եզրակացական կոմպետենցիայի գլխավոր բաղադրիչ:

1.2. Քերականության դերն ու տեղը մասնագիտական դասընթացում

Քերականությունն ուսումնասիրվել է շատ վաղուց, և և՛ եզրուսովորելը՝ բառերի միավորումը, բառակապակցությունների և նախադասությունների կազմումը, կապակցված և իմաստավորված խոսքի ստեղծումը մինչև օրս բացառապես պայմանավորված է քերականության ուսումնասիրության և ուսուցման անհրաժեշտությամբ:

Լեզվի քերականությունը դիսամիկ, մշտապես փոփոխվող կառույցների շարք է, որի իմացության շնորհիվ իրականացվում է մարդկային հաղորդակցությունը:

«Քերականություն» եզրույթն ընդգրկում է տարբեր հասկացություններ և իմաստներ՝

- որպես գիտություն քերականական համակարգերի մասին,
- որպես և՛ եզրվաբանության հատուկ ենթաբաժին, որտեղ գործում է նախադասություններում բառերի գործածությունը կարգավորող կանոնների համակարգ,
- որպես տեսական առարկա (տեսական քերականություն),

- որպես խոսքային գործունեության կարևորագույն բաղադրիչ,

որտեղ կարևորվում է քերականական մեխանիզմների ձևավորման հիմքում ընկած գործողությունների ամբողջությունը:

Քերականության այս ձևակերպմանն են ուղղված նաև գերմանացի գիտնական Գ. Յելբիգի լեզու դասավանդողների գործնական պահանջները քերականության նկատմամբ: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզվաբանության զարգացումը շոշափելի ազդեցություն ունեցավ քերականության ուսուցման սկզբունքների դասակարգման վրա, Յելբիգն առաջիններից էր, ով ուշադրություն դարձրեց լեզվաբանության և քերականության ուսուցման օրգանական կապին: Նա հստակորեն առանձնացրեց քերականության երեք տեսակ՝ “A”, “B”, “C”: Ըստ այդ մոտեցման՝ քերականության առաջին տեսակը (A) ամբողջացնում է քերականության կանոնների համակարգը (նորմատիվ քերականություն), քերականության երկրորդ տեսակը (B) ներկայացնում է նշված համակարգը գիտական մակարդակով (տեսական քերականություն), իսկ քերականության երրորդ տեսակը (C), ըստ նրա բնորոշման, առնչվում է **բոլոր խոսքային գործունեությունը** (\$ուսկցիոնալ քերականություն), (G. Helbig, 1975:325-326, Մ.Գ. Աստվածատրյան 1985:114): Յելբիգի հայեցակարգի կարևոր կողմերից մեկն այն է, որ C տիպի քերականության շնորհիվ հնարավոր է դառնում մի կողմից ճիշտ արտահայտություններ ստեղծելու կարողությունն սահմանված քանակի կանոնների միջոցով (պրոդուկտիվ քերականություն), մյուս կողմից քերականական երևույթների ճանաչում տեքստում (ռեցեպտիվ քերականություն):

Մեթոդիկայի պատմության մեջ քերականության դերի և տեղի հարցի մասին պարբեր մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է տարբեր գործոններով՝ հիմնականում քերականական-թարգմանական և ուղիղ մեթոդների հակադրությամբ: Իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից կարևոր է այն, որ ուղիղ մեթոդի կողմնակիցները, ի տարբերություն

քերականական-թարգմանական մեթոդի, բացառում են մայրենի լեզվի գործածումն ուսուցման գործընթացում: Այսպես՝ բնական մեթոդի ներկայացուցիչ Ֆ. Գուենը առաջնային է համարում բառապաշարի և բանավոր խոսքի ուսուցումը:

Չնայած քերականության ուսուցման տեսությունը դեռևս չէր ձևավորվել, սակայն ուղիղ մեթոդով կողմնակիցների կողմից քերականության ուսուցման ինդուկտիվ եղանակը մեծ դեր ունեցավ հատկապես բանավոր խոսքի զարգացման պարագայում: Այդ առումով օտար լեզուների մեթոդիկայի պատմաբանները նշում են Օ. Եսպերսենի դերը, որի հայտնագործող քերականությունը յուրովի նպաստեց իրադրային քերականության ուսուցման տեսության ձևավորմանը: Ըստ այդ տեսության՝ սովորողները պետք է տեսնեն կարդալով բացահայտեն քերականական կանոններ:

Իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից կարևոր է, ինչպես նշում է Ռախմանովը, Վ. Ֆիետորի և Գ. Սվիթի տեսությունը, ըստ որի ուսումնասիրության առարկա էր դարձել խոսակցական լեզվին համապատասխանող քերականությունը (Մ.В. Рахманов 1972:47-48):

Ժամանակի ընթացքում Լ.Շչերբայի և Ի.Ռախմանովի առաջ քաշված քերականության գործնական տիրապետման պահանջն իրարտահայտությունը գտավ քերականական նվազագույնի սահմանման և նյութի ավելի խիստ ընտրության մեջ: Դասավանդողը պետք է հստակորեն գիտակցի, թե ինչ նպատակով է ուսուցանվում քերականական նյութը՝ մտքերն արտահայտելու (պրոդուկտիվ քերականություն), թե՞ տեղեկատվությունն ընկալելու, ճանաչելու ու հասկանալու (ռեցեպտիվ քերականություն):

Իրադրային քերականության ուսուցման մեթոդիկայի մշակման հարցում կարևոր է հաշվի առնել նաև գործառնական լեզվաբանության զարգացման միտումները: Ըստ այդմ, լեզվի գործառնականների բացահայտումը նպաստում է քերականության բազմիմաստության հիմնախնդրի առաջադրմանը:

Կարևոր է հստակեցնել, թե Գերհարդ Յելբիգն ինչպես է մոտենում քերականության ինդուկտիվ և դեդուկտիվ, իմպլիցիտ և էքսպլիցիտ ուսուցմանը: Նա կողմ է քերականության դեդուկտիվ

ուսուցմանը, քանի որ կարևորում է քերականական կանոնների ուսուցման դերը: Դրա հետ մեկտեղ, նա քերականական կանոնների ուսուցման հիմնախնդիրը քննում է լեզվական, լեզվաբանական, մեթոդական տեսանկյուններից (Գ. Хельбиг 1976:28-34), ինչը հնարավորություն է ընձեռում Յելբիգին հստակորեն տարազատել քերականությունը որպես քերականական կառուցվածքներ ուսումնասիրող լեզվաբանության բաժին մեթոդական քերականությունից՝ թե՛ ռեցեպտիվ, թե՛ պրոդուկտիվ: Դիտարկելով լեզվաբանության քերականությունը որպես հաղորդակցման միջոց, հեղինակը շեշտը դնում է քերականության իրադրային ուսուցման վրա:

Օտար լեզուների ուսուցումը և ուսումնառությունը մասնագիտական դասընթացում հիմնվում է հաղորդակցական սկզբունքի վրա: Օտար լեզվի իմացությունը և այդ լեզվով հաղորդակցումն ապահովելու համար առաջին պլան են մղվում օտար լեզվով մտքեր արտահայտելու, միմյանց հետ շփվելու կարողությունների և հմտությունների, խոսքային գործունեության բանավոր և գրավոր կարողությունների զարգացնելու խնդիրները (Рахманов И.В. (1974), Бим И.Л. (2008):8):

Հարկ է նշել, որ առանձնահատուկ նշանակություն ունեն այն հետազոտությունները, որոնք վերաբերում են հաղորդակցական քերականության հիմնախնդրին. ՀՀ-ում՝ Ռ.Ս. Պետրոսյան (2006), Լ. Հ. Տոնոյան (2009), ՌԴ-ում՝ В. С Цетлин (1998), Р. П. Мильруд(1986), Е.И.Пассов (1991), П.Г. Курбанова (2010), Е. Вл. Лобкова (2009), Г. М. Чернова (2000) և այլք, արտասահմանում՝ R. A. Carter և M. J. McCarthy (2010), G. Leech and J. A. Svartvik (2002), D.A. Newby (2003), I. Timmis (2005) և այլք:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում քերականության ուսուցման տարբեր ասպեկտներին նվիրված աշխատանքները (Е. И. Перехода (2010), М. Celce-Murcia (1988), N., Chomsky (1966), R. Ellis (2006), М. А. Halliday (1997), J. Harmer (1997), O. Jespersen (1924), D. Larsen-Freeman (1986), G. Lock (1997), D. Newby (2003), W. E. Rutherford (1996), S. Thornbury (1999), E. Werlich (1982): Դրանցից առանձնանում են բուն իրադրային, խոսակցական քերականությունը վերաբերող հետազոտությունները (В. Апельт (1967), А.В. Грейсер (1964), Р. П. Мильруд (1986), Л. И. Карпова (2006), Е.

В. Лобкова (2009), П.Г. Курбанова (2010), В. В. Бузаров (2001), ` R. A. Carter և M. J. McCarthy (2010), H. Palmer (1961), И.Л. Бим (2008), D. Wilkins (1972):

Բանավոր խոսքի ուսուցման քերականական հայեցակերպն են ներկայացրել Ս.Ֆ. Լ. Բլումֆիլդը (L. Bloomfield (1927), Շատիլովը (С.Ф. Шатиллов (1971): Կարևորվում են քերականական նյութի ոճաբանական, գործառական, ռեգիստր վերլուծությանը նվիրված աշխատանքները (Т. Bloor (2004), S. Eggins (1997), J. Marco (2001): Առանձնանում են նաև քերականության ուսուցման սկզբունքների, մեթոդների հնարների դասակարգմանը, ընտրությանը և կիրառմանը նվիրված աշխատանքները (Т.А. М. Шахнарович (1990), Б.И. Швед (1989), ինչպես քերականության ուսուցման մանկավարժական հայեցակերպը ներկայացող (D.Coyle (2008), J. Crandall (2000), C. Doughty և J. Williams (2001), D. Larsen-Freeman (1991), J.C. Richards և T.S. Rodgers (2003), T. Hutchinson, A. Waters (1987) աշխատանքները:

Ուսումնասիրությանը ներդրող գույց են տալիս, որ քերականության ուսուցման և ուսումնառության գործընթացում բացակայում են տարբերակված (տարանջատող) մոտեցումները, գործնականում հաշվի չեն առնվում քերականական երևույթների տիպականացման և քերականական կոմպետենցիայի ձևավորման սկզբունքները:

Կրթական ոլորտում փոփոխությանը իրականացնելիս օտար լեզուների ուսուցման բարեփոխումների իրականացման գործում անհրաժեշտ է նկատի առնել լեզվակրթության քաղաքականության ժամանակակից միտումները: Մեր օրերում այդ հարցը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակներով: Այս տեսանկյունից լեզվակրթության նպատակները հիմնովին փոխվել են: Ինչպես նշվում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության փաստաթղթում «Այն այլևս մեկ կամ երկու կամ նույնիսկ երեք լեզուների տիրապետելը չէ, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվում է առանձին՝ որպես իդեալ ու նենալով «լեզուն կրողի կատարյալ մակարդակը»: Այս դեպքում նպատակն այնպիսի լեզվական «խաղացանկի» մշակումն է, որտեղ բոլոր լեզվական կարողություններն իրենց ուրույն տեղն ունենան» (ԼԻՅՅ 2005: 5):

Այսպիսով, բազմալեզվություն (plurilingualism) մոտեցումն ուղղված է անհատի լեզվական փորձի ընդլայնմանը, որտեղ ներդրվում են նրա՝ լեզուների իմացությունն ու լեզվական ամբողջ փորձը՝ արդյունավետ հաղորդակցվելու համար:

Եվրախորհրդի ժամանակակից լեզուների զարգացման ծրագրերի շրջանակներում ներկայացված նպատակներն ուղղված են բազմալեզվության զարգացմանը, որտեղ սովորողների լեզվական կոմպետենցիաների (linguistic competence) հետմեկտեղ շեշտը դրվում է նաև հանրալեզվաբանական (sociolinguistic) և գործաբանական (pragmatic) կոմպետենցիաների զարգացման վրա:

Ինչպես հայտնի է, բնավոր հաղորդակցությունը ինտերակտիվ, կենդանի գործընթաց է: Այն էապես տարբերվում է գրավոր խոսքից: Տիպական օրինակ է նախադասության շարադասությունը բնավոր խոսքում: Այն բավականին ճկուն է բառակարգի տեսանկյունից: Չրոնգակիցները իրենք են ընտրում այս կամ այն բառի, դարձվածքի տեղը խոսքի մեջ՝ անտեսելով անգլերենի շարադասությանը բնորոշ որոշակի սկզբունքներ և օրենքներ:

Օրինակ, տեղի պարագան կարող է դրվել անջատական հարցից հետո, ինչպես՝ *Dialects are more widely used aren't they in the regions?* նախադասության մեջ, *Dialects are more widely used in the regions, aren't they?*-ի փոխարեն: (Բարբառով ավելի շատ են չէ՞ խոսում շրջաններում), կամ օր.՝ “You saw her, the author of the book, didn't you, in the club? (Դու տեսար չէ՞ նրան՝ գրքի հեղինակին, ակումբում): Կամ “Off (on) we go!”(Գնացի՛նք):

Չետաբրքիր է ցույց տալ, թե ինչ է տեղի ունենում բառապաշարի կիրառման դեպքում ո՛չ նորմատիվ, ո՛չ պաշտոնական գրույցի ընթացքում: Որքան էլ խոսքը լավ կառուցված լինի, գրույցակիցները խուսափում են տերմիններ և գրական դարձվածներ օգտագործելուց: Ավելի, ոչ պաշտոնական, առօրյա գրույցներում կարելի է ի հայտ բերել բազմաթիվ «շեղումներ» նորմատիվ լեզվական կանոններից: Դրանք կարող են լինել լեզվի սայթաքումներ, համաժամանակյա խոսքի օրինակներ, համընկումներ, երբեմն նաև միտումնավոր աղավաղումներ, երկմտանք, անորոշությունն արտահայտող բառեր և այլն: Խոսակցական լեզուն ոչ միայն դեմ չէ այդպիսի շեղումներին, հակառակը, առօրյա գրույցի մեջ հաճախ չի

ընդունվում կատարել ությունը կամ լեզվական անթերի խոսքը: Շատ բառեր խոսակցական լեզվում ստացել են բոլորովին տարբեր իմաստներ:

Օրինակ՝ pretty-ն կարող է նշանակել բավականին, thing-ը՝ աղջիկ. Wow, Boy և Man բառերը կարող են հանդես գալ որպես ձայնարկ ություններ: Ընդ որում՝ նշված բառերի կիրառումը կարող է հանգեցնել շրջուն նախադասության:

Օրինակ՝ I'm absolutely exhausted. Man, do I need to get some sleep! (Սարսափելի հոգնած եմ: Ո՞րք եմ ուզում քնել:)

Boy, is it hot today! (Աստված իմ, ինչ շոգ է այսօր:)

I love Adele. Wow, can that girl sing! (Սիրում եմ Ադելին: Ոնց է այդ աղջիկը երգում:)

Իրադրային գեղջումները և նախադասության գեղջված անդամները բանավոր հաղորդակցության անբաժանելի մաս են կազմում և զրույցի ժամանակ ամբողջական նախադասությունների հետ մեկտեղ նույնքան արժեքավոր են առանձին բառերը, բառակապակցությունները և երկրորդական նախադասությունները, որոնք կարող են գտնվել գլխավոր նախադասությունից շատ հեռու:

Օրինակ՝

Finished? (Վերջացրե՞լ ես:) Coming? (Գալի՞ս ես:)

Իրադրային քերականության ուսուցման համատեքստում առանձնանում են առօրյա զրույցները, որտեղ զրուցակիցները կիրառում են տարբեր ռազմավարություններ: Նրանց խոսքին բնորոշ է տնտեսումը, զգուշավորությունը:

Նրանք խուսափում են անհարկի հեղինակավոր, հաստատակամ, ճշգրիտ կամ անքաղաքավարի հնչող արտահայտչամիջոցներից: Այդ երևույթը, նույնպես, բանավոր խոսքի առանձնակատկություններից մեկն է՝ գործնական, խոսակցական լեզվի անբաժանելի մասը: Բանավոր խոսքում հաճախ կրկնվող thing, stuff, or so, like, or something, or anything, and so on, or whatever, kind of, sort of, more or less (այսինչ բանը, մոտավորապես, նման, ոնց-որ, ինչ-որ, ինչ էլ որ, մի տեսակ, քիչ, թե շատ) բառերն ու բառակապակցությունները դրավառ օրինակներն են:

Ածականակերտ վերջածանց *-ish-ը* խոսակցական անգլերենում թվերի հետ միանալիս նշանակում է մոտավորապես, իսկ թիվ

գու մարած odd բառը՝ ավելի քան: Օրինակ՝ So, er, were meeting seven-ish or maybe a bit later. (Կհանդիպենք 7-ի կողմերը, կամ մի փոքր ուշ:) Կամ՝ We were charged 30-odd dollars. (Մեզանից գանձեցին երեսուկնից ավելի դոլար): Յետաքրքրական է wise բառի կիրառությունը գոյականի հետ, որը նշանակում է՝ դրահետկապված, այդ տեսանկյունից: Օրինակ՝

Moneywise my new job is better.

(Փողի տեսանկյունից նոր աշխատանքս ավելի լավն է):

Նման վերջածանցների ստեղծումն ու նորանոր կիրառությունները բնորոշ են ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքին, ինչպես՝ -led (English-led անգլիացիների կողմից վերահսկվող), -free (stress-free սթրեսից զուրկ), -conscious (health-conscious առողջությամբ շատմտահոգվող) և այլն:

Չրուցակիցները պարբերաբար ստուգում են իրենց լսածն ու հասկացածը՝ օգտագործելով իրադրային քերականական զանազան կաղապարներ, որոնք ընդգրկված չեն նորմատիվ քերականության շրջանակներում: Երբեմն անհրաժեշտություն է առաջանում ստեղծել համապատասխան եզրույթներ, որոնք կամ չեն եղել կամ հանդես են եկել այլ անվանումներով: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում headers կամ ձախտեղակայում և tails կամ աջ տեղակայում կոչվող գոյականական բայառակապակցությունները, որոնց դերը գրուցակցին ճիշտ կողմնորոշելն է տվյալ իրավիճակում (R. A. Carter և M. J. McCarthy (2010):

Օրինակ՝

Ann, our laboratory assistant, her daughter got married last week.

(Աննան է՝ մեր լաբորանտը, նրա դուստրն էր ամուսնացել անցյալ շաբաթ:)

Ինչպես header-ները, այնպես էլ tail-երը հազվադեպ են հանդիպում գրավոր խոսքում:

Օրինակ՝

They're incredibly nice, our neighbours.

(Նրանք հրաշալի մարդիկ են, մեր հարևանները:)

Այն փաստը, որ բանավոր խոսքն էապես ազդել և շարունակում է մեծ ազդեցություն ունենալ հանրային խոսքի՝ հատկապես երիտասարդական ամսագրերի, գովազդային բնույթի

հայ տարարությունների, սոցիալական կայքերում օգտագործվող լեզվի, էլեկտրոնային, կամ այլ հաղորդագրությունների վրա, չի կարելի հերքել: Ահա այստեղ է, որ բանավոր և գրավոր ձևերի սահմանագիծը որոշ դեպքերում սկսում է վերանայ: Կորպուսային լեզվաբանության և իրադրային քերականության նկատմամբ աճող հետաքրքրությունը հանգեցնում է ավանդական քերականության ուսուցման մի շարք սկզբունքների վերանայման: Կորպուսային լեզվաբանությունը, որի շրջանակներում ուսումնասիրությունները հիմնված են համակարգչային լայնածավալ ժողովածուում տեղ գտած, իրականությունից վերցված, տարբեր միջավայրերում շրջանառվող կենդանի խոսքի վրա, հնարավորություն է տալիս նորովի իրականացնել անգլերենի ուսուցումը՝ կիրառելով հաղորդակցական մեթոդիկայի սկզբունքները:

Ելնելով օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման միտումներից, լեզվաբանների ուսումնասիրության առարկա են դառնում գրավոր խոսքում տեղ չգտած, ամենօրյա խոսակցական լեզվում հաճախ օգտագործվող ինքնաբերական կառույցները և իրադրային քերականական կառուցվածքային-գործառական կաղապարները: Տեքստային և միջանձնային հաղորդակցության մեջ ընդունելով խոսակցական քերականության դերը՝ մենք չենք կարող չուսումնասիրել, իսկ որ ամենակարևորն է՝ իրական կյանքում չօգտագործել լեզվակրի կողմից օգտագործվող կառույցները: Հաշվի առնելով գործառնական կոմպետենցիայի բովանդակային առանձնահատկությունները, կարող ենք պնդել, որ վերջիններս հաշվի առնելով, հնարավոր է բարձրացնել իրադրային քերականության ուսուցման արդյունավետությունը:

Իրական կամ բնական լեզվական միջավայրին չ-որ չափով կարող է ապահովել լեզվաբանական կորպուսը՝ համակարգչային ծրագրերում պահպանվող, լեզվաբանական հետազոտությունների համար նախատեսված, տարբեր իրադրություններից մեջ բերված տեքստերի ժողովածու: Տարաբնույթ ենթատեքստերից՝ թերթերից, հայ տարարություններից, բանավեճերից և քննարկումներից,

պաշտոնական և ոչ պաշտոնական կենդանի խոսքից, սրճարաններում կամ հասարակական այլ վայրերում մարդկանց երկխոսություններից, ընտանեկան մտերմիկ զրույցներից ընտրված տեքստերի վերլուծությունը հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվել այս կամ այն բառի, երևույթի գործաբանական և քերականական ընկալման հարցում:

Կորպուսային վերլուծությունը ցույց է տալիս, որ բացի նախադասություններից, որը հաղորդակցության հիմնական միավորն է, մեծանում է նաև բառի, դարձվածքի՝ որպես անկախ միավորի դերը խոսքի մեջ: Ցանկացած զրույց հիմնականում բաղկացած է բառակապակցություններից, անավարտ երկրորդական նախադասություններից, որոնք գլխավորից շատ հեռու են: Որքան էլ էլեգվաբաններն անտեսեն այդ հանգամանքը, միևնույն է հաղորդակցության բեռը հավասարապես ընկնում է նաև այդ բառերի վրա, և քերականորեն ճիշտ կառուցված նախադասությունները և այդ բառերն ու արտահայտությունները հանդես են գալիս նույն հարթության վրա: Օրինակ՝ խոսում են ընկերները.

Speaker 1: Hi... are you in the middle of something?

Speaker 2: Sort, of...

Speaker 1: Well, come back later?

Speaker 2: No, no it's all right...what can I do for you?

Speaker 1: Mm. I'm having a lot of trouble with my computer.

Speaker 2: And you've tried restarting it...

Speaker 1: Yeah. I've done that ...same thing...

Կորպուսային էլեգվաբանության միջոցով էլեգվի ուսուցումը հեռանկարային է, քանի որ այն հետազոտում է բնագրերում հանդիպող, իրական խոսքային իրադրություններում գործածվող էլեգվակադապարները: Կորպուսային էլեգվաբանության մեջ բառը կամ բառակապակցությունը հանդես է գալիս իր ենթատեքստով: Կորպուսային ծրագրերի օգնությամբ միևնույն բառի տարբեր գործածությունները տարբեր իրադրություններում ենթատեքստերի գործածության ոլորտը (կոնկորդանս) գտնելն ու համեմատելը ապահովում է տվյալ երևույթի ճիշտ գործածություն և հետևաբար, վստահ մատուցում ուսանողներին:

Մինչ դեռ քերականության դասագրքերում ընտրված օրինակների մեծ մասը կրում է ձևական բնույթ: Ենթատեքստից դուրս բերված օրինակները շատ դեպքերում կորցնում են իրենց բնագրային իմաստը և չեն կարող ուսուցիչների համար լավ օրինակ ծառայել որոշակի քերականական երևույթներ բացատրելիս: Իսկ եթե օրինակներն ընտրված են ժամանակակից բնագրերից, թերթերից, ֆիլմերից, համացանցից և կորպուսային հետազոտություններում համապատասխանորեն դասակարգված նյութերից, ապա քերականական երևույթի բացատրությունը և ուսումնասիրությունը շատ ավելի դյուրընկալելի և տպավորիչ է դառնում, ինչը և Մկ' քարտին նշում է իր դասագրքում R. A. Carter և M. J. McCarthy (2010):

Ստեղծագործական ազատությունը իրադրային քերականության ուսուցման գործընթացում միշտ էլ հնարավոր է, և ինչպես գիտնականներն են նշում՝ պետք է առաջնորդվել “always this and never that” (միշտ այսպես և ոչ երբեք այնպես) սկզբունքով (M. Halliday 1961: 259): Յետևելով վերջինիս՝ մենք խստորեն սահմանափակում և խոչընդոտում ենք լեզու սովորողների առաջընթացը: Ընդունելով ոչ ստանդարտ միավորներ իրադրային քերականության մեջ, պետք է ընդունենք նաև, որ վերջինս չի հակասում շատ անընդունելի քերականական երևույթների:

Օրինակ, բանավոր խոսքում գրուցակիցները զգալիորեն ազատ են բայի ժամանածների և կերպի ընտրության մեջ: Ասածն ավելի ընդգծելու համար ներկայացնենք հետևյալ օրինակները: Օրինակ՝ հեռախոսային խոսակցություն տուրիստական գործակալի հետ:

Customer: Oh, hello, my husband and *I are wanting* to go to the Hook of Holland next weekend. We were hoping you might help us.

Բայի սեռը նույնպես տարբեր ձևերով է արտահայտվում իրադրային քերականության ուսուցման գործընթացում: Get passive-ը և have passive-ը՝ դինամիկ կրավորականները գրեթե ամբողջովին փոխարինում են Be passive-ին՝ ստատիկ կրավորականին: Ի դեպ get-passive-ով օրինակների մեջ բացակայում է գործողություն կատարողը և խոսքը վերաբերում է պատահական, անսպասելի գործողությունների կամ դժվար գործընթացի մասին:

He got killed, in contrast to *He was killed*(by somebody).

Բանավոր խոսքում հաճախ հանդիպող օրինակներից են նաև սորոհված անորոշ դերբայը, ինչպես՝ We decided to immediately sell it, կրկնակի ժխտումը՝ They won't be late I don't think, կամ եզակի չափման միավորը հոգնակի թվի հետ՝ The girl was five foot tall և այլն:

Իրադրային կառույցներում շատ տարածված է կոնվերսիան՝ փոխակարգությունը, որի ժամանակ մի խոսքի մասը փոխվում է մեկ այլ խոսքի մասի: Պետք է նկատել, որ այս երևույթը դարձել է ավելի ընդգրկուն և ոչ միայն բայն է դառնում գոյական, կամ հակառակը (to minute, to text, to email, a download), այլ նաև նախդիրը կամ ածականը՝ բայ (to up, to wrong), կապը, մոդալ բայը, նախդիրը և ածականը՝ գոյական (a big if, a must see, ups and downs, a must; to come to a close please?) և այլն:

Ավելի ին՝ դարձվածքները հաճախ դառնում են բաղադրյալ ածականներ, ինչպես օրինակ՝ a good-for-nothing brother of his (նրա անախտան եղբայրը), two for-the-price-of-one (երկուսը մեկի գնով ապրանք), a fly-on-the-wall documentary (աննկատ նկարահանված փաստագրական ֆիլմ), state-of-the-art construction (ժամանակակից շինություն) և այլն:

Շատ ընդունված է գոյականների հաջորդական կիրառումը նոր հասկացույթներ արտահայտելու համար: Սեռական հոլովով դրված կամ of-ով արտահայտված գոյականները իրենց տեղը զիջում են Գոյական+Գոյական (N+N)կառուցվածքին, որոնք դառնում է ինֆորմացիա հաղորդող ամփոփկառույցներ, օրինակ՝

Distance learning, floor board, ocean floor, dinosaur bones, group sessions, bank insurance system, etc.

Հայերեն թարգմանելիս անհրաժեշտություն է առաջանում առաջին գոյականը դնել կամ սեռական հոլովով կամ կիրառել համապատասխան ածականը՝ հեռավար ուսուցում, հատակի տախտակ, օվկիանոսի հատակ, դինոզավրի ոսկրեր, խմբակային հավաքներ, բանկային ապահովագրական համակարգ և այլն:

Ավելի երկար հաջորդականություններ նույնպես հնարավոր են, օրինակ՝

Yerevan State University Philology Chair-ը Chair of Philology of Yerevan State University-ի փոխարեն:

Հայերենում այս կառույցները հնարավոր են բացառապես հոլովածների միջոցով:

Այն հարցադրումը, թե որքանով են ընդունված այդ կաղապարները և եզրակիրների շրջանում, կախված է տարաբնույթ ենթատեքստերում կամ իրական խոսքային իրադրություններում դրանց տարածվածության աստիճանից: Եթե օրինակները հաստատում են, որ սվյալ երևույթը և այն տարածում է ստացել և օգտագործվում է տարբեր իրադրություններում, ապա այն հնարավոր է ընդգրկել ուսուցողական քերականության մեջ, իհարկե, որոշ վերապահումներով, օրինակ՝ չօգտագործել դրանք պաշտոնական և գրագրության մեջ: Դժվար չէ նկատել կորպուսի արդյունքների վրա հիմնված և եզրակիր ուսուցման կարևորությունը: Եզրակիրների խոսքում առկա իրադրային քերականական կաղապարների ուսումնասիրությունը և դրանք բանավորի մեջ կիրառելու անհրաժեշտությունը իսկապես ակնհայտ է և արդիական և եզրակիր ուսուցման գործընթացում:

Հաղորդակցական մեթոդիկական կարևորում է խոսքային կարողությունների, ինչպես նաև առօրյա խոսքում օգտագործվող իրադրային քերականական կառույցների ուսուցման անհրաժեշտությունը և եզրակիր դասավանդման պրակտիկայում: Իրադրային քերականությունն ընդգծում է հաղորդակցվող նյութի տեքստային և միջանձնային կողմերը, որի շնորհիվ հեշտանում է հաղորդակցությունը:

Այսպիսով, կորպուսային և եզրակիր ուսուցումն ապահովում է այն համապատասխան տիպական և ոչ տիպական օրինակները, որոնք անհրաժեշտ են ոչ միայն բնական և եզրակիր ուսումնասիրողների, այլ նաև իրական հաղորդակցության համար, որտեղ բառը, բառակապակցությունը, քերականական տարբեր երևույթները և կառույցները տարաբնույթ իրադրություններում կարող են տարբերակվել իրենց բազմիմաստ գործածություններով և բազմանշանակ ընկալումներով:

1.2. Իրադրային քերականության ծագման և ձևավորման պատմությունն է

Հնարավոր չէ ներկայացնել օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի որևէ հիմնախնդիր առանց հարակից՝ գլխավորապես մեթոդաբանական հոգելեզվաբանության և լեզվաբանական տեսությունների, նրանց ծագման և ձևավորման պատմության ուսումնասիրության: Քերականության ուսումնասիրությամբ է պայմանավորված ընդհանուր լեզվաբանության, ինչպես նաև նրան հարակից գիտությունների՝ մշակութաբանության, հանրալեզվաբանության, պրագմալեզվաբանության և այլնի զարգացումը:

Քերականության ուսուցման կարևոր և շրջադարձային պահ էր այն, երբ OL դասավանդման մեթոդիկայում տեղի ունեցավ ռեցեպտիվ (ընկալ ողական) և պրոդուկտիվ (վերարտադրողական) քերականության տեսակների տարանջատումը (И.В. Ракманов (1956), որի արդյունքում ավելի կոնկրետացան քերականության ուսուցման խնդիրները:

Հաջորդ հիմնախնդիրը վերաբերում է օտարալեզու քերականության ուսուցման մեթոդներին: Թարգմանական-քերականական մեթոդի գերիշխման շրջանակներում քերականությունը դիտարկվում էր ինքնանպատակ և խնդիր էր դրվում ուսուցանել այն՝ նախապատվությունը տալով դեդուկտիվ եղանակին: Այդ համատեքստում առաջին պլան են մղվում քերականական կանոնների ուսուցումը և դրանց հիման վրա տեքստերի թարգմանությունը: Շատ դեպքերում ուսանողները ավելի լավ են տիրապետում քերականական կանոններին, դրանց մատուցման եղանակներին, քան բուն քերականությունը՝ գործնական կիրառման տեսանյունից:

Գործնական քերականության ուսուցման մյուս մոտեցումն այն է, որ սովորողներին առաջարկվում է թարգմանել կամ համեմատել քերականական եզրույթները: Շատ դեպքերում այս կամ այն քերականական եզրույթի բացակայությունը լուրջ դժվարություններ է հարուցում ոչ միայն ուսանողներին, այլև դասախոսներին: Դեռևս հայ լեզվաբանները միակարծիք չեն “Gerund”, “Vague”, “Hesitation”, “Hedging” և այլ եզրույթների համարժեքների ճշգրտմանը:

Այդ առումով կարևորվում են հաղորդակցական և եզրվաբանության տարբեր հայեցակետեր ներկայացնող հետազոտությունները (Aggarwal R.S. (2007), Banathy B. H. (2004), Butler Y. G., & Lee, J. 2010, Eimas P.D. (1995), Ginzburg J. (2012)., Habermas, J., & Luhmann, N. (1971), Liddicoat A. J. (2013), Miller J.L., Nunan D. (2004), Rose K.R., Kasper G. (2010), Shovak O.I. (2012), Гез Н.И. (1985), Грибанова Т.И. (2009), Дементьев В.В. (2006), Иссерс О.С. (2011), Коршунова Е. Н. (2009), Кравченко А. В. (2013), Милосердова Е.В. (2004), Рахманов И.В. (1956), Роготнева Е.Н. (2009), Соловова Е.Н. (2002), Успенский Б.А. (2007), Формановская Н.И. (2002), Хуторской А. В. (2003), Цетлин В. С. (1991), Ярцева В. Н. (1979):

70-ական թվականներին, օտար և գույների դասավանդման ոլորտում որպես գերիշխող ուղղություն հանդես եկավ հաղորդակցական մեթոդը, որը մեծ ներգործություն ունեցավ քերականության զարգացման վրա: Ընդհանուր առմամբ, կարելի է համապատասխան վերլուծությամբ բացահայտել հաղորդակցական և եզրվաբանության և հաղորդակցական քերականության առանձնահատկությունները տեսական, մեթոդաբանական, հասկացական մակարդակներում:

Ընդհանուր առմամբ, եթե և եզրվաբաններն ու սուբնասիրում էին գլխավորապես քերականական ձևերը, իմաստային ծավալը, գործածության ոլորտը, ապա հարց է ծագում վերջիններսյուրացնելու արդյունավետ մեթոդների առնչությամբ: Օրինակ, հետազոտության հետին պլան մղելով նշանակությունը, կառուցվածքաբանության մոտեցման շրջանակներում ստրուկտուրալ իստները մեծ տեղ էին հատկացնում նախադասության համաժամանակյա վերլուծությանը: Դա նպաստեց տեսալոսողական մեթոդի շրջանակներում բազում վարժանքների (speech patterns)՝ փոխառնուման, փոխակերպման, շղթայի կրկնության և այլնի մշակմանն ու կիրառմանը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ վերոհիշյալ քերականության ներկայացուցիչները, առանձնացնելով նախադասության գլխավոր և երկրորդական մասերը, հիմնավորեցին ավտոմատացված խոսքային հմտությունների զարգացման անհրաժեշտությունը ու սուբնասիրտարբեր փուլերում:

Առանձնանում է ստրուկտուրալ իստական և եզրվաբանության ներկայացուցիչ Ֆրիզը, որը հստակորեն շարադրել է բառապաշարի ընտրության, ուսուցման, մասնավորապես քերականության

ուսուցման հիմնական սկզբունքները, որոնք հետագայում նպաստեցին քերականության իրադրային ուսուցման մոտեցումների ձևավորմանը:

Իրադրային քերականության մեթոդական տեսության ձևավորման տեսանկյունից կարևոր է այն փաստը, որ Ֆրիզի մոտեցումը հակադրվում է ավանդական քերականության մոտեցմանը (Ch. Fries 1945:153): Մասնավորապես նա դեմ է քերականական բառածևերի ամբողջական ուսուցմանը /հոլովման, խոնարհման հարացույցների/: Սկզբունքային նշանակություն ունի այն, որ նա կողմ է քերականության ինդուկտիվ ուսուցմանը: Հիմք դնելով քերականության տիպականացման մեթոդիկայի մշակմանը՝ նա առաջիններից էր, ով պահանջում էր ուսումնասիրել և յուրացնել օտարալեզու քերականական կառուցվածքները՝ հաշվի առնելով լեզվաբանական և մեթոդական տիպաբանության առանձնահատկությունները: Անգլո-ամերիկյան մեթոդական ավանդույթի շրջանակներում ձևավորվում և զարգացում են սարու ուղիղ (direct), հետագայում՝ տեսալսողական (audio-lingual) մեթոդները:

Խորհրդային մեթոդական ավանդույթը շեշտը դնում է գիտակցական մոտեցման վրա: Խորհրդային մեթոդիստները փորձում են ստեղծել քերականական երևույթները, կառույցները գիտակցաբար յուրացնելու մեթոդիկա: Դահանգեցնում է առաջին և երկրորդ լեզուների համեմատական ուսուցմանը (В.Д. Аракин (1989), С. Г Бархударов. (1975):

Պատահական չէ, որ գիտնականները սահմանում են գիտակցական-համեմատական մեթոդը (И. В. Рахманов (1980), Л. В. Щерба (1974)): Օտարալեզուների զարգացման հաջորդ փուլերում այդ մեթոդը գործունե ազդեցություն է ունենում ուսուցանվող օտարալեզու քերականական նվազագույնի ընտրության սկզբունքների դասակարգման վրա:

Ինչ վերաբերում է անգլերենի մասնագիտական դասընթացին, ապա այն ունի բազում առավելություններ: Նախ ուսանողներին բնորոշ են մասնագիտական, ճանաչողական դրդապատճառները: Դրանք և՛ ինտեգրված են և՛ գործիքային այն առումով, որ ուսանողներն ուսումնասիրում են օտարալեզուների օտարալեզուների

Ֆակուլտետում, նպատակ դնելով յուրացնել տվյալ լեզուն թե՛ ճանաչողական, թե՛ մասնագիտական մակարդակներում:

Կարևոր խնդիր է դիտարկել ուսանողների մեթոդական կոմպետենցիայի զարգացման հիմնախնդիրը քերականության ուսուցման տեսանկյունից:

Ըստ ծրագրային պահանջների օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները պետք է կարողանան քերականության իմացությամբ բնութագրել լեզուն /թիրախային/, ուսումնասիրել նոր տեսություններ և ձեռք բերել վերլուծական հմտություններ:

Քերականության ուսուցման մասնագիտական դասընթացում հիմնականում ներգրավվում ու կարևորվում է նորմատիվ քերականության ուսուցումը: Վերջինս նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում հաղորդակցական կոմպետենցիայի տեսանկյունից, որը դեռևս 60-ական թվականներին ներմուծում է Ն. Չոմսկին քերականության հիմնադրույթները մշակելիս (N.Chomsky 1966:3-12, CEFR 2001):

Իրադրային քերականության ուսուցման առավելություններից մեկն այն է, որ սովորողները քերականական կառույցները գործածում են ըստ տվյալ իրադրության՝ հմտությունների զարգացման մակարդակում: Նրանք անկաշկանդ խոսում և հաղորդակցվում են անգլերենով: Այդ համատեքստում կարևորվում է իմաստաբանական սկզբունքը, այն առումով, որ քերականական կառույցները յուրացվում է խոսքասերման ընթացքում՝ ուղղորդվելով «իմաստից դեպի ձև» ուղղությամբ:

Հատկանշական է այն, որ սովորողները պետք մտապահեն քերականական կանոնները, ինչպես նաև առաջին լեզվի համարժեքները (Larsen-Freeman (1986):

Ընդգծելով բանավոր խոսքի դերը և լեզվի հնչյունային կողմը՝ ուղիղ մեթոդի (direct method M. Berlitz, W. Vieter) հիմնադիրները մեծ ներդրում ունեն իրադրային քերականության ուսուցման գործում, քանի որ այդ մեթոդի առաջնային նպատակը հաղորդակցական, հատկապես խոսողության կարողություններ զարգացնելն էր: Ի տարբերություն քերականական-թարգմանական մեթոդի, իրադրային

քերականությունն ուսուցանվում էր հիմնականում ինդուկտիվ-դեդուկտիվ եղանակով:

Լեզվալսողական մեթոդի (audio-lingual method-Ch. Fries (1945), R. Lado (1957) հետևորդները նույնպես ընդունում էին իրադրային ուսուցման սկզբունքները՝ շեշտը դնելով խոսքային հմտությունների ձևավորման ոչ խոսքային արտահայտչամիջոցների համադրման վրա: Կարևոր մոտեցումն այն էր, որ սովորողները քերականական կանոններ սերտելու, մտապահելու նպատակ չեն հետապնդում: Վերոհիշյալ մեթոդի վառ ներկայացուցիչները խիստ կարևորում են լեզվական նյութի ակտիվ և պասիվ շերտերի բաժանումը, թեպետ նման բաժանումը բացակայում է այդ ժամանակաշրջանի գործնական դասագրքերում: Լեզվական նյութի բաժանումը նրանք հանգեցնում են քանակական գործոնի: Ըստ Ֆրիզի և Լադոյի պրոդուկտիվ լեզվական նյութը պահանջում է առավելագույն վարժանք (drill)՝ ի տարբերություն ռեցեպտիվ նյութի յուրացման: Գերակայող մեթոդը, ըստ Ֆրիզի և Լադոյի, պետք է լինի քերականական նյութի մեխանիկական տիրապետումը: Մյուս առանձնահատկությունն այն է, որ բառապաշարը և քերականական կառույցները առաջարկվում է ուսուցանել երկխոսությունների միջոցով:

Այսպիսով, նշված մեթոդների զարգացման շրջանակներում ձևավորվում է հաղորդակցական-երկխոսական քերականությունը: Կրկնության, ընդօրինակման, ընդլայնման, շղթայի փոխարինման, տեղադրման, փոխակերպման վարժանքները կարող են հաջողությամբ կիրառվել իրադրային քերականության ուսուցման նախապատրաստական փուլում:

Այստեղ կարևոր նշանակություն ունի ոչ միայն օտար, այլ նաև մայրենի լեզուն ուսումնասիրելու ավանդույթները:

Նախորդ դարի կեսերին լեզվաբանները սկսեցին դիտարկել լեզուն ոչ միայն որպես բառերի և կառույցների ամբողջություն, այլ և հաղորդակցման միջոց (D.Wilkins (1972): Այդ մոտեցումը սկիզբ դրեց հաղորդակցական լեզվաբանությանը, ինչպես նաև հաղորդակցական մեթոդի կիրառմանը, որը նպաստեց իրադրային,

խոսակցական քերականության ուսուցման սկզբունքների ձևավորմանը:

Փաստորեն, օտար լեզվի ուսուցումը սկսեցին դիտարկել հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորման տեսանկյունից: Օտար լեզուների զարգացման նշված փուլում ներմուծվեցին «բանավոր խոսքի քերականություն», «ընկալողական քերականություն» հասկացությունները: Այդ տարանջատումը կարևոր դեր է խաղում քերականական նվազագույնի ընտրության սկզբունքների վերանայման և դասակարգման գործում:

Կոմպետենտային մոտեցման կիրառումն օգնեց գիտնականներին առանձնացնել հաղորդակցական կոմպետենցիայի բաղադրիչները, հստակեցնել լեզվաբանական կոմպետենցիայի, տրամախոսական կամ դիսկուրսիվ կոմպետենցիայի հարաբերակցությունը (CEFR 2001): Կարևոր է այն, որ մեթոդիստներին հաջողվեց առանձնացնել «իրական/ռեալ իրադրություն», «խոսքային գործունեություն» հասկացությունները, առ այն, որ իրադրային քերականության ուսուցման սկզբունքներն ընտրելիս և դասակարգելիս, գիտնականները կարևոր գործոն են համարում իրական իրադրությունների մոդելավորումը (Р. П. Мильруд (2004):

Իրադրային քերականության ուսուցման սկզբունքների ընտրության հիմնախնդիրը խոսքային ակտերի տեսության հիմնավորման համատեքստում, նոր մեթոդաբանական դիրքերից են դիտարկում Օստինը և Սերլը: Ինչպես հայտնի է լեզվաբանության պատմությունից, Օստինը առանձնացնում է խոսքային ակտերի երեք տեսակ՝ դատողության արտահայտման, լոկուտիվ և իլոկուտիվ ակտեր (J. R. Searle (1969):

Քերականության իրադրային ուսուցման տեսանկյունից կարևոր է նշված տեսությունը, քանի որ թե՛ բովանդակության և թե՛ արտահայտման պլաններում քերականական կառույցները կիրառելու ոճերը և շարժառիթները փոխվում են:

Տվյալ պայմաններում քերականական կոմպետենցիան վերաբերում է մի կողմից խոսողական-կատարողական /illocutionary/, մյուս կողմից՝ խոսողական-ներգործական /perlocutionary/ ակտերին (J. L. Austin (1962), J. R. Searle (1969):

խոսքային ակտերի տեսությունը նպաստեց քերականության իրադրային ուսուցման սկզբունքների դասակարգմանը ըստ լեզվի տարբեր գործառնության՝ մտքերի արտահայտման, հաղորդակցական մտադրությունների (communicative intentions) գործունեական հայտնագործման: Ընդ որում, քերականության իրադրային ուսուցման սկզբունքները դրսևորվում են տարբեր կառուցվածքներում՝ ձևաբանության, շարահյուսության, իմաստաբանության մակարդակներում:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում նաև նորմատիվ քերականության ուսուցման հիմնախնդիրը: Այն սկսում են դիտարկել գրավոր և բանավոր խոսքի ուսուցման տեսանկյունից:

Քերականության իրադրային ուսուցման սկզբունքները դասակարգելիս, գիտնականները չէին կարող հաշվի չառնել ընդհանուր դիդակտիկայի և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի շրջանակներում ձևավորված հիմնական դրույթները:

Կառուցվածքային մոտեցման սկզբունքների կիրառումը չէր կարող տալ ցանկալի արդյունք: Հակադրումը, համարումը արդյունավետ էին խոսքային գործունեության ծավալման մեդիատիվ՝ միջնորդավորված կամ վերլուծական-թարգմանական մակարդակում (CEFR 2001:14):

Իրադրային քերականության ուսուցման սկզբունքների ժամանակակից դասակարգումների հիմքում ընկած են նախև առաջ ճանաչողական հոգեբանության և լեզվաբանության սկզբունքները, առ այն, որ առաջին պլան է մղվում մարդու հոգեկերտվածքը: Ըստ այդմ, կարևորվում են խոսքի յուրացման մակարդակում սովորողների մտապահման, խոսքային վարքագծի ձևավորման հիմնախնդիրները (P.A. Skehan (1998): Կարելի է պնդել, որ կոգնիտիվ հոգեբանությունը և լեզվաբանությունը նպաստեցին իրադրային քերականության ուսուցման սկզբունքների ձևավորմանը:

Կոգնիտիվիստական տեսությունները նպաստեցին իրադրային քերականության ուսուցման սկզբունքների դասակարգմանը, քերականական նվազագույնի կոնկրետացմանը, առ այն, որ

ուսուցման հիմնական միավոր համարվեց հոգեկերտվածքի բաղադրիչներից մեկը՝ կոնցեպտը: Մարդը, ուսումնասիրելով օտար լեզուներ, ըստ այդ տեսության պետք է յուրացնի թիրախային լեզվող հաղորակցվողների մենթալ իտետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմատիվ քերականության ուսուցման սկզբունքները ձևավորվել են դիսկրիպտիվիստական, կառուցվածքային լեզվաբանության շրջանակներում, կարելի է եզրահանգել, որ իրադրային քերականության ուսուցման սկզբունքները ձևավորվել են կոգնիտիվիստական տեսությունների ազդեցությամբ:

Ընդհանուր առմամբ, իրադրային քերականության ուսուցման սկզբունքների հիմքում ընկած են Մերսերի կողմից առաջադրված կոգնիտիվիստական տեսությունների շրջանակներում ձևավորված հետևյալ սկզբունքները՝

1. սովորողները կարող են յուրացնել և հասկանալ իրենց փորձին չհակասող գիտելիքները,
2. ամեն մի անձ յուրացնում է այն, ինչ բնորոշ է իր մտածողությանը,
3. նոր գիտելիքները հանգեցնում են ձևավորված գիտելիքների բովանդակային փոփոխության,
4. շրջակա միջավայրը և սոցիալական փոխհարաբերությունները գործունե ազդեցություն են ունենում ուսուցման վրա (N. Mercer (1995):

Իրադրային քերականության ուսուցման գործընթացը պայմանավորված է նրանով, թե ինչպես ստեղծել բնականին մոտ ճանաչողական մթնոլորտ, որի արդյունքում ձևավորվում են իրադրային քերականական կաղապարներ: Նորմատիվ քերականության ուսուցումը կարող է ընթանալ առանց հաշվի առնելու նշված գործոնները:

Իրադրային քերականության ուսուցման հիմնական նպատակը սովորողների ինքնազարգացման մշակույթի ձևավորումն է:

Ակնհայտ են իրադրային քերականության ուսուցման և հաղորդակցական մոտեցման սկզբունքների ընդհանրությունները: Ըստ հաղորդակցական մոտեցման նույնպես «իրական խոսքային»

հասկացողությունը կարևոր է ուսուցման գործընթացը կազմակերպելու համար: Դեռևս Մ. Ուեստը և Ա. Ս. Յորնբին պայքարում էին լեզուների իրադրային ուսուցման համար: Սակայն, ուսումնական պայմաններում դժվար է ստեղծել իրական խոսքային իրադրություններ: Անհարժեշտ է նախ և առաջ դրանք ուսումնասիրել, հետո մոդելավորել:

Ա. Ս. Յորնբին ուղղակիորեն քերականության ուսուցման կարևոր սկզբունք է համարում իրադրությունը, որը ենթադրում է ստեղծել հնարավորինս շատ իրադրություններ ուսումնական պայմաններում (A. S. Hornby 1984): Նույնը պնդում է Վ. Ապելտը: Ըստ վերջինիս իրադրային քերականության ուսուցումը կարևոր սկզբունք է, հաշվի առնելով լեզվաբանության և դիդակտիկայի արդի զարգացումները: Նա նույնպես խնդիր է դնում մոդելավորել ուսումնական պայմաններում թիրախային համարվող խոսքային իրադրությունները:

Այսպիսով, իրադրային քերականության ուսուցման սկզբունքները դասակարգելիս, անհրաժեշտ է հաշվի առնել թե՛ դասական, թե՛ ժամանակակից մոտեցումները, մասնավորապես՝ կոգնիտիվ-իմացական և կոնստրուկտիվիստական տեսությունները: Ուսումնական պայմաններում սովորողները պետք է կարողանան ճիշտ գործածել թե՛ նորմատիվ, թե՛ հաղորդակցական քերականական կառույցները տարբեր ուսումնախոսքային իրադրություններում: Դա պահանջում է նրանցից տվյալ իրական իրադրություններում գործածել համապատասխան քերականական կառուցվածքը՝ հենվելով արդեն ունեցած փորձի վրա:

Այս պայմաններում հույժ կարևոր է նաև իրական հաղորդակցական միջավայրի ստեղծման հիմնախնդիրը: Դժվար է սահմանափակվել միայն դիդակտիկական սկզբունքներով: Այստեղ նույնպես կարևորվում է լեզվակիրների մտածելակերպի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը դուրս է մնում մեր ուսումնասիրության շրջանակներից:

Իրադրային քերականության ուսուցումը պահանջում է ինդուկտիվ եղանակի կիրառումը՝ ներկայացնելով տվյալ երևույթը տարբեր կաղապարներով և օրինակներով, ինչպես նաև

տվյալ երևույթի իմաստավորումը կանոնների միջոցով, ինչը չի բացառում նաև դեդուկտիվ մոտեցումը, քանի որ անգլերենի մասնագիտական դասընթացում քերականական կանոններին ակտիվորեն առնչվում են քերականության տեսական դասընթացներում:

Քերականության ուսուցման ներակա մոտեցումը ենթադրում է հստակ կադապարների կիրառում, որը հիմնվում է ստեղծագործական առաջադրանքների կառուցվածքային և հաղորդակցական մեթոդի վրա: Իրադրային քերականության ուսուցման հաղորդակցական մեթոդը ենթադրում է լեզվանյութի ընկալում կոնկրետ իրադրությունում: Կարևոր է այն, որ այն բացառում է մեխանիկական կրկնությունը և ընդօրինակումը (drill)՝ նախապատվությունը տալով կոնկրետ խոսքային առաջադրանքների կատարմանը:

1.3. Քերականական կոմպետենցիան որպես հաղորդակցական լեզվական կոմպետենցիայի գլխավոր բաղադրիչ

Իրադրային քերականությունն ըստ էության հիմնվում է կոմպետենտային մոտեցման վրա, որը հասարակության զարգացման արդի փուլում օտար լեզուների ուսուցման գլխավոր ուղղությունն է: Եվրախորհրդի հիմնարար աշխատության մեջ հստակորեն տրվում են տարբեր կարգի կոմպետենցիաներ՝ ընդհանուր (general) և լեզվական-հաղորդակցական (communicative language competence). Ըստ ԼԻՅՅ-ի (CEFR) լեզվական հաղորդակցական կոմպետենցիան սահմանվում է որպես *«գիտելիքների, ունակությունների այն հանրագումարը, որն անհատին գործելու հնարավորություն է տալիս»* (CEFR 2001:17): Այն դիտարկվում է որպես լեզվական-հաղորդակցական, հանրալեզվաբանական և գործաբանական կոմպետենցիաների մեկամբողջություն:

Ավանդաբար օտար լեզուների ֆակուլտետներում մեծ տեղ է հատկացվում լեզվական ասպեկտների յուրացմանը, քանի որ այն ներառում է լեզվական նշաններ, խորհրդանիշեր, կոդեր, դրանք վերաիմաստավորող կանոններ, ըմբռնելու և գործածելու կարողություններ:

Լեզվական կոմպետենցիան ընդգրկում է ուսումնասիրվող լեզվի քերականության (ձևաբանություն և շարահյուսություն), բառապաշարի, հնչյունաբանության, ուղղագրության ոլորտները:

Յադրորդակցական լեզվական կոմպետենցիան ընդգրկում է նաև հետևյալ կարողությունները՝

- **հանրամշակութային**, երբ կարողություններն առնչվում են լեզվի օգտագործման հասարակական և մշակութային պայմանների հետ,
- **գործաբանական**, որոնք առնչվում են լեզվական միավորների իրադրային գործածության հետ՝ հաղորդակցական փոխներգործության և խոսույթի ստեղծման կանոններին համապատասխան,
- **փոխհատուցման**, որոնք ենթադրում են դժվար իրավիճակից դուրս գալու կարողություններ զանազան ձևերով (չիմացած բառի բացատրություն այլ բառով, կռահելով, դիմախաղով, շարժումներով, կրկնելով, դանդաղ խոսելով և այլն),
- **ուսումնաճանաչողական**, այսինքն սեփական ուսումնական ռազմավարությունների մշակում և կիրառում, անհատական ուսուցում (ԼԻՅՅ 2005:15-17):

Ակնհայտ է, որ լեզու սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորումը բարդ գործընթաց է, որն անհրաժեշտ է զարգացնել ուսուցման բոլոր փուլերում:

Մեթոդական գրականության մեջ «հաղորդակցական կոմպետենցիա» տերմինը մեթոդական տերմինների բառարաններում ներառում է իր մեջ հետևյալ հասկացությունները.

- խոսքային-ճանաչողական կոմպետենցիա
- լեզվաբանական կոմպետենցիա
- խոսքային –հաղորդակցական կոմպետենցիա
- վերհաղորդակցական կոմպետենցիա (A. Ulrich (1979):

Յադրորդակցական կոմպետենցիան խոսքային համապատասխան վարքագծի ընտրության և իրացման ծրագիրն է: Դա կարող է պայամանավորված լինել տվյալ անձի տարբեր իրական խոսքային իրադրություններում ճիշտ խոսքային ռազմավարություն ընտրելու ունակություններով:

Ըստ ԼԻՅՅ-ի Լեզվական-հաղորդակցական կոմպետենցիան դրսևորվում է խոսքային գործունեության տարբեր ձևերում՝ ընկալման, վերարտադրման, փոխներգործության կամ միջնորդավորված (mediation) գործունեության մեջ: Մեկը մյուսով պայմանավորված ընկալումն ու վերարտադրումը ապահովում են փոխներգործությունը, սակայն նրանք կարող են նաև հանդես գալ որպես խոսքային գործունեության առանձին տեսակներ: Յաղորդակցական կոմպետենցիան տարաբաժանվեց Լեզվական, հանրալեզվաբանական, գործաբանական բաղադրիչների:

Ակնհայտ է, որ Լեզվական կոմպետենցիան բնութագրվում է գործնական և տեսական մակարդակներում և ձեռք է բերում տարբեր բովանդակային բնութագրեր մայրենի և օտար լեզուներ ուսումնասիրողների մոտ: Եվ երբ պնդում ենք, թե Լեզվական կոմպետենցիան ներկայացնում է որոշակի կանոնների համակարգ, ապա կարող ենք կանոններ մեկնել տարբեր մակարդակներում՝ շարահյուսական, ձևաբանական, իմաստաբանական, գործաբանական և այլն: Ակնհայտ է նաև, որ զարգացնելով միայն Լեզվական կոմպետենցիան, հնարավոր չէ յուրացնել օտարալեզու քերականական երևույթները և կառույցները տարբեր խոսքային իրադրություններում՝ ըստ դրանց ոճաժանրային առանձնահատկությունների:

Խոսքային-կոգնիտիվ կոմպետենցիան ներկայացնում է հաղորդակցվողների գիտելիքները, ունեցած տեղեկատվությունը մտապահելու, մշակելու, փոխանցելու կարողությունները:

Օտարալեզու իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից կարևորվում է *հանրալեզվաբանական* կոմպետենցիան, քանի որ այն՝ Լինելով հաղորդակցական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչ, ենթադրում է տարբեր խոսքային իրադրություններում Լեզվաարտահայտչամիջոցներ կիրառելու ընդունակություններ, տարբեր ենթատեքստերում իրականացնելու բազմաթիվ ճանաչողական և հաղորդակցական գործառնություններ:

Նույն տեսանկյունից կարևորվում է նաև *գործաբանական* կոմպետենցիան, քանի որ վերջինս էլ դիտարկվում է Լեզվակիրների

հաղորդակցական վարքագծի մակարդակում (Y. Siegel (2016): Ըստ այդմ, անձը հաղորդակցական վարքագծում տիրապետում է որոշակի նորմերի: Ակնհայտ է, որ հնարավոր չէ ստեղծել իրական լեզվական իրադրություններ, առանց լեզվակիրների հաղորդակցական նորմերը յուրացնելու: Նույնը վերաբերում է հաղորդակցական կոմպետենցիային, քանի որ այն սահմանվում է որպես օտարալեզու արտահայտությանները հասկանալու և սերելու ունակություն, հաշվի առնելով կոնկրետ խոսքային իրադրությունները, ինչպես նաև հաղորդակցվողների նպատակադիրքորոշումները և հաղորդակցական մտադրությունները (Бим (2005), Гальскова (2004):

Ինչ վերաբերում է կոմպետենցիայի մեթակոգնիտիվ ուղղվածությանը, ապա այն դիտարկվում է հաղորդակցման միջոցների վերլուծության և գիտելիքների հաղորդման կարողությունների և հմտությունների ձևավորման մակարդակներում: Տվյալ կոմպետենցիայի զարգացումը կարևոր է մասնագիտական կողմնորոշման գործընթացում՝ հատկապես ուսուցման ավարտական փուլում, քանի որ շատ ուսանողներ ապագայում դասավանդելու են օտար լեզու կամ քերականություն և դարձնում կամ բուհում:

Ինչպես արդեն նշվեց, լեզվական կոմպետենցիան ընկած է հաղորդակցական կոմպետենցիայի հիմքում, քանի որ այն ձևավորվում է լեզվահամակարգի և հաղորդակցվելու ընթացքում լեզվական գիտելիքները կիրառելու կանոնների մասին գիտելիքներից:

Օտարալեզու իրադրային քերականության ուսուցման համատեքստում լեզվաբանական կոմպետենցիան դրսևորվում է որպես սովորողների բառերը և քերականական կառույցները ընկալելու և կիրառելու, ինչպես նաև վերջիններս ճիշտ ընտրելու կարողություն, հաշվի առնելով դրանց գործածության հաճախականությունը:

Գործառական մակարդակում խնդիր է դրվում տարբեր իրադրություններում ամրագրել քերականական երևույթների գործառույթները (Objectives... 1993: 39):

Խոսու թայ ին կոմպետենցիայի զարգացումը, ինչը ենթադրում է տարբեր բնագրեր ուսումնասիրելու և մեկնաբանելու ռազմավարություն, իրադրային քերականության ուսուցման անքակտելի մասն է:

Դիտարկելով հաղորդակցական, հետհաղորդակցական և Լեզուների իմացություն/իրազեկություն համաեվրոպական համակարգը, անխուսափելի է դառնում բովանդակության վրա հիմնված քերականության (content-based) սկզբունքը, ըստ որի սովորողների հետաքրքրություններին և պահանջմունքներին համապատասխան ներմուծվող նյութի ճշգրիտընտրությունը և թեմաները նպաստում են ուսանողների մոտիվացիայի աստիճանի բարձրացմանը:

Կարևոր է հստակեցնել, թե երկրորդ լեզվի ուսուցման հարացույցի շրջանակներում քերականության որ մոդելն է առաջնային՝ հիմնված առաջադրանքի, ձևի, թե՞ բովանդակության, համագործակցային, թե՞ հասկացական-գործառական ուսուցումները, գործառական, թե՞ բնական մոտեցումներն են առավել արդյունավետ (D. Newby 2006):


Ըստ CEFR-ի քերականության ուսուցումը համահունչ է հաղորդակցության ուղղվածությանը: Իրադրային քերականության ուսուցման համատեքստում կարևորվում է առաջադրանքի, ձևի, բովանդակության վրա հիմնված և ինտերակտիվ քերականության դերը:

1990-ական թվականներին ձևավորված նախաշեմային (Waystage), շեմային (Threshold) և հետշեմային (Vantage) մակարդակները (Van Ek and John Trim) սկիզբ դրեցին եվրախորհրդի կողմից կոմպետենցիաների վեց հիմնական մակարդակների ստեղծմանը, և միևնույն ժամանակ եվրոպայի տարածքում այդ մակարդակների՝ A1-ից մինչև C1-ի ճանաչմանն ու միասնականացմանը, որոնք ներկայացվեցին համապատասխան ցուցիչներով (descriptors):

Եվրախորհրդի հիմնարար աշխատությունում **քերականական կոմպետենցիան** սահմանվում է որպես քերականական նյութի գիտելիքի և տարբեր կառուցվածքների օգտագործման կարողություն (Լեզուների իմացություն/իրազեկություն....2005: 171):

Ներկայացնենք քերականական կոմպոտենցիայի կառուցվածքը համապատասխան բաղադրիչներով:

Գծապատկեր 1



(ԼԻՆԴ 2005:130-131):

Փաստորեն, վերոնշյալ գծապատկերում ներկայացված է ավանդական քերականական նյութն իր ենթաբաժիններով ու տարրերով: Այստեղ բացակայում են ուսումնական խոսքային նյութը և համապատասխան տիպական իրադրությունները: Յետևաբար այն բավարար չէ և ենթակա է վերանայման՝ հաշվի առնելով իրադրային քերականության գործառնությունները, հաղորդակցական մտադրությունները և այլ բնորոշ միջոցներն ու առանձնահատկությունները:

Հաղորդակցական կոմպոտենցիան, ըստ մի շարք լեզվաբանների (D.Niezgoda and W.Rover:2001), իր մեջ ներառում է առնվազն երկու բաղադրիչ: Մեկը վերաբերում է խոսողի քերականական գիտելիքներին, այսինքն՝ հնչյունաբանությանը, բառապաշարին, իմաստաբանությանը, ձևաբանությանը և շարահյուսությանը, մյուսը՝ համապատասխան ենթատեքստում լեզուն նպատակին ճիշտ գործածելու կարողությանը:

Հատկանշական է այն, որ հաղորդակցական կոմպետենցիայի նշված բաղադրիչներն օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում փոխապայմանավորված են և հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն: Այստեղ չափազանց կարևորվում է լեզվական միջավայրի գործոնը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում խոսքային, գործաբանական և քերականական կոմպետենցիաների համաժամանակյա զարգացումը:

Շարահյուսական մակարդակում, քերականական կառույցները տարաբնույթ փոփոխությունների են ենթարկվում հատկապես արտահայտության և բովանդակության տեսանկյունից: Այդ համատեքստում կարևորվում է իմաստաբանական քերականության ուսուցումը, որն ամենևին չի նշանակում անուշադրության մատնել ձևաբանության և շարահյուսության համակարգը:

Ինդիքն այն է, թե ինչպես համադրել քերականության ուսուցման տարբեր ասպեկտները և շեշտադրել այն բաղադրիչը/կողմը, որը կարևոր է հաղորդակցական-իրադրային քերականության ուսուցման համար:

Կազմելով լեզվական կոմպետենցիայի հիմքը՝ քերականական կոմպետենցիան դիտարկվում է բոլոր հմտությունների համատեքստում, որը բնորոշվում է ճշգրտության տարբեր մակարդակներով (CEFR 2001: 114):

Հատկանշական է այն, որ լեզվական կոմպետենցիայի առանձնահատկությունները կարելի է ներկայացնել ավելի ամբողջական հաղորդակցական կոմպետենցիայի համեմատությամբ: Վերջինս բնութագրվում է հոգելեզվաբանության, հոգեբանության, գործաբանական և ճանաչողական լեզվաբանության, մեթոդաբանության շրջանակներում: Ինչպես հայտնի է, հաղորդակցական կոմպետենցիան սահմանվում է որպես խոսքային կամ հաղորդակցական վարքագծի ընտրության գործընթաց՝ ներառելով լեզվական, հանրալեզվաբանական և գործաբանական կոմպետենցիաները (ԼԻՅՅ 2005: 15): Այդ համատեքստում կարևորվում է լեզվակիրների տարբեր խոսքային իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, ինչպես նաև տարբեր խոսքային իրադրությունները դասակարգելու ունակությունը, հաշվի

առնելով բանավոր խոսքի թեման, հաղորդակցական խնդիրները, որոնք կանխորոշում են հաղորդակցման ընթացքը, ուղղվածությունը, հաղորդակցման ռազմավարության ընտրությունը:

Օտարալեզու իրադրային քերականության ուսուցման հիմնախնդիրը նոր հնչեղությունն է ստանում Դ. Յայմսի լեզվական կոմպետենցիայի մոդելի շրջանակներում, քանի որ նատարազատում է տվյալ մոդելում քերականական բաղադրամասը (resource grammar) տրամախոսական կամ դիսկուրսիվ քերականությունից, եթե առաջինս պահանջ է մղվում ուսուցվող քերականական ձևի ոճական հայեցակերպը (Hymes 1972): Նման մոտեցումը հետագայում ապացուցեց իր արդյունավետությունը և հիմք դրեց բազում նոր հայեցակարգերի ձևավորմանը, քանի որ քերականության ուսուցումը սկսեցին դիտարկել ոճաբանության մակարդակում: Առաջ եկան բազում ռեզիստների վերլուծության տեսություններ:

Պատահական չէ, որ Ֆ. Բախմանը առաջինս պահանջ է մղում քերականության ուսուցման գործընթացում անհատական ոճի հատկանիշները (F. Bachman 1990:86):

Այսպիսով, իրադրային քերականության ուսուցման կարևոր պայման է ոճաբանական քերականության յուրացումը: Նրա շրջանակներում ձևավորվում է տարբեր քերականական երևույթների հոմանիշության գաղափարը: Ոճաբանական հոմանիշներ կարող են լինել ձևաբանական մակարդակում տարբեր լեզվամիավորները: Օրինակ՝ բայական և բայ-անվանական քերականական կառույցները՝

The experts were thinking about the problem. (Փորձագետները մտածում էին խնդրի մասին): The experts were in thoughts... (Փորձագետները մտքերի մեջ էին խնդրի հետկապված):

Իրադրային քերականության ուսուցման մեթոդիկայի մշակման համատեքստում կարևորվում են այն հետազոտությունները, որոնք նվիրված են քերականական կառույցների խոսակցական կամ ազատ ոճով կիրառելուն: Դա հիմնավորվում է նրանով, որ խոսակցական ոճի բառաչերտը և քերականական կառույցները շատ են հանդիպում երկխոսություններում: Նրանցում բառերը գործածվում են առանց

ձևաբանական սահմանափակումների: Ընդ որում շարահյուսական կառույցները միտում ունեն շարունակական պարզեցման, որը և բերում է ընդունված նորմերից շեղման:

Այսպիսով, իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է նրա ոճական առանձնահատկությունների բացահայտում և գործառնությունների որոշակի հստակեցում, քանի որ հատկապես ոճական մակարդակում իրադրային քերականությունը ցույց է տալիս տվյալ լեզվի զարգացման շարժընթացը:

Միայն հաղորդակցական կամ ինտերակտիվ մեթոդները կիրառելով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի, քանի որ օտարալեզու քերականության ուսուցումը կարևոր պայման է սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման համար: Մյուս կողմից՝ օտարալեզու խոսույթի ուսումնասիրությունը, տարբեր իրական խոսքային իրադրություններում երկխոսությունների վերարտադրումը հնարավորություն են ընձեռում ակտիվացնել, ամրապնդել ընկալողական մակարդակում ուսումնասիրվող յուրացրած քերականական կանոններ, զարգացնել տարբեր իրական խոսքային իրադրություններում քերականական կառույցները գործածելու կարողություններ, հաղորդակցվել կոդավորման և ապակոդավորման մակարդակում, լեզվակիրների մակարդակում:

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԱՍԿՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹՅՈՒՄ

Այս գլխում քննարկվում են այս հարցերը.

- անգլերենի և հայերենի քերականական կառույցների գուգադրական - տիպաբանական վերլուծություն,
- ուսանողների անգլերենի իրադրային քերականության հայտորոշման թեստավորում և տիպական սխալների վերլուծություն,
- քերականության ուսուցման դժվարությունների սահմանում մասնագիտական դասընթացում:

2.1. Անգլերենի և հայերենի քերականական կառույցների գուգադրական, տիպաբանական վերլուծություն

Երկրորդ /երրորդ լեզվի ուսուցման գործընթացում անխուսափելի է գուգորդվող լեզուների բախումը, ինչով պայմանավորված են միջլեզվական ազդեցության հնարավոր դրսևորումները թե՛ դրական (transfer), թե՛ բացասական (interference): Բացասական ներթափանցման (ինտերֆերենցիա) ազդեցությամբ առաջանում են տարբեր տիպի դժվարություններ, ինչը պետք է հաշվի առնել քերականական նյութի ուսուցման գործընթացում:

Օտար լեզվի քերականական կառուցվածքները սովորելու առանձնահատկություններից մեկն այն է, որ գուգադրվող լեզուների համեմատելի երևույթները կարող են տարբերվել թե՛ ձևով, թե՛ իմաստային բազմազանության առումով, ինչպես նաև գործածության առանձնահատկություններով:

Մեր կողմից իրականացված գուգադրական վերլուծության նմանությունների և տարբերությունների, ինչպես նաև ուսուցման դժվարությունների վերհանման նպատակն է իրականացնել հայերենի և անգլերենի գուգադրական վերլուծություն միջարք

իրադրային քերականական երևույթներ ուսումնասիրելիս՝ հաշվի առնելով ձևը, նշանակությունը և գործածության ոլորտը:

Օտար լեզվի՝ տվյալ դեպքում անգլերենի ուսուցման պայմաններում զուգադրական վերլուծությունը հնարավորություն է տալիս ենթադրություններ անել դրական և բացասական (transfer, interference) ներթափանցման վերաբերյալ, ինչի հիման վրա կատարվում է համապատասխան քերականական երևույթների մեթոդական տիպականացումը՝ հստակեցնելով ուսուցման դժվարությունների տարբերաստիճանները:

Ելնելով վերոհիշյալից նպատակահարմար է ներկայացնել հայերենում և անգլերենում նորմատիվ և իրադրային քերականության առանձնահատկությունները, որտեղ ակնհայտ են միջլեզվային և ներլեզվային քերականական ներթափանցման բազում դրսևորումներ: Ի դեպ պետք է նշել, որ մասնագիտական լեզվաբանական գրականության մեջ իսպառ բացակայում են նմանատիպ հետազոտություններ, ինչի վրա մենք կարող էինք հենվել: Այդ հանգամանքը էապես դժվարացրել է զուգադրական վերլուծության ընթացքը:

Մասնագիտական կողմնորոշման դասընթացում օգտագործվող մերօրյա դասագրքերի ընթերցելու և ունկնդրելու համար նախատեսված բնագրային տեքստերում կարելի է հանդիպել բազմաթիվ իրադրային քերականական տարրերի, նորաբանությունների, նոր արտահայտությունների և դարձվածների: Ուսանողին հանձնարարվում է հատուկ ուշադրություն դարձնել դրանց վրա, նկատել, գտնել, փորձել թարգմանել՝ հաղորդակցման ընթացքում ճիշտ կիրառելու նպատակով:

Դիտարկված տարաբնույթ խոսույթներներից, ինչպես նաև օգտագործվող դասագրքերից դուրս բերված մի քանի տասնյակի հասնող իրադրային քերականական կառույցները հնարավորինս համեմատվել են հայերենի նմանատիպ օրինակների հետ և արվել համապատասխան եզրակացություններ: Առավել բնորոշները տեղ են գտել հայ տրոշման թեստավորման առաջադրանքների մեջ:

Այս պիսոսով, միջլեզվային փոխներթափանցման պատճառ կարող է դառնալ բառակարգի փոփոխությունն անգլերենում և հայերենում: Իրադրային-խոսակցական անգլերենում հաճախ կարելի է հանդիպել .

1. **Բառերի ճկուն և շարադասություն** (բառակարգ), հայերենի նման: Տեղի պարագան կարող է դրվել անջատական հարցից հետո, օրինակ՝ “You saw her, the author of the book, didn’t you, in the club?”

Դու տեսար չէ՞ նրան՝ գրքի հեղինակին, ակումբում:

2. **Եզակի թվով գոյական** չափման հոգնակի միավորից հետո: He’s about six foot tall.

Նամոտվեց ոտնաչափ հասակ ունի:

Չայերենում գոյականը միշտ դրվում է եզակիով չափման միավորներից հետո:

վեց ոտնաչափ – six foot

3. **Կրկնակի ժխտում**

He won’t be late, I don’t think.

Նա չի ուշանա, չեմ կարծում:

Կրկնակի, նույնիսկ եռակի ժխտումն ընդունված է բանավոր և գրավոր հայերենում:

Օր. Այդ մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: (Nobody knew anything about it).

4. **Տրոհված անորոշ դերբայ (Infinitive)**

E.g. I had to put the phone down and phone up again *to actually speak* to a human.

Չայերենում հնարավոր չէ տրոհել անորոշ դերբայը, քանի որ այն չբաժանվող բառ է:

5. **Շարունակական բայածների կիրառում վիճակ արտահայտող (stative) բայերի հետ**

“So your new film. When will we be seeing that?”

“Will you be needing anything else?”

“I was wondering if you could recommend a restaurant”, etc.

Մինչդեռ, հայերենում չկան ման տարբերակում:

6. **Will/won’t, could, would և այլ ձևերի կիրառում** պայմանական նախադասությունների **if (եթե)** մասում՝ արտահայտելու քաղաքավարի դիմում, խնդրանք, մերժում կամ բարկություն:

Imagine the reality if you will. (Պատկերացրեք իրականությունը, եթե կկարողանաք:)

I would be grateful if you would send me information. (Ես երախտապարտ կլինեի, եթե ուղարկեիք ինձ տեղեկատվություն:)

Հայերենում հնարավոր է այդ կառույցի կիրառումը, եթե այն պայմանավորված է իմաստով:

7. **Խոսակցական կրճատձևերի** օգտագործում, ինչպիսիք են՝ gonna (going to), պատրաստվել անել, wanna (want to) ցանկանալ և այլն: Այս բառերը չունեն համարժեքներ հայերենում:

Երբեմն անհրաժեշտություն է առաջանում ստեղծել համապատասխան եզրույթներ, որոնք կամ չեն եղել կամ հանդես են եկել այլ անվանումներով: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում **Նախադասության սկզբում՝** ձախ տեղակայում և **Նախադասության վերջում՝** աջ տեղակայում (headers and tails) կոչվող գոյականական բառաակապակցությունները, որոնց դերը զրուցակցին ճիշտ կողմնորոշելն է տվյալ իրավիճակում: Այս երևույթն ընդունված է և՛ հայերենի և՛ անգլերենի բանավոր խոսքում:

8. **Ձախտեղակայում (headers) և աջ տեղակայում (tails)**

My friend, Tigran, his sister has just immigrated into Armenia.

Իմ ընկերը՝ Տիգրանը, նրաքույրն է վերադարձել Հայաստան:

9. **Իրադրային զեղչումներ և նախադասության զեղչված անդամները** երկու լեզուներում էլ բանավոր հաղորդակցության անբաժանելի մաս են կազմում, բայց եթե հայերենում երևույթն ընդունված է և համարվում է ճիշտ, ապա անգլերենում դա միայն խոսակցական է: Ամբողջական նախադասությունների հետ միասին զրույցի ժամանակ նույնքան արժեքավոր են առանձին բառերը, բառակապակցությունները, ինչպես նաև երկրորդական նախադասությունները, որոնք երբեմն գլխավոր նախադասությունից շատ հեռու են:

Finished? (Վերջացրե՞լ ես:) Coming? (Գալի՞ս ես:)

10. Խոսելիս կամ գրելիս, մենք ոչ միայն ինֆորմացիա ենք հաղորդում, այլ նաև մեր վերաբերմունքն ենք արտահայտում զանազան **եղանակավորող բառերի** օգնությամբ: Վերջիններս համարվում են ինտերակտիվ տարրեր, որոնք կամուրջ են դառնում կանխադրույթի և խոսողի կամ գրողի իրական մեկնաբանության

միջև: Անգլերենում այս երևույթը բնորոշ է ցանկացած տեսակի խոսույթին, հայերենում և ռուսերենում եղանակավորող բառերի թիվը կտրուկ պակասում է՝ (Y. Mkhitaryan 2011): Օրինակ՝

I **personally** don't like it. I **do** think it's a bit... it's very over the top and very, very, very bright, **but actually**, in the same breath I like to see people and **heartily** admire anybody who could wear that.

(Ինձ անձամբ դուր չի գալիս դա: Ես իսկապես կարծում եմ, որ դա շատ արտառոց է և շատ ցայտուն, բայց իրականում, միևնույն ժամանակ ինձ դուր է գալիս, երբ տեսնում եմ այդպիսի մարդկանց: Ես սրտանց հիանում եմ նրանցով, ովքեր կարող են հագնվել այդպես):

11. **Անորոշողություն** **արտահայտող** **պարզաստի**
կադապրույթները (phrasal chunks), խոսույթային նշույթները
(discourse markers) բնորոշ են առօրյա զրույցների՝ thing, stuff, or so, like, or something, or anything, and so on, or whatever, kind of, sort of, more or less, I mean, you know, by the way, etc. (բանը, մոտավորապես, նման, ոնց-որ, ինչ-որ, ինչ էլ որ, մի տեսակ, քիչ, թե շատ, ու գուցե)

12. **Կրավորական կառույցների զգալիորեն քիչ կամ get-ով (get-passive)** կիրառում be-passive-ի փոխարեն, երբ խոսքը գնում է պատահական, անսպասելի գործողությունների կամ դժվար գործընթացի մասին:

Օրինակ՝

I'm late, because I got stuck in the traffic. Կամ՝ He finally got his novel published.

Չայ երենում չկա (not found in Armenian):

13. **Փոխակարգողություն (Կոնվերսիա)**, որի ժամանակ մի խոսքի մասը փոխվում է մեկ այլ խոսքի մասի շատ տարածված է իրադրային կառույցներում: Պետք է նկատել, որ այս երևույթը դարձել է ավելի ընդգրկուն և ոչ միայն բայն է դառնում գոյական, կամ հակառակը (to minute, to text, to email, a download), այլ նաև նախդիրը կամ ածականը՝ բայ (to up, to wrong), կապը, մոդալ բայը, նախդիրը և ածականը՝ գոյական (a big if, ups and downs, a must; Would you come to a close please?) և այլն: Ավելի ին՝ դարձվածքները հաճախ դառնում են բաղադրյալ ածականներ, ինչպես օրինակ՝ a good-for-nothing brother of his (անպիտան եղբայր), two for-the-price-of-one (երկուսը մեկի գնով ապրանք), a fly-on-the-wall documentary (աննկատ

նկարահանված փաստագրական ֆիլմ), state-of-the-art construction(ժամանակակից շինություն) և այլն:

Հայերենն այս առումով նույնպես տարբերվում է, որովհետև մեր լեզվում անընդունելի է այսպիսի բառակազմությունը՝ լավ ոչինչի համար եղբայր, ճանճ պատի վրա փաստագրական ֆիլմ և այլն:

14. **Գոյականների հաջորդական կիրառում** նոր հասկացույթներ արտահայտելու համար: Սեռական հոլովով դրված կամ of-ով արտահայտված գոյականները իրենց տեղը զիջում են Գոյական+Գոյական (N+N) կառուցվածքին, որոնք դառնում է ինֆորմացիա հաղորդող ամփոփ կառույցներ, օրինակ՝ distance learning, floor board, ocean floor, dinosaur bones, group sessions, games centre, bank nsurance system, etc. Հայերեն թարգմանելիս անհրաժեշտություն է առաջանում առաջին գոյականը դնել կամ սեռական հոլովով կամ համապատասխան ածականի կիրառումով՝ հեռավար ուսուցում, հատակի տախտակ, օվկիանոսի հատակ, դինոզավրի ոսկրեր, խմբակային հավաքներ, խաղային կենտրոն, բանկային ապահովագրական համակարգ և այլն):

Ավելի երկար հաջորդականություններ նույնպես հնարավոր են՝ Yerevan State University Philology Chair-ը Chair of Philology of Yerevan State University-ի փոխարեն հայերենում այս կառույցները հնարավոր են բացառապես հոլովածների միջոցով:

15. **Հավանություն արտահայտող** դարձվածքներ (backchannels) և մտածելու, միտքը ձևակերպելու (fillers) ժամանակ արտաբերած հնչյուններ:

16. **Անուղղակի խոսքում շատ քննող նվաճ** բայց որևէ տեղ չուսուցանվող այս կառույցը հստակ խնդիր է լուծում՝ առանց ուղղակիորեն մեջբերելու ամփոփում է ուրիշի խոսքը (McCarthy (1998:161–2), օրինակ՝

The teacher was just telling the students that they’ve made a lot of mistakes in their written work.

(Ուսուցիչը պարզապես ասում էր ուսանողներին, որ նրանք շատ սխալներ են արել գրավոր աշխատանքում:)

17. **Հազվելի գոյականի հետանհաջվելի քանակական որոշակի**՝ little (քիչ) –ի կիրառումը նույնպես հնարավոր է բանավոր և գրավոր խոսքում: Օրինակ՝

There were less cars in this parking lot, than usual.

(Ավտոկանգառում սովորականից քիչ մեքենաներ կային):

18. **Հիմնական ձևերի՝ նորպես**

երկրորդական (վերջածանց) հանդես գալը պայմանավորված է անգլերենի ածանցների համադրելիության և նոր բառեր ստեղծելու հսկայական ներուժով, ինչպես՝ -led (English-led անգլիացիների կողմից վերահսկվող), -free (stress-free սթրեսից զուրկ), -conscious (health-conscious առողջությանը շատ մտահոգվող), -wise (money-wise ինչ վերաբերում է փողին) և այլն:

Անգլերենում նույն գործողությունը կարող է ներկայացվել մի քանի ժամանակային ձևերով, որոնք խոսակցական քերականության մեջ նույնպես հաստատուն չեն, իրադրային են, ենթատեքստային և այլն:

Նույնը վերաբերում է ներլեզվական փոխներթափանցմանը, քանի որ իրադրային քերականության շրջանակներում շատ բազմիմաստ կառույցներ կորցնում են իրենց արդիականությունը:

Օրինակ՝ Present Simple, Present Continuous, Past Simple, Present Perfect, Past Simple և Past Perfect ժամանակաձևերը հայերենում կարող են ունենալ իրենց համարժեքները, իսկ որոշ դեպքերում վերջիններս բացակայում են, քանի որ հայերեն կառույցներին բնորոշ չէ նշված տարբերակումը:

Նույնը վերաբերում է *do, have և get* բայերին, որոնք մի իրադրությունում դրսևորվում են որպես օժանդակ, մեկ այլ խոսքային իրադրությունում՝ որպես լիիմաստբայեր:

Հայերեն և անգլերեն քերականական կառույցները չեն համընկնում հատկապես տարածական նախդիրների կիրառման ժամանակ: Քննարկենք օրինակ **get** բառը տարբեր նախդիրների համակցությամբ:

- 1. **to get at**
 - to get at -հասնել
 - to get at the truth — հասնել ճշմարտությանը
 - what are you getting at? — Ի՞նչ եք ակնարկում
 - just let me get at him! — Միայն թույլ տվեք նրան հասնել:
- 2. **get to** հասցնել վատ վիճակի He started crying — we were getting to him

3. **get up**

1) վեր կենալ

I hate getting up early. — Չեմ սիրում վաղ արթնանալ :

2) ուժգնանալ

There's a wind getting up. I hope the boats are safe.

Քամին գնալով ուժգնանում է: Հուսով եմ նավերն ապահով են:

3) to get oneself up — լավ հագնվել

Mary got herself up in a nice new dress.

Ակնհայտ է, որ քերականական և բառային խոսակցական ձևերը տրված օրինակներով յուրացվում են միասին, և համապատասխան իրական իրադրությունները օգնում են ուսանողներին կռահել տվյալ լեզվակաղապարների իմաստը:

Նույնը վերաբերում է **get through** բառակապակցությանը, որը նշանակում է՝

ա) քննությունն հաճնել :

How many of your students got through? — Քանի՞ ուսանող են հանձնել քննությունը:

բ) օրինագիծը անցնել նշանակությունը յուրացնելու համար բավարար է ներկայացնել բառակապակցությունը ճիշտ ենթատեքստում՝

We should have no difficulty getting the new law through; it has been demanded by the public for some time.

Պետք է որ դժվարությունն չուներանք օրինագիծն անցկացնելու հարցում: Դրապահանջը ժողովրդի շրջանում որոշ ժամանակ է կա:

Սակայն՝ գ) ավարտել իմաստը *Phone me when you get through (with the article), and we'll have dinner together.* — *Հանգիր, երբ ավարտես հոդվածը, կճաշենք միասին:*

Այստեղ *get through* նշանակում է ավարտել, և այն արդյունավետ է ոչ թե ըստ ենթատեքստի, այլ իրական խոսքային իրադրությունների մոդելավորման միջոցով:

Քերականական կառույցների իրադրային ուսուցումն արդյունավետ է օրինակ՝

Jim gets through a lot of beer while watching football on television every Saturday.
Նախադասության թարգմանության օրինակով, որտեղ նշված

բառակապակցությունը նշանակում է դ) խմել՝ Ջիմը շաբաթ օրերին
ֆուտբոլ նայելիս շատե գարեջուր խմում:

Առանձնանում է՝

ե) get through with հարցերը լուծել բառակապակցությունը, որի
իմաստը կարելի է բացահայտել թե ենթատեքստի, թե իրական
իրադրություն կիրառմամբ՝

Wait till I get through with you, your own mother won't recognize you!

*Սպասիր, քո հարցերն այնպես լուծեմ, որ հարազատմայրդ էլ
չճանաչի:*

Կարևոր է նշել, որ իրադրային ուսուցումը օգնում է
սովորողներին արագ մտապահել ուսուցանվող քերականական
երևույթները: Օրինակ՝

զ) get out – դժվարություններ արտասանել, արտահոսք լինել,
տարածվել, հայտնի դառնալ /գաղտնիքը/

If word got out now, a scandal could be disastrous...

*Եթե որևէ տեղից ինֆորմացիայի արտահոսք լինի, սկանդալն
աղետալի կլինի:*

Syn: bring out, filter out, leak out:

Ակնհայտ է, որ միայն բազմաբնույթ, տարաբնույթ իրական
խոսքային իրադրությունների ներմուծումը կարող է տալ ցանկալի
արդյունք: Պարզ է, որ How can I get out of the habit of smoking? կարելի է
հասկանալ առանց իրադրության: Սակայն դրա հոմանիշների
ուսուցումը հնարավոր չէ պատկերացնել առանց համապատասխան
իրադրությունները ուսումնական պայմաններում կադապտելու՝

*Syn: be off, bog off, bugger off, buzz off, clean out, clear off, clear out, fuck off, get off,
hop off, piss off, push along, sod:*

Տիպական օրինակ է՝ *The picnic is off. Նախադասությունը, որը
նշանակում է՝ խնջոյք չի լինելու: Ավելի դժվար է հասկանալ In
case of a tie all bets are off — Ոչ ոքիի դեպքում, բոլոր խաղադրույքները
չեղյալ են համարվում:*

Անգլերեն նախդիրների յուրացման դժվարությունները
ընդգծվում են, երբ դրանք դիտարկում են ներլեզվային և
միջլեզվային փոխներթափանցման տեսանկյունից, և միայն տարբեր
իրական խոսքային իրադրությունների վերամոդելավորմամբ

հնարավոր է ամրապնդել ներմուծած բառակապակցության և քերականական երևույթի նշանակությունը:

Նույնը վերաբերում է քերականական կաղապարույթների յուրացմանը: Օրինակ՝ *It's not off yet—Ամեն ինչ դեռ ուժի մեջ է:*

Չնայած հայերենում նույնպես առկա է հոդի քերականական կատեգորիան, սակայն գործառական մակարդակում վերջինս ոչ միշտ է համընկնում: Ինչ վերաբերում է անգլերենում օժանդակ բայերի կիրառմանը, ապա թե՛ նորմատիվ, թե՛ իրադրային քերականության մակարդակներում մենք գործ ունենք միջլեզվային փոխներթափանցման հետ:

Օրինակ՝ անգլերեն ողջունելու շատ ձևեր հայերենում համարժեքներ չունեն: Քերականական փոխներթափանցում է առաջացնում *How do you do?:* Նույնը վերաբերում է *Sir, Madam* դիմելի ձևերին: Գործաբանական փոխներթափանցման վառ օրինակ է հարցականի որոշ ձևեր՝ «*Would you like...? Կամ «վիրավորական՝ You stupid idiot!* (հաճախսիրով է ասվում)» (ԼԻԻՅ 2005: 136):

Անգլերենի քերականական նվազագույնի ուսուցումը պահանջում է մեթոդական տիպականացման հիմնախնդիրների զուգադրական վերլուծություն՝ սահմանելու քերականական երևույթների համընկնող և տարբերակվող ոլորտները:

Սակայն իրադրային քերականության ուսուցման յուրահատկություններից ելնելով պետք է ընդունել, որ անգլերենի և հայերենի քերականությունների տիպաբանական գիտելիքները միշտ չէ, որ կարող են նպաստել ուսանողների համապատասխան հմտությունների ձևավորմանը: Դրական է այն, որ օտար լեզուների ֆակուլտետներում զուգահեռաբար կիրառվում են անգլալեզու երկրներում ստեղծված դասագրքեր, որոնք պարունակում են իրադրային քերականության ուսուցման առաջադրանքներ: Այնուհանդերձ, կտրված լինելով անգլախոս միջավայրից իսկապես շատ դժվար է զգալ, առավել ևս կիրառել նորմատիվ քերականությունից շեղում համարող ոչ սակավ իրադրային քերականական կառույցները բանավոր հաղորդակցման ընթացքում:

Տարբեր լեզվական համակարգերի հակադրումն արդյունավետ է նորմատիվ քերականական կառույցների յուրացման գործընթացում: Սակայն, անգլերեն խոսակցական կառույցները նպատակահարմար է համեմատել մի կողմից՝ հայերենի, մյուս կողմից՝ անգլերենի նորմատիվ քերականական կառույցների հետ: Քերականության ուսուցման նախնական մակարդակում նպատակահարմար է բացահայտել «համեմատվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունները, առ այն, որ վերջինս բացահայտում է համեմատվող լեզուների նմանությունները և տարբերությունները» (А.П. Зеленецкий 1983:90, В. Д. Аракин:1985):


Գծապատկեր



2.

Այսպիսով, տիպաբանական համեմատությունը մեթոդական առումով ավելի մեծ ներուժ ունի նորմատիվ քերականության ուսուցման գործընթացում: Իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է թե՛ նորմատիվ, թե՛ իրադրային քերականական կառույցների գործածություն:

Գծապատկեր 3.




Խնդիր է դրվում բացահայտել ոչ միայն այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս երկու լեզվի քերականական կառույցների երևույթների փոխերթափանցման ընթացքում, այլ այն դժվարությունները, որոնք բխում են ներլեզվային քերականական փոխերթափանցման ընթացքում, այսինքն՝

1) մայրենի կամ առաջին լեզուն բացասական կամ դրական ազդեցություն է ունենում թիրախային լեզվի քերականության ուսուցման վրա,

2) թիրախային լեզվի նորմատիվ և խոսակցական լեզվակապարները բացասական ազդեցություն են ունենում միմյանց վրա:

Գծապատկեր 4.



Մեթոդական տիպականացման տեսանկյունից կարևոր է այն, որ ուսանողները հաղթահարեն ոչ միայն միջլեզվական, այլև ներլեզվական քերականական փոխներթափանցման դրսևորումները: Խնդիրն ավելի է բարդանում, երբ ներլեզվական փոխներթափանցման դրսևորումները դիտարկվում են ոչ միայն ձևավորանական, շարահյուսական, այլ նաև իմաստաբանական, տրամախոսական մակարդակներում, հաշվի առնելով այն փաստը, որ անգլերենը համարվում է վերլուծական, իսկ հայերենը՝ կցական կառուցատիպի լեզուն՝ զարգացած թեքական համակարգով և վերլուծական տարրերով:

Կարևոր է նշել, որ այստեղ խոսք չի գնում նորմատիվ կամ իրադրային քերականության ուսուցման մասին: Այստեղ խոսք է գնում այն մասին, որ իրադրային քերականության ուսուցումը նպաստում է թե՛ նորմատիվ, թե՛ խոսակցական քերականության յուրացմանը, նորմատիվ քերականության հիման վրա խոսակցական քերականության առանձնահատկությունների բացահայտմանը: Նորմատիվ քերականության ուսուցումը չի կարող արդյունավետ լինել միայն ձևաբանական կամ շարահյուսական մակարդակներում, և միայն իրադրային քերականության ուսուցումը կարող է հնարավոր դարձնել քերականության ընկալողական և արտադրողական հմտությունների ձևավորման գործընթացը:

Մեթոդական տիպականացման տեսանկյունից կարևոր է և այն, որ անգլերենում հաճախակի կիրառվող շատ քերականական կառույցներ հայերենում կարող են օգտագործվել հազվադեպ կամ չօգտագործվել: Օրինակ՝ ըղձական եղանակը գրավոր խոսքում կարող է օգտագործվել հետևյալ հանգամանքներում՝

1. If-ով սկսվող անիրական պայման արտահայտող նախադասության մեջ,

"If I *were* two-faced, would I be wearing this one?" (Abraham Lincoln)

2. Անիրական ցանկություն արտահայտող նախադասության մեջ,

"At that moment, I had the most desperate wish that she *were* dead."

(Harrison Ford as Rusty Sabich in *Presumed Innocent*, 1990)

3. *That* երկրորդական նախադասու թու ններու մ` *ask, demand, insist, propose, request, suggest* բայ երից հետո

"I demand that he *leave* at once."

4. Յետևյալ ածականներից` *advisable, essential, necessary, desirable, preferable* և հետևյալ գոյականներից *decision, insistence, demand, requirement, condition* հետո

"It's necessary that she *be* in the room with you."

5. Որոշակի դարձվածքներից հետո .
as it were, be that as it may be, far be it from me, if need be, so be it, suffice it to say, come what may, Heaven forbid.

6. Այլ օրինակներ և դիտարկումներ .

- "I wouldn't bring up Paris if I *were* you. It's poor salesmanship."

(Humphrey Bogart as Rick in *Casablanca*, 1942)

- "Even the dog, an animal used to bizarre surroundings, developed a strange, off-register look, as if he *were* badly printed in overlapping colors."

(S.J. Perelman, quoted by Roy Blount, Jr., in *Alphabet Juice*, 2008)

- "Well sir, all I can say is if I *were* a bell, I'd be ringing!"

(Frank Loesser, "If I Were a Bell." *Guys and Dolls*, 1950)

- "If music *be* the food of love, play on."

(William Shakespeare, *Twelfth Night*)

- "The public *be* damned."

(William Henry Vanderbilt, Oct. 8, 1882)

- "If I see one more shirttail flapping while I'm captain of this ship, woe *betide* the sailor; woe *betide* the OOD; and woe *betide* the morale officer. I kid you not."

(Humphrey Bogart as Lt. Commander Philip Francis Queeg in *The Caine Mutiny*, 1954)

- If there *were* a death penalty for corporations, Enron may have earned it.
- "In the night he awoke and held her tight as though she *were* all of life and it was being taken away from him."

(Robert Jordan in *For Whom the Bell Tolls* by Ernest Hemingway, 1940)

- The **Were**-Subjunctive

If I were a rich man, could be such a mood. (It refers to something that is not possible).

Մեթոդական տիպականացման տեսանկյունից նպատակահարմար է ներկայացնել ընդձայնական եղանակի այն ձևերը, որոնք բնորոշ են անգլերենի խոսակցական լեզվին և համեմատել դրանք նորմատիվ քերականական տարբերակների հետ: Ընդ որում, կարելի սկզբում ներմուծել օրինակները, հետո տալ կանոնը, կամ՝ հակառակը.

Անցյալ ընդձայնանը *to be* բայի կարող է ունենալ նաև *were* ձևը բոլոր դեմքերի եզակիի և հոգնակիի համար: Ներկա ընդձայնանը հազվադեպ է օգտագործվում ժամանակակից խոսակցական բրիտանական անգլերենում: Դաավելի շատ բնորոշ է պաշտոնական փաստաթղթային լեզվին՝ միջազգային պայմանագրերին, պեզիային և միշտ քարացած արտահայտությաններին:

Long live the King! – Կեցցե՛ թագավորը:

Be it so! – Թող այդպես լինի:

Far be it from me to contradict you! – Անգամ մտքերով չեմ հակադրվում քեզ:

God bless you! – Աստված թող քեզ օրհնի:

God Bless America! – Աստված պահպանի Ամերիկան:

Ամերիկյան անգլերենում ներկա ընդձայնանը լայնորեն օգտագործվում ժամանակակից խոսակցական անգլերենում:

She insisted that they drink to her health.

Իսկ անցյալ ընդձայնանը լայնորեն կիրառվում է և՛ բրիտանական անգլերենում և՛ ամերիկյանում: Օրինակ՝ պայմանական նախադասության կիրառության նախադասության ներքինում:

Խնդիրն այն է, որ ուսանողները բավականին լավ են ուսումնասիրել անգլերեն նորմատիվ քերականական կառույցները և անհրաժեշտության է առաջանում՝ ուսումնական պայմաններում համեմատել պաշտոնական և ոչ պաշտոնական կառույցները, խոսքային վարվեցողության բառերը և այլն:

Իրադրային քերականության ուսուցումը հնարավորություն է ընձեռում քերականական կառույցների ոճական տարբերությունները բացահայտել իրական խոսքային իրադրություններում:

Ստարվիկը և Լիչը բերում են հետյալ օրինակը՝

“Shut the door, will you? (familiar)

Would you please shut the door? (polite)

I wonder if you would mind shutting the door? (more polite)” (G. Leech and J. Svartvik 2002:14):

Հասկացու թյ ու ննե թի մակարդակում հայալեզու ուսանողները բավականին լուրջ խնդիրներ ունեն, հատկապես երբ խոսք է գնում տարբեր իրական իրադրություններում խոսակցական անգլերենի քերականական կառույցների ուսուցման: Օրինակ՝ ոչ պաշտոնական հապավում համարվող բառերը, որոնք գործածվում են խոսակցական լեզվում, օրինակ՝ wanna:

You wanna call him or something?

Հատկանշական է այն, որ լեզվակիրները անգամ պաշտոնական ելույթներում կարող են գործածել wanna, gonna, gimme, gotta, kinda, whatcha, ya և այլն: Ինչպես հայտնի է հապավումների նշված դրսևորումները բնորոշ են հատկապես ամերիկյան անգլերենին, որը շոշափելի ազդեցություն ունի անգլերենի, ինչպես նաև այլ լեզուների վրա: Ակնհայտ է, որ առանց ենթատեքստի կամ իրադրության ցանկացած ուսանող հասկանում է “Whatcha going to do?”, Whatcha gonna do?What are you going to do? որոնք նորմատիվ ձևի հապաված տարատեսակն է: Քերականական տիպականացման տեսանկյունից կարևոր է այն, որ հայերենում հարցական ձևը կազմելիս օժանդակ բայ չի գործածվում: Նույն նախադասության խոսակցական ձևը նույնպես շարահյուսական մակարդակում չունի հայերեն համարժեքը: Սակայն օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները հարցական ձևը կազմելու խնդիր չունեն: Նրանք իրական իրադրություններում ոչ միշտ են ընկալում քերականական բնույթի հապավումները:

Օրինակ՝

Do you want a beer? Do you wanna beer? D'ya wanna beer?Ya wanna beer?Wanna beer?

Քերականական բնույթի հապավումների ուսուցումը կարևոր պայման է իրադրային քերականության ուսուցման համար, քանի որ լինելով պարզեցված քերականական կառույցներ, նրանք դժվարություն են ներկայացնում նախ և առաջ հնչյունաբանության մակարդակում՝

• ain't = am not/are not/is not ` (չ եմ, չ ես, չ ի, չ եսք, չ եք, չ ես-ի փոխարեն միայն 1բառ)

I ain't sure. You ain't my boss.

• ain't = has not/have not

I ain't done it. She ain't finished yet.

• gimme = give me

Gimme your money. Can you gimme a hand?

• gonna = going to

Nothing's gonna change my love for you. I'm not gonna tell you.

• gotta = (have) got a

I've gotta gun. I gotta gun. She hasn't gotta penny. Have you gotta car?

• kinda = kind of

She's kinda cute.

• lemme = let me

Lemme go!

• wanna = want to

I wanna go home.

• wanna = want a

I wanna coffee.

• whatcha = what are you

Whatcha going to do?

• whatcha = what have you

Whatcha got there?

• ya = you

Who saw ya?

Մի կողմից՝ օտար լեզվի ֆակուլտետի ուսանողները պիտի կարողանան յուրացնել անգլերեն քերականական երևույթները, համեմատելով դրանք հայերեն և անգլերեն համապատասխան կառույցների հետ: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հստակորեն տարաբանել հաղորդակցական ներուժ ունեցող ժամանակակից քերականական կառույցները հնացած, հնաճ, ժամանակակից կենդանի անգլերեն խոսքում համարյա չգործածվող քերականական

ձևերից, և խոսքասերման գործընթացը կազմակերպել՝ հաշվի առնելով ասվածը:

Այս ամենի ներմուծումը լեզվի ուսուցման գործընթացում մեծապես կնպաստի ուսանողի իրական լեզվի տիրապետման մակարդակը բարելավելու և բանավոր խոսքը գրքային չհնչելու առումով:

Այսպիսով, գուգադրական համեմատության արդյունքում հնարավոր դարձավ համադրել մի շարք քերականական երևույթներ հայերենում և անգլերենում՝ վերջիններիս միջլեզվական և ներլեզվական փոխներթափանցման դաշտը ուրվագծելու նպատակով: Ըստեռության հենց ներթափանցմամբ սահմանված գոտիները հանդես են գալիս որպես դժվարությունների սկզբնաղբյուր, ինչի մասին վկայում են ուսանողների տիպական սխալները:

Վերոնշյալ ենթադրությունը ապացուցելու համար անհրաժեշտ էր անցկացնել հայտորոշման թեստավորում:

2.2. Ուսանողների անգլերենի իրադրային քերականության հայտորոշիչ թեստավորում և տիպական սխալների վերլուծություն

Յենվելով գուգադրական վերլուծության տվյալների վրա՝ իրադրային քերականական մեխանիզմների ձևավորման նպատակով անհրաժեշտություն ծագեց անցկացնել հայտորոշիչ թեստավորում՝ ուսանողների տիպական սխալները դուրս բերելու և սահմանելու նպատակով: Յայտորոշման նպատակն է բացահայտել ուսանողների այն տիպական սխալները, որոնք «ազդանշան» են տալիս ռեալ դժվարությունների մասին:

Այսպիսով, մասնագիտական դասընթացում ուսանողների իրադրային քերականական գիտելիքների մակարդակի հայտորոշմանն ուղղված թեստավորումը բաղկացած է այն առաջադրանքներից, որոնք խոչընդոտում են կենդանի խոսքի քերականորեն ճիշտ հաղորդակցման ձևավորմանն ու հետագա զարգացմանը: Ընդ որում, յուրաքանչյուր առաջադրանք իր մեջ ներառում է ինչպես նորմատիվ, այնպես էլ խոսակցական քերականական տարրեր:

Թեստերի անցկացման ժամկետը` 2011-2012 ուս.տ. հոկտեմբեր, 2012-2013 ուս.տ. ապրիլ, 2013-2015 ուս.տ. մարտ, ապրիլ, նոյեմբեր:

Թեստերի անցկացման վայրը` ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի 3-րդ և 4-րդ կուրսերում («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ)

Հայ տրոնշիչ թեստավորման մասնակիցների ընդհանուր թիվը` 383 ուսանող, որոնցից 152-ը` երրորդ, իսկ 231-ը` չորրորդ կուրսի ուսանողներ էին:

Աշխատանքներն անցկացվել են հավասար պայմաններում. առաջինից 5-րդ առաջադրանքների կատարման համար տրվել է 80 րոպե, 6-ի կատարման համար` 20րոպե:

Հայ տրոնշիչ թեստավորման քերականական նյութը բաղկացած էր վեց առաջադրանքից`

1. *առաջադրանք 1* – տարբեր բայական ժամանակածևերի և կերպի իմացությունն ստուգում` (շարունակական, վաղակատար, ապառնի)
2. *առաջադրանք 2* –բառակարգի իմացությունն ստուգում (ծախ և աջ տեղակայումներ, տրոհված անորոշ դերբայ, մակբայի տեղադրում և այլն)
3. *առաջադրանք 3* – քերականական կառուցվածքների (ներգործական և կրավորական սեռերի, հոգնակի թվի գործածություն) իմացությունն ստուգում
4. *առաջադրանք 4* – ձևաբանություն (խոսքի մասերի) իմացությունն ստուգում, տարածական նախդիրների կիրառման ստուգում
5. *առաջադրանք 5*- խոսակցական կաղապարոյթների իմացությունն ստուգում
6. *առաջադրանք 6* –հաղորդակցական կարողությունների ստուգում երկխոսության, հարցու պատասխանի, դերախաղի կամ գրավոր աշխատանքի միջոցով (գրավոր նյութը դարձնել խոսակցական և հակառակը):

Առաջադրանքները`

Առաջադրանք 1

Տեղադրել փակագծերով տրված բայերը ճիշտ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նախադասության կառուցվածքը:

1. How can I be expected to work if you constantly _____ (interrupt).
2. We _____ (wonder) if you could recommend a good restaurant.
3. Unfortunately, I fell asleep in the sun and my shoulders _____ (burn).
4. I _____ (hope) you might help me with this application form. (polite request)
5. In a few years time we _____ (regularly/talk) on video screens instead of telephones.

6. We _____ (not/have) this much fun for ages.
7. If you _____ (know) they were not coming, you shouldn't _____ (bother).
8. It's inevitable that some things _____ (break) when you move house.
9. You're covered in white paint. What on earth _____ (you/do)?
10. _____ (you/hear) the joke about the man and the dog?

Առաջադրանք 2

Տրված բառերը շարադասել նախադասությամբ սեպով:

1. far, more, experiment, properly, and, Doing, planning, thought, the, requires.
Doing _____

2. than ,I'm, better, I, to be, slightly, used, paid.
I'm _____

3. We, to sell, the, immediately, house, decided.
We _____

4. The, highly, company, comes, recommended.
The _____

5. Rarely have seen before I such a thing

Rarely_____

Առաջ աղբյուր 3

Կարդալ էլ . փոստը, գրել բայ աճները ներգործական կամ կրավորական սեռով՝ հնարավորինս օգտագործել ով *impersonal you, we, they* դերանունները:

Hi Gill

Sorry, I (1)_____ (not be able) to come out last weekend but I (2)_____ (not/allow) out now for two weeks. The school (3)_____ (tell) my parents to watch me closely after they (4)_____ (catch) me playing truant. The head teacher said Mum and Dad (5)_____ (expect) to keep more control from now on - whatever that means. Hopefully, I (6)_____ (should / give) permission to meet you next weekend. Besides, my father (7)_____ (sent) away on a work trip and my mother always (8)_____ (let) me do what I want. How are you? (9)_____ you _____ (order) not to see me yet by your parents?

Առաջ աղբյուր 4

Տեղադրել փակագծերում տրված բառերը՝ ըստսեքստի բովանդակության:

It's not that I ⁰ dislike (LIKE) working in this office. That comment would be totally ¹ _____ (ACCURACY). There are a lot of things that I really like, for example the ² _____ (DEVELOP) programme, which is really ³ _____ (VALUE) in this profession if you want to get a promotion. What really makes me angry is the ⁴ _____ (RESPONSIBILITY) behaviour of some of the managers here. In recent years, this company has grown so large that we are now an ⁵ _____ (NATIONAL) company with offices in ten cities around the world. As well as being a large company, we are now a ⁶ _____ (CULTURE) company. However, many of the British-based managers don't seem to realise this and have made no effort to understand their foreign colleagues. This has resulted in a lot of ⁷ _____ (UNDERSTAND) and a feeling of ⁸ _____ (TRUST) in many offices. I'd like to think we can do something about this

but I think it is ⁹ _____ (LIKELY). Many managers, however, think such action is ¹⁰ _____ (NECESSITY) and we should only be concentrating on making a profit.

Առաջադրանք 5

Յեռնյալ դարձվածքները դասակարգել՝ ըստ հաղորդակցական մտադրույթի (բացատրույժույթ, մեկնաբանույթ, զգուշավորույթ, շեշտադրում, արդարացում, համաձայնույթ և անհամաձայնույթ, ախոսանք, կարեկցանք և այլն) **և հնարավորույթն սահմաններում ընդլայնել ցանկը:**

1. sort of
2. I mean
3. you know
4. plenty of
5. a little
6. basically
7. Actually
8. A great deal of
9. more or less
10. kind of
11. you know
12. stuff like that

Create vagueness	Modify an amount	Mark discourse structures
------------------	------------------	---------------------------

Առաջադրանք 6

Քննարկել հեռնյալ առաջարկը՝ կիրառելով իրադրային քերականական տարրեր: (թիմային համագործակցույթ (3-4 ուսանող):

Whether or not to replace the funfair in the centre of town with a new shopping centre.

Read your cards carefully and then hold the meeting. Use language to:

- a) ask polite questions
- b) put your points forcefully
- c) be diplomatic

STUDENT A:

You are supporting the shopping centre. You believe the funfair is old and makes the town centre look ugly. The new shopping centre will bring many jobs and provide a service to the whole city. It will also make you a lot of money as you own part of the land.

STUDENT B:

You are supporting the funfair. All of your children love going to the funfair in the summer and there is nowhere else for children to go. The only other option is a shopping centre where they waste their money and get bored. You think money should be spent to improve the funfair. You agree the town needs another shopping centre but it should be outside of the town.

STUDENT C:

You do not believe there should be a shopping centre or a funfair in the town, The funfair is too noisy and causes a lot of problems in the summer with crowds. The funfair is also old and ugly. A shopping centre will mean traffic problems. You think the land should be used to build a park as there are not enough quiet green places in the town.

STUDENT D:

You think that any project will be wasting the government's money. You think the land should be sold to a private developer and then the developer can decide what to build there. The funfair must go but anything else could be built there. You think the government should spend the money on public transport which is very bad in the town right now.

Նախաթե ստավորման արդյունքները ներկայացված են արդյունակներում և գնահատվել են՝ ճիշտ, թերի և սխալ պատասխաններով:

1. պատասխանը ճիշտ է, երբ առաջադրանքն ամբողջությամբ ճիշտ է կատարված,
2. պատասխանը թերի է, երբ առաջադրանքի կատարման մեջ առկա են որոշ բացթողումներ,
3. պատասխանը սխալ է, երբ առաջադրանքը քերականորեն սխալ է կատարված:

Առաջ ադրանքների կատարման երեք տարիների արդյունքներից ելնելով կարելի է ընդհանուր առմամբ եզրակացնել, որ միջին ունակություններով ուսանողները հիմնականում հաղթահարել են առաջինից չորրորդ առաջ ադրանքները, մասնավորապես՝

Աղյուսակ 1.

Առաջադրանք 1								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	40	30	15	47%	35%	18%
	4-րդ	92	50	27	15	54%	29%	16%
2012-2013	3-րդ	54	26	20	8	48%	37%	15%
	4-րդ	85	46	17	22	54%	20%	26%
2013-2014	3-րդ	13	6	2	5	46%	15%	38%
	4-րդ	54	25	12	17	46%	22%	31%
3 տ. արդյունք	3-րդ	152	72	52	28	47%	34%	18%
	4-րդ	231	121	56	54	52%	24%	23%

Առաջադրանք 1-ի կատարման արդյունքում ստացվել են հետևյալ վիճակագրական տվյալները. 3-րդ կուրսի ուսանողների 47% և 4-րդ կուրսի ուսանողների 52%-ը ճիշտ են գրել բայական ժամանակածևերը, թերի պատասխանները կազմել են ընդհանուր հաշվարկի 34% և 24%-ը, ամբողջովին սխալ պատասխաններ եղել են 18% և 13%-ի մոտ համապատասխանաբար: Սխալները գրանցվել են հիմնականում ապառնի և անցյալ շարունակական, վաղակատար ժամանակածևերի գործածության մեջ, որոնք հաճախ են օգտագործվում իրադրային քերականական կառույցներում:

Աղյուսակ 2

Առաջադրանք 2								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	47	12	26	55%	14%	31%
	4-րդ	92	50	18	24	54%	20%	26%
2012-2013	3-րդ	54	27	16	11	50%	30%	20%
	4-րդ	85	48	11	26	56%	13%	31%
2013-2014	3-րդ	13	6	3	4	46%	23%	31%
	4-րդ	54	32	9	13	59%	17%	24%
3 տ. արդյունք	3-րդ	152	80	31	41	53%	20%	27%
	4-րդ	231	130	38	63	56%	16%	27%

Առաջադրանք 2-ի ՝ բառակարգի իմացության ստուգման (ծախս և աջ տեղակայումներ, տրոհված անորոշ դերբայ, մակբայի տեղադրում և այլն) արդյունքում սխալները նկատվում են հիմնականում խոսակցական կաղապարների շարահատության մեջ, 3-րդ կուրսի ուսանողների 53% և 4-րդ կուրսի ուսանողների 56%-են ճիշտ գրել բայական ժամանակածևերը, թերի պատասխանները կազմել են ընդհանուր հաշվարկի 20% և 16%-ը, ամբողջովին սխալ պատասխաններ եղել են 27% և 27%-ի մոտ համապատասխանաբար:

Աղյուսակ 3

Առաջադրանք 3								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	47	13	25	55%	15%	29%
	4-րդ	92	50	14	28	54%	15%	30%
2012-2013	3-րդ	54	29	13	12	54%	24%	22%
	4-րդ	85	47	21	17	55%	25%	20%
2013-2014	3-րդ	13	5	3	5	38%	23%	38%
	4-րդ	54	31	14	9	57%	26%	17%
3 տ. արդյունք	3-րդ	152	81	29	42	53%	19%	28%
	4-րդ	231	128	49	54	55%	21%	23%

Առաջադրանք 3-ի ՝ ներգործական և կրավորական սեռերի կիրառման դժվարությունների հիմքում հայերենի՝ համադրական-կցական, իսկ անգլերենի՝ վերլուծական լեզու լինելն է: Ընդհանուր առմամբ սովորողները պատկերացնում են կրավորական կառույցները՝ 3-րդ կուրսի ուսանողների 53% և 4-րդ կուրսի ուսանողների 55%-ի մոտ գրանցվել են ճիշտ պատասխաններ, թերի պատասխանները կազմել են ընդհանուր հաշվարկի 19% և 21%-ը, իսկ ամբողջովին սխալ պատասխաններ եղել են 28% և 23%-ի մոտ համապատասխանաբար՝ դինամիկ *get-passive-ի* գործածության ժամանակ:

Աղյուսակ 4

Առաջադրանք 4								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	51	15	19	60%	18%	22%
	4-րդ	92	54	15	23	59%	16%	25%
2012-2013	3-րդ	54	33	9	12	61%	17%	22%
	4-րդ	85	57	18	10	67%	21%	12%
2013-2014	3-րդ	13	7	3	3	54%	23%	23%
	4-րդ	54	31	14	9	57%	26%	17%
3 տ. արդյունք	3-րդ	152	91	27	34	60%	18%	22%
	4-րդ	231	142	47	42	61%	20%	18%

Առաջադրանք 4-ի խոսքի մասերին վերաբերող վարժույթյան արդյունքները հետևյալն են. 3-րդ կուրսի ուսանողների 60% և 4-րդ կուրսի ուսանողների 61%-ի մոտ գրանցվել են ճիշտ պատասխաններ, թերի պատասխանները կազմել են ընդհանուր հաշվարկի 18% և 20%-ը, սխալ են պատասխանել ուսանողների 22% և 18%-ը համապատասխանաբար, սխալները գրանցվել են տարածական նախդիրների կիրառման ժամանակ:

Աղյուսակ 5.

Առաջադրանք 5								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	19	10	56	22%	12%	66%
	4-րդ	92	24	15	53	26%	16%	58%
2012-2013	3-րդ	54	11	9	34	20%	17%	63%
	4-րդ	85	22	15	48	26%	18%	56%
2013-2014	3-րդ	13	3	1	9	23%	8%	69%
	4-րդ	54	12	5	37	22%	9%	69%
3 տ. արդյունք	3-րդ	152	33	20	99	22%	13%	65%
	4-րդ	231	58	35	138	25%	15%	60%

Առաջադրանք 5-ի արդյունքներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ուսուցման գործընթացում ուսանողները թերացել են սովորել կամ քիչ օգտագործել ու հետևանքով մոռացել են հաղորդակցմանն այդքան անհրաժեշտ եղանակավորող բառեր, խոսու-թային նշույթներ և այլն: 3-րդ կուրսի ուսանողների ընդամենը 22%-ը և 4-րդ կուրսի ուսանողների 25%-ն են կարողացել ճիշտ կողմնորոշվել առաջադրանքը կատարելիս: Թերի են պատասխանել

ընդհանուր հաշվարկի 13% և 15%-ը, իսկ սխալ պատասխաններ են գրանցվել մեծամասնությամբ՝ 65% և 60%-ի մոտ համապատասխանաբար:

Աղյուսակ 6


Առաջադրանք 6								
Ուս. տարի	Կուրս	Ուսանողների քանակ				%		
		Ընդհ.	Ճիշտ	Թերի	Սխալ	Ճիշտ	Թերի	Սխալ
2011-2012	3-րդ	85	17	40	28	20%	47%	33%
	4-րդ	92	18	46	28	20%	50%	30%
2012-2013	3-րդ	54	10	26	18	19%	48%	33%
	4-րդ	85	20	42	23	24%	49%	27%
2013-2014	3-րդ	13	3	6	4	23%	46%	31%
	4-րդ	54	12	34	8	22%	63%	15%
3 տ. արդյունք	3-րդ	152	30	72	50	20%	47%	33%
	4-րդ	231	50	122	59	22%	53%	26%

Առաջադրանք 6-ը ստեղծագործական բնույթի առաջադրանք է, որի կատարման արդյունքում ստացվել են 20%(3-րդ կուրս) և 22%(4-րդ կուրս) առաջադիմություն: Ուսանողները դժվարացել են սկսել, ներկայացնել, շարունակել, տեսակետներ արտահայտել, համոզել, խնդրել, պնդել, հաստատել, մտքեր փոխանակել և ի վերջո ավարտել խոսքը՝ օգտագործելով իրադրային քերականական պատրաստի կառույցներ: Թերի են պատասխանել ընդհանուր հաշվարկի 47% և 53%-ը, սխալ են պատասխանել 33% և 26%-ը համապատասխանաբար:

Երրորդ կուրսի ուսանողների հայտորոշիչ թեստավորման արդյունքների ամփոփում

Տրամագիր 1.

(2011-2012, 2012-2013, 2013-2014 թթ.)



Այսպիսով, երրորդ կուրսում անցկացրած հայտորոշման թեստավորմանը մասնակցած թվով 152 ուսանողների մոտ գրանցվել են հետևյալ արդյունքները.

առաջին առաջադրանքը ճիշտ են կատարել ուսանողների 47%-ը, թերի 34%-ը, իսկ սխալ պատասխան գրանցվել է ուսանողների 18%-ի մոտ,


երկրորդ առաջադրանքը՝ 53%-20%-27%, **երրորդ առաջադրանքը**՝ 53%-19%-28%,

չորրորդ առաջադրանքը՝ 60%-18%-22%, **հինգերորդ առաջադրանքը**՝ 22%-13%-65%, **և վեցերորդ առաջադրանքը**՝ 20%-47%-33% հարաբերակցությամբ:

Չորրորդ կուրսի ուսանողների հայտորոշիչ թեստավորման արդյունքների ամփոփում

Տրամագիր 2.

(2011-2012 , 2012-2013 , 2013-2014 թթ.)



Չորրորդ կուրսի նախաթեստավորմանը մասնակցած թվով 231 ուսանողների մոտգրանցվել են հետևյալ արդյունքները.

առաջին առաջադրանքը ճիշտ են կատարել ուսանողների 52%-ը, թերի 24%-ը, իսկ սխալ պատասխան գրանցվել է ուսանողների 23%-ի մոտ,

երկրորդ առաջադրանքը՝ 56%-16%-27%, **երրորդ առաջադրանքը** 55%-21%-23%,

չորրորդ առաջադրանքը 61%-20%-18%, **հինգերորդ առաջադրանքը** 25%-15%-60%,

և վեցերորդ առաջադրանքը՝ 22%-53%-26% հարաբերակցությամբ: Ստացված տվյալների վերլուծության արդյունքում բացահայտվեցին ուսանողների միջաբնականորեն, տիպական սխալներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- *Լեզվական*՝ քերականական և բառապաշարային: Քերականական սխալները բաժանվում են *ձևաբանական* (բայաձևերի, ժամանակաձևերի, որոշյալ և անորոշ հոդերի ոչ ճիշտ կիրառություն), *չարտիչ ուսական* սխալներ (նախադասություններում ոչ ճիշտ շարադասություն, խոսության նշույթների, մակբայերի սխալ տեղադրում, փոխակարգության բացակայություն և այլն):

- *Բովանդակային*, երբ բառը սխալ ընտրելու պատճառով աղճատվում է ասույթը,

- Սխալ ներհայ երեւիքացասական ներթափանցման (ինտերֆերենցիա) հետևանքով, որը հիմնականում արտահայտվում է բառակարգի տարբերություններով:

- *Հաղորդակցական*, երբ ուսանողը դժվարանում է տարբեր հաղորդակցական իրադրություններում մտքերն ազատորեն ձևակերպել՝ այսինքն համաձայնել կամ մերժել, դրական կամ բացասական կարծիք, ցանկություն ու զարմանք արտահայտել, խնդրել, առաջարկել, քաղաքավարի ընդհատել և այլն:


Վերջիններիս դասակարգումն ու վերլուծությունը մեզ հնարավորություն տվեցին դուրս բերել և տիպականացնել դրանցից բխող դժվարությունները, որոնց հաղթահարման գործընթացը վճռորոշ է իրադրային քերականության ուսուցման ընթացքում հետագահաղորդակցումն ապահովելու համար:

2.3. Քերականության ուսուցման դժվարությունների սահմանում մասնագիտական դասընթացում

Այսպիսով, հայտորոշման թեստավորման միջոցով հաստատվեց այն ենթադրությունը, որը բխում է տարբեր տիպի քերականության տեսակների՝ նորմատիվ (ավանդական) և իրադրային քերականության զուգարկական վերլուծությունից, հատկապես ներլեզվային փոխներթափանցման բացասական ազդեցության արդյունքից: Վերլուծելով ստացված արդյունքները և ուսանողների կատարած տիպական սխալները պարզ է դառնում, որ իրադրություններում քերականական գիտելիքների և խոսակցական բառապաշարի պակասը զգալիորեն սահմանափակում և խոչընդոտում է սովորողների առաջընթացը: Որոշ առաջարկանքների կատարման ժամանակ ցուցաբերած քերականական հիմնարար գիտելիքները (1-4 առաջարկանքներ) փաստորեն բավարար չեն գործնականում հաղորդակցական նպատակներին ծառայեցնելու համար (5,6 առաջարկանքներ): Ինչպես վկայում են հայտորոշման թեստավորման՝ հատկապես 5-րդ և 6-րդ առաջարկանքների կատարման արդյունքները, որի ժամանակ գրանցվել են ամենացածր նիշերը, ուսանողների մեծամասնության մոտ լավ չեն ձևավորված համապատասխան

հմտություններ, նրանք լավ չեն տիրապետում խոսքային գործառնությունների:

Գծապատկեր 5.



Մեթոդական տեսանկյունից կարևոր է այն, որ հայ ուսանողները պետք է հաղթահարեն մի քանի բնույթի և ուղղվածություն ունեցող դժվարություններ: Դա մասնավորապես վերաբերում է այն բանին, որ անգլերենը, ինչպես նշեցինք 2-րդ գլխի 2-րդ ենթաբաժնում, համարվում է վերլուծական, իսկ հայերենը՝ կցական կառուցատիպի լեզու՝ զարգացած թեքական համակարգով և վերլուծական տարրերով:

Երկրորդ դժվարությունը նույնպես դիտարկվում է ձևաբանական մակարդակում: Անգլերենը հարուստ է բազմիմաստ բառերով, համանուններով, և շատ կարևոր է ուսանողի կողմից բառի ճիշտ ընտրությունը Սակայն օտար լեզուների ֆակուլտետի ուսանողների համար այդ դժվարությունները հիմնականում հաղթահարելի են: Նրանք կրում են դժվարություններ կապված խոսուբային մակարդակի հետ: Անգլերենի և հայերենի մեթոդական տիպականացման տեսանկյունից նպատակահարմար չէ քննարկել համանուն ունեցող գեղարվեստը: Մեթոդական կոմպետենցիայի

զարգացման տեսանկյունից ուսուցման նախնական փուլում արդյունավետ է բացահայտել հանդիպող համանուն բառի քերականական բնութագրերը: Սակայն արտադրողական հմտություներին զարգացման տեսանկյունից այդպիսի աշխատանքը չի տալիս ցանկալի արդյունք:

Առաջացող դժվարությունները պայմանավորված են մի կողմից համապատասխան չիմացություն (խոսքային նմուշներ, ռեպլիկներ և այլն), ինչը և դժվարացնում է մտքերի ազատ արտահայտումը, մյուս կողմից՝ հայերենի ներթափանցմամբ (միջլեզվական ինտերֆերենցիա), ինչպես նաև անգլերենի տիպակառույցի բնույթով (ներլեզվական ինտերֆերենցիա): Այսպիսով, հաղորդակցական հմտություններ սովորելու ընթացքում ուսանողների ինքնուրույն խոսքի ձևավորման կարողությունների զարգացմանը խոչընդոտող վերոհշյալ դժվարությունները պայմանավորված են.

1. ուսումնասիրվող լեզվի բնույթով,

2. իրադրային քերականական նյութի յուրացման ոչ պատշաճ մակարդակով (անցյալ շարունակական՝ կիրթ դիմել ածներում, ապառնի շարունակական՝ ուղեցույցներում),

3. հայերենից բխող ներթափանցման աստիճանի ազդեցությամբ՝ նախադասության բառակարգի շեղումներ, մակբայի տեղադրում, ներգործական և կրավորական սեռերի կիրառում,

4. հոգեբանական գործոնների ազդեցությամբ

ա) հաղորդակցական հմտությունների բավարար քանակի բացակայությամբ,

բ) սխալ ներկատարելու վախի զգացողությամբ,

5. ուսուցման մեթոդների կիրառմամբ

ա) ունկնդրելու և խոսելու սակավությամբ

բ/վարժությունների կատարման ընթացքում ձեռք բերած իրադրային քերականական կարողությունների ոչ լիովին օգտագործմամբ:

Չայտորոշիչ թեստավորման և ուսանողների տիպական սխալների վերլուծության արդյունքներից երևում է, որ

ուսանողները ծանոթանալով և յուրացնելով այս կամ այն քերականական նյութը՝ այնուամենայնիվ չեն գիտակցում քերականական երևույթների հաղորդակցական գործառնությունը: Մինչդեռ իրադրային քերականական կադապրների ուսումնասիրությունը և դրանք կիրառելու կարիքը իսկապես հրատապ է և արդիական լեզվի ուսուցման գործընթացում: Եվս մեկ անգամ կարևորելով խոսքային հմտությունների, ինչպես նաև առօրյա խոսքում օգտագործվող իրադրային քերականական կառույցների ուսուցման անհրաժեշտությունը լեզվի դասավանդման պրակտիկայում, անհրաժեշտ ենք համարում ավելի շատ ուշադրություն դարձնել հաղորդակցական կարողությունների զարգացմանն ուղղված վարժությունների համակարգին: Որքան էլ առաջադրվող դասագրքերն ընձեռում են հնարավորություններ հաղորդակցական կարողությունների ձևավորման համար, այնուամենայնիվ դրանք բավարար չեն այդ հմտություններին լիարժեք տիրապետելու, առավել ևս կիրառելու համար: Ուստի, անհրաժեշտ է հնարավորինս արդյունավետ կերպով մեկտեղել քերականական և գործառնական ոլորտները լեզվի ուսուցման գործընթացում և մշակել այնպիսի ռազմավարություններ և դրանցից բխող վարժությունների համակարգ, որոնք կնպաստեն բանավոր խոսքի զարգացմանը և այդքան անհրաժեշտ իրադրային քերականական կառույցների գործածությունը:

2.4. Իրադրային քերականական կարողությունների գնահատում

Գնահատումը յուրաքանչյուր կրթական համակարգի հիմնական բաղադրիչներից է, մի գործընթաց, որն օգնում է ստուգել սովորողի ձեռքբերումները համապատասխան ուսուցանվող նյութի վերաբերյալ (Alderson 2005):

Տարբեր ժամանակներում մասնագետները գնահատումը սահմանել են տարբեր կերպ: Այն կարող է ներառել միաժամանակ մի քանի գործընթացներ. այն ցուցանիչն է թե՛ սովորողի ձեռքբերումների, թե՛ ավելի արդյունավետ ուսուցման մեթոդների և թե՛

ուսումնական ծրագրերի ավելի հստակ պատկերացման վերաբերյալ : Մյուս կողմից, սխալների բացահայտման և ուղղորդող մեկնաբանությունների շնորհիվ, գնահատումն օգնում է ավելի ճիշտ ընկալել ուսումնական պրոցեսը: Գնահատումը ոչ միայն արժևորում է գիտելիքները և ուսանողի առաջադիմությունը, այլ նաև տեղեկություն է տալիս ուսանողի ընթացիկ գիտելիքների մակարդակի մասին: Այսինքն, եթե գնահատումն ուղղված է սովորողների ուսուցման գործընթացի բարելավմանը, ապաստացված արդյունքներն, իրենց հերթին օգնում են հաջորդ անգամ նրանց ավելի լավ պատրաստվել ունկամ սովորած նյութը ներկայացնելու գործում (Stiggins 2006): Մյուս կողմից, դասավանդողներին գնահատման տվյալներն անհրաժեշտ են ուսանողներին ճիշտ ուղղորդելու, նրանց կրկին նյութն ավելի ճիշտ և լավ յուրացնելու փորձելու հնարավորություն ընձեռելու առումով: Եվ գնահատելիս ուսուցիչը պետք է ճիշտ կողմնորոշվի, թե որն է լինելու ուսանողի առաջադիմության բարելավման հետ կապված իր հաջորդ քայլը:

Տարբերակում են գնահատման երկու հստակ եղանակներ՝

- ձևավորող (formative) և
- ամփոփիչ (summative):

Ձևավորող (formative) գնահատման գործընթացում արժեքավոր դեր է սրվում ինքնագնահատման գործընթացին: Ինքնագնահատումը ստացված արդյունքը գնահատման առկա ստանդարտ չափանիշների հետ համակցելու սովորողի կարողությունն է : Ինքնագնահատմամբ ուսանողը որոշում և արժևորում է իր ուժեղ և թույլ կողմերը, գիտակցում ոչ միայն հաջողությունները, այլ և թերությունները, որի արդյունքում նա դառնում է ավելի ինքնուրույն և մոտիվացված: Վերահսկելով իր իսկ առաջընթացը՝ ուսանողը բարձրացնում է պատրաստվածության աստիճանը՝ ակտիվորեն ներգրավվելով ուսուցման գործընթացում:

Հոգեբանության մեջ հայտնի է այն հիմնադրույթը, ըստ որի՝ յուրաքանչյուր գործառնություն պետք է պարունակի առնվազն երեք բաղադրիչ՝

- կողմնորոշող-դիրքապատճառային,

- գործունեական-իրականացվող,
- ռեֆլեքսիվ (անդրադարձ)-գնահատվող

Երրորդ բաղադրիչի բացակայության դեպքում, ինչպես նշում են Լ.Մ. Ֆրիդմանը, Լ.Ն. Վոլկովը (1985:61), գործողությունը վերածվում է տարերային, չկարգավորված գործողությունների կոլեյտի: Տվյալ պարագայում միանգամայն բացակայում է գործունեության նպատակին հասնելու գաղափարի պատկերացումը:

Մեր դեպքում ստուգումն ու գնահատումը իրականացվում և առավելությունը տրվում է ուսանողների կողմից գնահատմանը, դասախոսի ուղղորդմամբ:

Այս պարագայում ուսումնասիրվել, վերլուծվել և ընտրվել են այն թեստային առաջադրանքներն ու վարժությունների տիպերը, որոնց միջոցով իրականացվել է նաև քերականական նյութի յուրացումն ու կարողությունների ձևավորումը:

Տվյալ դեպքում նախապատվությունը տրվել է այն քերականական թեստերին և վարժություններին, որոնք կատարում են երկակի գործառնություններ՝ ուսուցողական և ստուգողական: Ըստ էության այդ մոտեցումը ուսուցողական և ստուգողական գործառնությունների համադրումն է:

ԳԼՈՒԽ 3.

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

Այս բաժնում ուսումնասիրության են ենթակա մանկավարժության և անգլերենի ուսուցման և ուսումնառության հետևյալ հիմնախնդիրները.

- անգլերենի քերականության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքները,
- վարժող ուսնների համակարգ՝ ուղղված իրադրային քերականական կոմպետենցիայի ձևավորմանը,
- իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկում:

3.1. Անգլերենի քերականության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմունքները

Իրադրային քերականության ուսուցման կարևոր պայման է խոսքային և ոչ խոսքային տեղեկատվությունը, ինչպես նաև վարքագծի նորմերի ուսումնասիրությունը: Այս պարագայում նպատակահարմար է հստակեցնել քերականական գիտելիքների այն նվազագույնը, որն անհրաժեշտ է լեզվակիրների մակարդակում հաղորդակցվելու համար:

Իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է հաղորդակցական սկզբունքների կիրառում: Մշակելով հաղորդակցական ուսուցման հիմնադրույթները՝ Մ. Ուեստն ու Ա. Յորնբին խնդիր դրեցին հիմնավորել քերականության իրադրային ուսուցման սկզբունքները՝ հաշվի առնելով ընդհանուր լեզվաբանության, հոգելեզվաբանության, լեզվադիդակտիկայի և մասնավոր մեթոդիկայի զարգացման միտումները:

Իրադրային քերականության ուսուցման սկզբունքները հիմնավորվում են տարբեր հարակից գիտությունների կողմից՝ տրամաբանության, լեզվաբանության, հանրալեզվաբանության

(միջմշակութային մոտեցման) և այլ տվյալների վրա: Այդ համատեքստում կարևորվում է ոչ միայն բուն քերականական նվազագույնի, այլ նաև իրական իրադրությունների ընտրության սկզբունքները:

Մի կողմից՝ խնդիր է դրվում տիրապետել նորմատիվ քերականությանը, մյուս կողմից՝ իրադրային քերականությանն է ուսուցանվում ըստ հաղորդակցական սկզբունքների:


Գծապատկեր 6.



Ճանաչողական և հաղորդակցական լեզվաբանության զարգացումը հիմք է դնում իրադրային քերականության ուսուցման համար, և եթե նորմատիվ քերականությունը շեշտադրում է ձևաբանության և շարահյուսության մակարդակները, այսինքն՝ լեզվի քերականական կառուցվածքը, ապա իրադրային քերականության ուսուցումը ընթանում է իմաստաբանական և գործաբանական մակարդակներում:

Հատկանշական է այն, որ լեզվական իմաստաբանությունը միաձուլվում է հաղորդակցական-գործաբանական գործոնի հետ:

Գծապատկեր 7.



Այսօր խիստ կարևոր է դառնում նաև սոցիալ-լեզվաբանական մոտեցումը, լեզվական միջոցների գործածությունը տվյալ լեզվական ռեգիստրի և իրադրության մեջ, քանի որ այն ուրվագծում է իրադրային քերականության ուսուցման իրական (authenticity) գործոնները: Հնարավոր է հասկանալ, թե ինչ իրական խոսքային իրադրություններում է գործածվում այս կամ այն նորմատիվ կամ իրադրային քերականական կառույցը, եթե ուսանողները հստակ չեն պատկերացնում հաղորդակցվողների լեզվամտածողության, սովորությունների, կարծրատիպերի առանձնահատկությունները: Նրանք պետք է ճիշտ գործածեն գործաբանական նշույթները, խոսքային վարվեցողության արտահայտությունները: Սակայն, հաղորդակցական քերականության շրջանակներում այդ սահմանափակումը վերանում է. և՛ քերականությունը, և՛ բառապաշարը ներկայանում են նշույթի մակարդակում (Լ.Յ. Տոնոյան 2012:45):

Իրադրայ ին քերականության ուսուցման գործընթացում կարևորում ենք իրական խոսքային իրադրություններում քերականական մեխանիզմների ձևավորումը:

Վերոհիշյալ կառուցվածքային-գործառական մոտեցման շնորհիվ, տարբեր հաղորդակցական խնդիրների լուծման ընթացքում ձևավորվում է լեզվի իրադրային քերականական համակարգը:

Դա հնարավոր է պատկերացնել առանց ուսուցման ինտերակտիվ մեթոդները կիրառելու: Վերջիններիս կիրառումն արդյունավետ է հատկապես «անտրամաբանական» համարվող քերականական կառույցներն ուսուցանելիս: Այս կապակցությամբ Լ. Պ. Եֆիմովը բերում է բազում տիպական օրինակներ, որոնց միջոցով ցույց է տալիս այն շեղումները, որոնք տեղի են ունենում ժամանակակից անգլերենում: Ըստ նրա անտրամաբանական կամ հակատրամաբանական քերականական կառույցները անգլերենում մեծ թիվ են կազմում (Л.П.Ефимов 2007: 24-31):

Իրադրային քերականական ուսուցման գործընթացում այսպես կոչված «անտրամաբանական» քերականական երևույթների ուսումնասիրությունը զարգացնում է ուսանողների քննադատական մտածողությունը երկու տիպի քերականական մոդելները զուգադրելու, ընդհանրացնելու միջոցով:

Մասնագիտական անգլերենի ուսուցման արդյունավետ ռազմավարությունն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների կողմից ընտրած մարտավարությունը և ռազմավարությունը: Այս առումով ցանկալի է հաղորդակցական նպատակ հետապնդող սովորողներին քերականական կանոնների և կաղապարների գիտակցական, էքսպլիցիտ ուսուցումը:

Քերականության ուսուցումը դիտարկելով ճանաչողական (cognitive) լեզվաբանության շրջանակներում՝ գիտնականներին հաջողվեց բացահայտել քերականության իմացության դերը հաղորդակցության տեսանկյունից: Առանց քերականության որոշակի կանոնների իմացության հնարավոր է հաղորդակցություն իրականացնել, քանի որ քերականությունը հանդես է գալիս որպես տվյալ լեզվական հանրության մենթալիտետի կարևոր միավոր կամ բաղադրիչ:

Հարիսը, Չոմսկին և այլ հոգեկեզվաբաններ հիմք դրեցին
լեզվակրթության հաղորդակցական-ճանաչողական տեսությունների
ձևավորմանը: Լինելով այդ ուղղության կողմնակիցը՝ Ռ.Պ.
Միլրոդը ներկայացնում է քերականության ճանաչողական գործա-
ռույթները որպես քերականական գեների, այսինքն՝
«արտահայտության տարրերի առանձնացում, որոնք կարելի է
ընդարձակել ընդունված կանոնների համաձայն» (Р. П. Мильруд, 2002:
17):

Կարևորվում է նաև այն, թե ինչ հաղորդականությամբ պետք է
ուսանողները յուրացնեն նշված ձևաբանական, շարահյուսական,
իմաստաբանական և խոսության ժամկետային մակարդակներում նորմատիվ,
խոսակցական կամ «անտրամաբանական», հակատրամաբանական
քերականական կառույցները: Ըստ մակարդակների՝ ուսուցման
ալգորիթմի կիրառումը կարող է լինել խնդրահարույց, քանի որ
քերականության իրադրային ուսուցումը ներառում է երբեմն
տարբեր, անձանոթ, անտրամաբանական, անհամարժեք քերականական
կառույցներ, երևույթներ: Շատ դեպքերում նորմատիվ
քերականության տրամաբանական թվացող շեշտադրումները կարող
են սովորողի համար դժվարություններ հարուցել: Այս
պարագայում կարևորվում է տվյալ մակարդակին համապատասխան
տեքստերի ճիշտընտրությունը:


Մի կողմից՝ խոսքային ակտերում, երկխոսական տեքստերում
նորմատիվ քերականության կադապրները երբեմն հանդես են գալիս
ոչ համակարգված ձևով, մյուս կողմից՝ քերականական խոսակցական
կառույցները համեմատաբար արագ են յուրացվում հաղորդակցական
մակարդակում: Սակայն դրանք ներկայացնելը, դրանց
առանձնահատկությունները բացատրելը երբեմն լուրջ
դժվարություններ են հարուցում: Ուսանողները գիտակցում են, որ
խոսակցական քերականական կառույցներն առավել ազույնս
պարզեցված են, սակայն դժվարանում են բացահայտել արտահայտչա-
միջոցների սղման, կրճատման կամ կրկնության մեխանիզմները,
պատճառները, էությունը:

Ասվածի համատեքստում քերականական նվազագույնի
ընտրության սկզբունքները հստակեցնելիս կարևոր է

առանձնացնել իրադրային և նորմատիվ քերականական նվազագույնի տեսակները: Իրադրային կամ խոսակցական քերականական նվազագույնն ընտրելիս անհրաժեշտ է վերանայել ավանդական սկզբունքների դասակարգման և ընտրության կարգը: Ընդ որում՝ իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է քերականության ուսուցման հիերարխիկ համակարգ, ըստ որի՝ առաջնային են համարվում հաղորդակցական սկզբունքները, իսկ ավանդական համարվող սկզբունքները կարող են կիրառվել ըստ տվյալ ուսումնախոսքային իրադրության:

Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից վերանայվում է նախ և առաջ հաճախականության սկզբունքը, քանի որ նորմատիվ քերականական երևույթը կարող է ավելի հաճախակի գործածվել, քան դրան համարժեք երևույթը հաղորդակցական քերականության մեջ, կամ հակառակը:

Գծապատկեր 8.



Իրադրային քերականությունը նպաստում է ոչ միայն հաղորդակցական, այլ նաև նորմատիվ քերականության ուսուցման գործընթացին, մեր դեպքում արտադրողական մակարդակում յուրացմանը: Եականն այն է, թե ինչպես են ընտրվում իրադրային ուսուցման նպատակներով գործածվող տեքստերը, քանզի դրանց շուրջ տարվող աշխատանքները պետք է միտված լինեն հաղորդակցական-վերլուծական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Նկարագրված կադապարի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրադրային քերականության ուսուցումը պետք է իրականացվի բոլոր մակարդակներում՝ յուրաքանչյուր մակարդակում հետապնդելով կոնկրետ նպատակ: Խոսության և հոլգարտահայտչական մակարդակներում անհրաժեշտ է զարգացնել ուսանողների արտադրողական, իսկ տեղեկատվական և հասկացական մակարդակներում՝ ընկալողական կարողությունները:

Իրադրայ ին քերականության ուսուցումը մեծապես նպաստում է ուսանողների՝ քերականության ուսուցման կարծրատիպերի և հասկացական ու տեղեկատվական մակարդակներում դժվարությունների հաղթահարմանը: Միջնորդավորված (mediation) խոսքային գործունեության զարգացման տեսանկյունից նշված երկու մակարդակները հանդես են գալիս որպես մեկ ամբողջություն՝ ուսուցանելով ձևաբանությունն ու շարահյուսությունը վերլուծական մակարդակում

Աղյուսակ 7.

ընկալողական (ընթերցել, ուսկնդրել),	Իրադրային քերականության ուսուցում
արտադրողական (խոսել, գրել),	
ինտերակտիվ (դերախաղ, երկխոսություն),	
Միջնորդավորված (1)թարգմանել, 2) պարաֆրազ)	

Ինչպես երևում է աղյուսակից, իրադրային քերականության ուսուցման տարբեր փուլերում ուսանողներին հնարավորություն է ընձեռվում դրսևորել թե՛ պրոդուկտիվ (խոսողություն՝ մենախոսություն, երկխոսություն), թե՛ ռեցեպտիվ (ուսկնդրում, ընթերցում) խոսքային գործունեության տեսակները (language activities): Դրահետմեկտեղ ուսանողները պետք է կարողանան կատարել տարբեր տիպի քերականական գործողություններ. վերլուծել ասույթը, մեկնաբանել և թարգմանել այն:

Իրադրային քերականության ուսուցումը տարբեր մակարդակներում կազմակերպելը կարևոր պայման է քերականության տարբեր ասպեկտները լուսաբանելու և յուրացնելու համար:

Իրադրայ ին քերականության ուսուցումը հասկացությունների մակարդակում ենթադրում է տվյալ բառը կամ նախադասությունն ուսումնասիրել այնպիսի իրադրություններում, որոնց միջոցով ուսանողները կկարողանան տարբերակել անգլերենի բրիտանական և ամերիկյան, նորմատիվ-իրադրային, անտրամաբանական, հակատրամաբանական, ներակա (implicit) ոճական ռեգիստրները, և ի վերջո կիրառել դրանք՝ մոդելավորելով իրական հաղորդակցական իրադրություններ:

Նորմատիվ քերականության ուսուցումը չի շեշտադրում արտահայտության մակարդակում հոլյգերի և զգացմունքների ներկայացման կամ արտահայտման ձևերի և միջոցների ուսուցումը, չնայած զգայական ոլորտի բառերի և արտահայտությունների ուսուցումը չպետք է մոլվի հետին պլան:

Լիչը և Սվարտվիկը ծանրակշիռ հետազոտություններ են իրականացրել հաղորդակցական քերականության առանձնահատկությունները բացահայտելու ուղղությամբ: Նրանք առանձնացնում և առաջարկում են վերլուծության տարբեր մակարդակներ, հաղորդակցական քերականության ընթացակարգեր: (G. Leech և J. A Svartvik 2002:7):

Կարևոր է այն, որ նրանք հատկապես մեծ տեղ են հատկացնում քերականական կառույցների առօրյա-խոսակցական ոճի վերլուծությանը: Առանձնացնելով ֆատիկ հաղորդակցության (phatic communication) միջոցները՝ լուռ դադարները, ձայնային դադարները, կրկնությունը, ձախողված սկիզբը, խոսության ին, գործաբանական նշույթները և նշանները, նրանք քերականության ուսուցման հիմնախնդիրը դիտարկում են գործաբանական և ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից (G. Leech և J. A Svartvik 2002):

Դժվար է պատկերացնել և ներկայացնել օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի որևէ հիմնախնդիր լուսաբանումը առանց հարակից՝ գլխավորապես մեթոդաբանական, հոգեբանալեզվաբանական, լեզվաբանական և մշակութաբանական տեսությունների, նրանց ծագման և ձևավորման պատմության ուսումնասիրության: Իրադրային քերականությունը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները. քերականության

բազմիմաստ, բազմակողմանի, բազմագործառու թային բնույթը և հիմնարար դիդակտիկական կատեգորիաները:

Ինչպես նշվեց 1.2. ենթաբաժնում, «քերականություն» հասկացությունը բազմիմաստ է, և ըստ Յելբիգի դասակարգման՝ առանձնանում են քերականության «A», «B», «C» տեսակները: Այսինքն՝ մի կողմից այն գիտություն է քերականական կառուցվածքների և օրինաչափությունների մասին (A, B), մյուս կողմից՝ քերականական գործողությունների համակարգ (C), որն առնչվում է բուն խոսքային գործունեությանը: Ընդունելով այդ դասակարգումը՝ այնուհանդերձ «քերականությունը որպես գիտություն» չափազանց լայնածավալ հասկացություն է, որը ենթակա է ճշգրտման հատկապես բուհական ինստիտուցիոնալ պայմաններում: Մեր կողմից տրոհվել է քերականության «C» տեսակը դիխոտոմիկ դասակարգման սկզբունքով և այդ դաշտում առանձնացվել է «իրադրային քերականություն» հասկացությունը: Ի դեպ, կարելի է շարունակել այդ ցանկը՝ դուրս բերելով քերականության այլ ուղղություններ ևս:

Իրադրային քերականության ուսուցումն ամբողջանում է խոսույթի կամ դիսկուրսի մակարդակում, երբ քերականական երևույթների գործածության ոլորտը, նշանակությունը, գործառույթները հնարավոր է բացահայտել կոնկրետ համատեքստում:

Քերականական կառուցվածքների նորմերի խախտումը պայմանավորված է ինչպես միջլեզվական, ներլեզվական ինտերֆերենցիայի ազդեցությամբ, այնպես էլ մի շարք այլ՝ հոգեբանական, հոգելեզվաբանական և մեթոդաբանական բնույթի գործոններով:

Չստակեցնելով անգլերենի և հայերենի մեթոդական տիպականացման սկզբունքները՝ պետք է փաստենք, որ անգլերենի քերականության ուսուցման դժվարությունները պայմանավորված են անգլերենին բնորոշ տիպական, վերլուծական կառուցվածքների զարգացած համակարգով: Սակայն, քերականության իրադրային ուսուցումը հնարավորություն է տալիս հաշվի առնել ոչ միայն հայերեն-անգլերեն, այլ և անգլերեն-անգլերեն

հարաբերությունները: Յենվելով այն փաստի վրա, որ անգլերենը վերլուծական լեզու է, իսկ հայերենը՝ կցական-վերլուծական և մասնակիորեն համադրական, հայալեզու ուսանողները հեշտությամբ են հաղթահարում անգլերենի բառակարգը, որոշ արտասանական առանձնահատկություններ, սակայն խնդիրներ են առաջանում տվյալ խոսքային իրադրության ենթատեքստի իմաստը ոչ պատշաճ ձևով ըմբռնման պարագայում: Այս դեպքում շարահյուսական կամ իմաստաբանական բարդությունները մոլորում են երկրորդ պլան: Էական են դառնում հաղորդակցվողների խոսքային ռեակցիան և համապատասխան վարքագիծը, ինչպես նաև իրական խոսքային իրադրությունը, հաղորդակցության դրդապատճառները:

Հատուկ պետք է նշել, որ անգլերենի քերականության ուսուցման կազմակերպման հարցում մեթոդական գրականության մեջ միասնական կարծիք չկա: Մի կողմից՝ համատարած է այն մոտեցումը, ըստ որի քերականական նյութին ծանոթացնում են աստիճանաբար, տևական ժամանակի ընթացքում, մեկ այլ մոտեցմամբ առաջարկվում է քերականական նյութին միաժամանակյա ծանոթացում համակարգված-կոնցենտրիկ եղանակով (B.H. Богородицкая 1974):

Քանի որ առաջին տարբերակը լայնորեն մշակված է և՛ տեսական և՛ գործնական տեսանկյուններից, ինչպես նշում է հեղինակը, ապա նպատակահարմար է տեսականորեն հիմնավորել և փորձարկմամբ ստուգել բուհում անգլերենի քերականության դասընթացի կազմակերպման երկրորդ տարբերակը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է պարզել, թե արդյոք կոնցենտրիկ եղանակը բարենպաստ պայմաններ է ապահովում լեզվական նյութի յուրացման, թե՞ հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի համար:

Ընդունելով Վ. Բոգորոդիցկայայի տեսակետը և հիմնվելով մեր դիտարկումների վրա՝ կարելի է եզրակացնել, որ քերականական նյութի միաժամանակյա ներմուծումը սեղմ (ամփոփ) հատվածներով ավելի արդյունավետ է թե՛ բուն նյութի յուրացման, թե՛ խոսքային կարողությունների զարգացման առումով:

Քերականական համանունության հաղթահարման արդյունավետ եղանակներից մեկը քերականական նյութի գործառական ուրվագծումն ու ինտերակտիվ մեթոդների կիրառումն է, քանի որ միայն տարբեր իրադրություններում նույն բայածևի գործածությունը կարող է դուրս բերել և տեսանելի դարձնել նրա իմաստային-գործառական յուրահատկությունը:

Այստեղ առաջ է գալիս ևս մի հարց՝ տիպական քերականական սխալների կանխարգելումը, քանի որ ուսուցման գործընթացում մենք գործ ունենք սխալների անդադար ուղղման, շտկման գործողության հետ: Փաստորեն, շարունակական, երբեմն բավականին ոչ պատշաճ մանկավարժական մեթոդներով սխալների ուղղումը հանգեցնում է բնականոն հաղորդակցման խանգարմանը կամ ընդհատմանը:

Բնական լեզվական պայմաններում, թե՛ մայրենի, թե՛ երկրորդ/երրորդ լեզու սովորելիս նույնպես տեղի է ունենում սխալների ուղղում, հիմնականում՝ անուղղակի: Հատկանշական է այն, որ իրադրային քերականության ուսուցումը հնարավորություն է տալիս սխալների հանդեպ նոր մոտեցում ցուցաբերել, քանզի ցանկացած նորմայից շեղում չի կարող համարվել սխալ: Ուսանողները կարող են անկաշկանդ, առանց բարդույթների օգտագործել տարբեր խոսակցական քերականական կառույցներ՝ դժվարությունները համեմատելով նորմատիվ քերականության գործածության շրջանակների հետ:

Անգլերենի իրադրային քերականության ուսուցումը որոշակիորեն շեղվում է դիդակտիկական հաջորդականության սկզբունքից: Ընդ որում, համակարգված են ուսուցանվում ձևաբանությունը, շարահյուսությունը, իմաստաբանությունը: Ցավալիս այն է, որ գործաբանական, խոսութային ասպեկտներն ու շարունակական կենտրոնից դուրս են մղվում:

Մեթոդական տիպականացման սկզբունքներն արդյունավետ են ձևաբանական և շարահյուսական մակարդակներում: Իմաստաբանական, գործաբանական և խոսութային համատեքստում նպատակահարմար է ոչ թե հակադրել հայերենի և անգլերենի համարժեք կամ անհամարժեք քերականական երևույթները, այլ համեմատել անգլերենի նորմատիվ

և ոչ նորմատիվ քերականական կառույցները, շեղումները, բացառություները: Լեզուների քերականական անհամարժեքության հիմնախնդիրը նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում խոսույթի մակարդակում, երբ քերականական կառույցները փոխերթափանցման պատճառ են դառնում մի կողմից՝ ձևաբանական, շարահյուսական, մյուս կողմից՝ գործաբանական և խոսութային մակարդակներում: Այստեղ խոսքը ոչ միայն լեզվական կոդերի, հմտությունների փոխերթափանցման, այլ նաև իրադրություններում խոսքային մտադրությունների արտահայտման մասին է:

Առանձնացնելով իրադրային քերականությունը՝ մենք գիտակցում ենք, որ ուշադրության կենտրոնում պետք է գտնվի վերջինիս քերականական նյութի և կառուցվածքների, ինչպես նաև կարողությունների և հմտությունների տիրապետման գործընթացը: Մեր հիմնախնդիրն էր այդ ասպարեզում մշակել քերականական երևույթների յուրացման արդյունավետ մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով քերականության ուսուցման՝ բուհում գործող նպատակները, բովանդակության ծավալն ու դիդակտիկական և մեթոդական սկզբունքները, ժամանակակից տեխնոլոգիաները:

Վ.Ս. Տետլինը դիտարկում է քերականական հմտությունների ձևավորումը որպես քերականական գործողությունների տիրապետման գործընթաց: Հետևելով նրա հայեցակարգի հիմնադրույթներին՝ քերականական հմտությունների ձևավորման գործընթացը կարելի է դիտարկել որպես որոշակի գործողությունների հիերարխիկ հաջորդականության շղթա: Ըստ գործողությունների բնույթի ձևավորվում են քերականական հմտություններ՝ ուղղված տվյալ ասույթի քերականական ձևակերպմանը: Այստեղ գերակայող դեր են կատարում ընտրության և կառուցման հմտությունները՝ ըստմտադրության և իրադրության:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ըստ Ի.Վ. Ռախմանովի առանձնացվում են ռեցեպտիվ և պրոդուկտիվ քերականության գործողությունները: Ըստ Վ.Ս. Տետլինի՝ քերականական ձևի յուրացման գործողությունները կարելի է նույնացնել քերականական մեխանիզմների հիմնական

գործընթացների՝ տեղադրման, փոխակերպման, նույնականացման, անալոգիայի, ընդլայնման կամ կրճատման հետ:

Լեզվի քերականական մեխանիզմների տիրապետման գործընթացի ուսուցման մեջ կարելի է առանձնացնել հետևյալ երեք բաղադրիչները՝ քերականական գործողությունների տիրապետում, պատրաստի նյութի (քերականական ձևույթներ և սպասարկու բառեր), ինչպես նաև քերականության ընդհանրությունների՝ քերականական նյութի և համապատասխան գործողությունների յուրացում (B. C. Цетлин 1966:7-8):

Լեզվի քերականական մեխանիզմների ձևավորման մեջ գերակայությունը տրվում է քերականական հմտություններին, որոնք ըստ էության խոսքային գործունեության ավտոմատացված բաղադրիչներն են:

Պրոդուկտիվ խոսքային գործունեությանը բնորոշ են հետևյալ քերականական գործողությունները՝ նախադասության կառուցվածքի և բառային միավորների հաջորդականության, ինչպես նաև սպասարկու բառերի և ձևույթների ընտրությունը և դրանց համապատասխան գետեղումը բառային միջավայրում:

Քերականական հմտությունների ձևավորման գործընթացում պետք է հաշվի առնել հմտությունների զարգացման ընդհանուր օրինաչափությունները՝ վարժությունների համակարգի անհրաժեշտությունը, ավտոմատացումը, վերջիններիս կիրառումը հաղորդակցվելիս, ինչպես նաև փոխներթափանցման հնարավորությունները:

Լեզվի քերականական մեխանիզմների ձևավորումը խոսքային նմուշների սերման (յուրացման) անբաժանելի բաղադրիչն է, որն ըստ էության խոսողի մտադրությունից կախված Լեզվի քերականական կառուցվածքների և իմաստային բովանդակության մի ամբողջություն է:

Մի կողմից՝ սովորողը նպատակաուղղված ջանում է տիրապետել քերականական երևույթներին, մյուս կողմից՝ զարգանում է նրա կապակցված մենախոսական ասույթը խոսքային գործողությունների տրամաբանական կապի հիման վրա:

Քերականության ուսուցման մեթոդական համակարգը մշակելիս մեր կողմից չի անտեսվել քերականական երևույթների տիրապետման և բառապաշարի միջև գոյություն ունեցող սերտ կապը: ՎՑետլ ինը հատկապես կարևորում է քերականության կախվածությունը բառապաշարի բնույթից (В. С. Цетлин 1967:6-7), քանի որ բառապաշարով է հաղորդվում միտք արտահայտող հիմնական հասկացությունները, իսկ քերականական միջոցները ծառայում են ասույթը կառուցելու (սույն տեղում): Մեր պարագայում վճռորոշ դեր են կատարում և՛ բառապաշարը որպես այդպիսին, և՛ բառակապակցությունները, ընդհուպ մինչև խոսակցական, դարձվածային արտահայտությունները, որոնք տիպական են տվյալ իրադրության համար և արտահայտում են այս կամ այն հաղորդակցական մտադրությունը (communicative intention).

Ելնելով ռեցեպտիվ (ընկալողական) և պրոդուկտիվ (արտադրողական) խոսքային գործունեության տեսակների, ինչպես նաև քերականության տեսակների տարանջատման փաստից (И.В. Рахманов, 1956)՝ մենք կփորձենք ներկայացնել քերականական կառույցների գործառնությունը, ինչը որոշվում է քերականական երևույթի հատկանիշների և դրանք մեկնաբանելու տեսանկյունից: Նախ և առաջ յուրացման են ենթակա այն քերականական կառույցները, որոնք ունեն բարձր գործածական և գործառական արժեք և հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմքն են կազմում:

Այստեղ հատուկ կարևորություն է ստանում տարանջատումը մի կողմից՝ յուրաքանչյուր քերականական կառուցվածքի գործառնության և մյուս կողմից՝ այս կամ այն քերականական երևույթի նկարագրության/բացատրության, որը ենթադրում է գործողությունների կատարման ստույգ քայլերի հաջորդականություն (В. А. Бухбиндер, 1986: 180-181):

Այս պարագայում նպատակահարմար է տարբերակել քերականական երևույթի նկարագրական՝ ոչ գործառնային և գործառնային բացատրությունն ու ցուցադրումը: Քերականական կառույցների նկարագրության գործառնությունը չպետք է շփոթել քերականական ձևերի գործառնության հետ: Պարզաբանենք ասվածը օրինակներով:

Անգլերենում գոյական անունը նախադասության մեջ կարող է հանդես գալ հետևյալ գործառույթներով, որպես՝

- ենթակա
- լրացում
- ստորոգելիական վերադիր
- որոշիչ

Ի տարբերություն գոյականի վերոնշյալ գործառույթների, ըստ Ի. Բերմանի գործառույթայնությունն հասկացությունը պետք է պարտադիր կերպով պարունակի քերականական երևույթների կողմնորոշիչներ, որոնք, լինելով ազդանշաններ, «հաղորդում», «տեղեկացնում» են կոնկրետ գործողությունների կատարման մասին: Որպես օրինակ ստորև տրված են նախադասություններ, որտեղ երկու գոյական գտնվում են «ծայրակցում» (contact) դիրքում (И.М. Берман, 1994):

Ex. He does not like the **way children** behave.

One of the most common **mistakes students** often make is the use of continuous tenses.

The boy managed to push the two **women the gangster** wanted to shoot.

Այս դեպքում անհրաժեշտ է մատուցել հետևյալ տեղեկատվությունը առ այն, որ երկու գոյականների ծայրակցման դեպքում արտահայտվում է երկրորդական նախադասության գաղափար: Այս պարագայում քերականական երևույթների բացատրությունը պետք է ներառի ոչ միայն քերականական հատկանիշների սոսկ թվարկումը, այլ նաև գործողությունների կատարման քայլերը: Այսպիսով, քերականական երևույթների գործառական ուղղվածությունը պետք է համալրվի «օպերացիոնալ համապատասխանություն» հասկացությամբ, այսինքն՝ տվյալ քերականական երևույթի որոշակի գործողությունների կիրառման հաջորդականությամբ թե՛ պրոդուկտիվ, թե՛ ռեցեպտիվ խոսքային գործունեությունն շրջանակներում:

Մեր կողմից կատարված վերլուծությունը անգլերենի նորմատիվ և իրադրային քերականության տեսանկյուններից թույլ է տալիս սահմանել իրադրային քերականական երևույթների գործածության առանձնահատկությունները:

Ի տարբերություն նորմատիվ քերականության, հաղորդակցման գործընթացում տվյալ կառույցների իմաստային բովանդակությունը և դրանց հատուկ կիրառությունը սահմանելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ հաշվի առնել անգլերենում և հայերենում քերականական-իրադրային կառույցների յուրացման առանձնահատկություններն ու դժվարությունները:

Իմաստբանական կառույցների և դրանց համապատասխան քերականական ձևերի գուգադրական վերլուծության արդյունքում առանձնացվել են իմաստային բնութագրերը և դրանք յուրացնելու ձևերը, որոնք կարելի է ցուցադրել ներմուծման ընթացքում:

Մեր կողմից մշակված անգլերենի իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի հիմքում ընկած են հետևյալ դրույթները:

1. Իրադրային քերականության ուսուցման գլխավոր նպատակն է քերականական կոմպետենցիայի, այդ թվում նաև քերականական մեխանիզմների ձևավորումը, որը հաղորդակցական կոմպետենցիայի գլխավոր բաղադրիչն է:

2. Իրադրային քերականության ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է համակցել այն նորմատիվ/ավանդական քերականության հետ՝ ապահովելով լեզվական նյութի ընտրության գործառական բնույթը: Դա նշանակում է ասույթի ճշգրիտ կառուցում ըստ լուծելիք խոսքային խնդրի, հաղորդակցական մտադրության, կոնկրետ իրավիճակի և մասնակիցների սոցիալական դերերի, ինչը պահանջում է համապատասխան ճանաչողական ռազմավարություն:

3. Քերականության ուսուցումը թե՛ ավանդական/նորմատիվ, թե՛ իրադրային/ հաղորդակցական, ընթանում է փուլային «տրոհմամբ»՝ ծանոթացման/ներմուծման/բացատրության և համադրված՝ վարժանքի և խոսքային պրակտիկայի: Ընդ որում, բացատրության փուլում կիրառելով նյութը ինդուկտիվ կամ դեդուկտիվ մեթոդով (ինչը կախված է ներմուծվող քերականական երևույթների բնույթից և ուսանողների լեզվի իմացության մակարդակից)՝ ուսանողներից պահանջվում է որոշակի ակտիվություն, գործողությունների

կատարում: Այս տեղ տեղի է ունենում նոր կառույցի վերարտադրում տարբեր իրավիճակներում և ռեգիստրներում, որպեսզի ձևավորվի լեզվական միավորի հնչյունային, տեսողական, արտաբերական/մոտորային և ռիթմիկ պատկերը: Ներմուծման/բացատրության փուլի դինամիկ կազմակերպումը մոտեցնում է սովորողներին հաջորդ՝ վարժանքի փուլի իրականացմանը: Վերջինս կազմակերպելիս պետք է խուսափել մեխանիկական մարզումից (drill), քանզի արդեն այս փուլում լեզվական երևույթների վարժանքի հետ մեկտեղ հնարավոր է լուծել նաև հաղորդակցական խնդիրներ (Ջ.Մ. Кольер 2011:20-21):

4. Այս փուլում մեծ տեղ է հատկացվում քերականական կառույցների իմաստային ծավալի պարզբանմանն ու ճշգրտմանը, ինչպես նաև այդ միջոցների արտահայտմանը հայերենի հետ համակցությամբ: Այս տեղ հնարավոր է կիրառել այսպես կոչված «պայմանական թարգմանության» մեթոդը, որն առաջին անգամ առաջարկվել է Չ. Մ. Տվետկովայի կողմից (Յ.Մ. Цветкова 1949:10-11) կողմից՝ ուղղված տվյալ քերականական երևույթի ընկալման և գիտակցման խորության աստիճանի ստուգմանը և որը մեր դասավանդման պրակտիկայում բացառապես չի կիրառվում: Վերջինս հիմնվում է հարասության (paraphrase) վրա, այսինքն, մայրենի լեզվով ներկայացվում է անգլերեն բառակապակցությունը կամ նախադասությունը՝ պահպանելով տվյալ լեզվական միավորի շարահարսությունը: Օրինակ՝ I saw him leaving. (Ես տեսա նրան մեկնելիս): Ընդ որում, հայերենով առաջադրված տեքստում ուսանողների ուշադրությունը կենտրոնանում է ոչ թե ամբողջ տեքստի, այլ գուտքենարկվող երևույթի և վերջինիս անգլերենով արված արտահայտչամիջոցների վրա: Այսպիսով, ըստ Չ. Մ. Տվետկովայի տվյալ երևույթը հայտնվում է «գիտակցության վառ կետում»:

Կարևոր նշանակություն ունի նաև քերականական և բառապաշարային հմտությունների փոխկապակցված ներմուծումն ու ձևավորումը, հատկապես իրադրային քերականության ուսուցման դեպքում, որտեղ լեզվական միջոցների ակտուալացումը պայմանավորված է հաղորդակցական մտադրության «թելադրանքով»:

Այս պիսով, քերականական թեմաների շուրջ աշխատանքը ծավալվում է հետևյալ հիմնական ուղղություներով.

1. անգլերենի քերականական երևույթների իմաստի, ձևի և գործածության ոլորտի ցուցադրում/բացատրություն՝ շեշտադրելով յուրաքանչյուր բաղադրիչի առանձնահատկությունները,

2. ներմուծված նյութը հասկանալու ստուգում,

3. քերականական երևույթների վերարտադրում և ամրապնդում վարժանքի միջոցով՝ համապատասխան հմտություներին, կարողություներին և քերականական մեխանիզմների ձևավորման նպատակով:

Մեր կողմից մշակվել է քերականության իրադրային ուսուցման բազմաստիճան կադապար:

Անգլ երենի իրադրային քերականության ուսուցման կադապարը

Գծապատկեր 9.



Ըստ այդ կադապարի՝ իրադրային քերականական կառույցների ուսուցման նպատակով կարևորվում են բոլոր՝ ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական և խոսութային մակարդակները:

Անհրաժեշտ է հատուկ նշել այն փաստը, որ ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական մակարդակներում ուսանողները գործ ունեն քերականական փոխերթափանցման հետ միջլեզվային

մակարդակում, ուստի խոսու թային մակարդակում նրանք հաղթահարում են քերականական ներլեզվային փոխներթափանցման դրսևորումները, որոնք պետք է հաշվի առնել մեթոդական համակարգը մշակելիս:

Մեր ներկայացրած մեթոդական համակարգի հիմքում ընկած են հետևյալ գործոնները.

1. քերականության ուսուցումն իրականացվում է ըստ հաղորդակցական-ճանաչողական ուսուցման սկզբունքների,

2. դասանյութի շրջանակներում իրադրային քերականությունը ներմուծվում է ավանդական քերականությանը զուգընթաց, հաշվի առնելով մի կողմից՝ քերականական նյութի բարդությունը, մյուս կողմից՝ ուսանողների կողմից յուրացման դժվարությունները:

3. խոսքային տարբեր իրադրություններն ընտրվում են իրական աղբյուրներից. ՁԼՄ-ներից, գեղարվեստական գրականությունից, տեսաֆիլմերից, տարբեր բնագրերից, այդ թվում նաև վիրտուալ բնագրերից,

4. ուսանողներն ուսումնասիրում են տարբեր իրադրություններում գործածվող խոսակցական-հաղորդակցական քերականական կառույցները՝ չափանիշ ընդունելով նորմատիվ քերականական կառույցներն ու երևույթները,

5. ուսանողները ըստ տվյալ իրադրության վերլուծում են թե՛ նորմատիվ, թե՛ խոսակցական համարվող, ընդունված նորմերից «շեղվող» կառույցները՝ գործածելով դրանք նոր իրադրություններում և լուծելով առաջացած խնդիրները,

6. անձանոթ քերականական կառույցները վերլուծվում են՝ համեմատելով հայերեն համարժեք կառույցների հետ, կամ համեմատվում են՝ ելնելով դասի նպատակից, հաշվի առնելով ուսանողների համար խնդրահարույց իրավիճակները,

7. նոր, ոչ ստանդարտ քերականական կառույցների ուսուցումը միտված է զարգացնելու ինչպես ուսանողների քերականական, հաղորդակցական, այնպես էլ մեթոդական կոմպետենցիան:

3.2. Վարժու թյ ու ն ն եր ի համակարգ՝ ու ղ ղ ված իրադրայ ի ն ք երականական կոմպե տե նց իայ ի ձևավորմանն ու տիրապետմանը

Վարժու թյ ու ն ն եր ի համակարգը մշակել ի ս մենք հիմնվել ենք Մ.Գ. Աստվածատրյանի հայ երգակարգի վրա՝ առանձնացնելով վարժու թյ ու ն ն եր ի համակարգին ներկայացվող պահանջները, նպատակը, տվյալ առաջադրանքի ուսումնական խնդիրը, օբյեկտը, վարժու թյ ու ն ն եր ի տիպերն ու տեսակները, ինչպես նաև ծագող դժվարությունները (Մ. Գ. Аствацатрян 2010: 28-29):

Ըստ ընդհանուր պահանջների վարժու թյ ու ն ն եր ի համակարգում հաշվի են առնվել՝

- քերականության ուսուցման նպատակները և խնդիրներ՝ կապված խոսողության զարգացման հետ,
- հմտությունների ձևավորման փուլերը, ինչը ենթադրում է նպատակասլաց վարժանքի կազմակերպում և բուն խոսքային պրակտիկայի իրականացում, ինչի արդյունքում քերականական կառույցները ենթակա են ավտոմատացված գործածության:

Քերականության նյութը յուրացնելիս կարևոր սկզբունքային նշանակություն ունեն.

- իրական խոսքային իրադրությունները,
- խոսքային նմուշները (speech patterns),
- կառուցվածքային տրամաբանական «հենարանները»,
- խաղային տեխնոլոգիաների ներդրումը:

Հիմնական նպատակներից ելնելով անհրաժեշտ է հաշվի առնել՝

- հայ սովորողների համար առաջացող դժվարությունները,
- գուգորդվող լեզուների (հայերեն, անգլերեն) փոխներթափանցման դեպքերը,
- սովորողների նկատմամբ տարբերակված մոտեցումը:

Մասնագիտական դասընթացում նախապատրաստական փուլն ուղղված է քերականական նյութի նոր մակարդակով իմաստավորմանը, ձևի և իմաստի առանձնահատկությունների առնչվող իրադրային քերականական երևույթների յուրացմանը:

Քանի որ խոսքը մասնագիտական դասընթացում իրադրային քերականության ուսուցման մասին է, պետք է հաշվի առնել

ուսանողների բառապաշարի իմացության ու կիրառման և քերականական ճշգրտության B1 և B2 մակարդակները, որոնք ըստ LԻՅՅ-ի նախատեսում են բավարար բառապաշար և հաղորդակցվելու բավականաչափ ճշգրտությունն առօրյա կյանքին վերաբերող թեմաների շուրջ B1 մակարդակում, բավականին լավ բառապաշար՝ հետաքրքրությունների շրջանակներում ընդհանուր թեմաների շուրջ խոսելու, մտքերը ձևակերպելու համար և լավ քերականական զգոնություն և լեզվի հազվադեպսայթաքումներով՝ B2 մակարդակում (LԻՅՅ 2005: 129, 131):

Մեր հետազոտության շրջանակներում վարժության ունենալը պետք է ուղղված լինեն իրադրային քերականական կադապարների ուսումնասիրությանը, համապատասխան խոսքային նմուշների, նրանց կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունների գիտակցմանն ու գործածությանը, որոնց իրականացումը հնարավոր է պրոդուկտիվ տիպի վարժությունների միջոցով:

Ռեցեպտիվ քերականական վարժությունների միջոցով համատեքստում ձևավորվում են իրադրային քերականական կառուցվածքները ճանաչելու և հասկանալու կարողություններ: Ըստ խոսքային գործունեության տեսակների առանձնացվում են մի կողմից՝ պրոդուկտիվ և ռեցեպտիվ, մյուս կողմից՝ լեզվական և խոսքային վարժություններ: Պրոդուկտիվ խոսքային վարժությունների նպատակը քերականական կառուցվածքների՝ իմաստի, ձևի և գործածության յուրացումն է: Վերջիններս դասակարգվում են ըստ յուրացվող քերականական նյութի բարդության և դժվարությունների աստիճանի: Օրինակ՝ ընդօրինակում (imitation), տեղադրում (substitution tables), փոխակերպում (transformation), ընդլայնում (extention), կրճատում (reduction), հարց ու պատասխան (questioning) և այլն:

Վարժություն 1. Who would you say phrases 1-7 to? Choose from the people in a-g. Ու՞մ տպ տարբերակները

- | | |
|------------------|--------------------------|
| 1. 'Well done.' | a tennis player |
| 2. 'Well said.' | b politician |
| 3. 'Well tried.' | c friend failing an exam |

4. 'They're well behind us.'

d friend passing an exam

5. 'Well played.'

e friend giving you unexpected news

Վարժու թյ ու ն 2.

Լսել նադիո-հարցազրույցը Վիլյամ Ատկինսոնի հետ, որտեղ նա քննարկում է իր դպրոցում կյանքի հմտություններ ուսուցանելու հարցը: Հետևեք ձայնագրությանը և դուրս գրեք իրադրային քերականական կաղապարները:

Listen to a radio interview with William Atkinson, in which he discusses the life skills that they try to teach in his school. Follow the interview with the tapescript on p.165. and write out situational grammar patterns.

.....Well, to that end, we do bring in from outside er organizations and individuals who have expertise in this area to actually share with our youngsters and having outside facilitators who are not teachers often is a very effective way of grabbing the attention of the young people er because they're seeing somebody who may have been involved in drugs, in crime.... Why they stopped, yah.

Վարժու թյ ու ն 3.

Կարդալ և քննարկել բանավեճը: Կռահել, թարգմանել կամ շրջասու թյ ամբ արտահայտել շեղատառերով գրված բառերն ու արտահայտությունները:

Read and discuss the debate. Guess, translate or paraphrase the italicized words and expressions.

There is, again, one very *sound* reason where the universality of the UN becomes so relevant here. *No one* government likes *to be second-fiddle* to any other. Lots of governments are giving aid and assistance, but no one wants to do it *under the umbrella* of another government. But if the UN goes in there and the blue flag *is flying*, it means the whole world is *taking charge*. It means that humanity is responsible, not one government. In that process, the universality of the United Nations gives you a mechanism *to actually deliver* effective results.

Քանի որ ի սկզբանե մեր պահանջն ուղղված է հաղորդակցության մեջ իրադրային քերականական կառույցների կիրառմանն ու ամրապնդմանը, այնուհանդերձ ռեցեպտիվ վարժու թյ ու ն ներին պետք է հաջորդեն պրոդուկտիվ տեսակները, որոնք իրենց բնույթով ստեղծագործական են և օգնում են ուսանողներին ավելի հեշտու թյ ամբ յ ուրացնել նոր կաղապարույթները տարբեր

իրադրություններում: Այսպիսով, մեր կողմից առաջադրվող վարժությունների համակարգը միտված է ակտիվացնել ու, ուսուցանել ու զարգացնել ու սովորողի խոսքային շփման հմտությունները՝ իրադրային քերականության կիրառումով: Վարժությունների տեսակներն ու քանակն ընտրելիս հաշվի են առնվել կոնկրետ գործնական խնդիրները, ուսուցման աստիճանն ու սովորողների լեզվական պատրաստվածությունը:

Վարժությունների մի քանի տեսակներ արդեն իսկ տեղ են գտել Ա. Բաբայանի և հեղինակի կողմից համատեղ գրված “Debates and Interviews” (Բանավեճեր և հարցազրույցներ) ձեռնարկում (2012), որի հիմնական նպատակն է խոսքային այդ ռեգիստրի շրջանակներում ուսանողին ծանոթացնել արդի դիվանագետների, բարձրաստիճան պաշտոնյաների և գիտնականների օգտագործած անգլերեն լեզվին, որը հագեցած է իրադրային քերականական կառույցներով և առանձնանում է լեզվածական առանձնահատկություններով: Բանավեճին կամ հարցազրույցին հաջորդող վարժությունները ուսանողին խրախուսում են նյութի ուսումնասիրության ընթացքում յուրացրած նյութն ակտիվորեն կիրառել: Դրանք հատկապես ուղղված են սովորողի հաղորդակցական կարողությունների մշակմանն ու զարգացմանը:

Այսպես օրինակ, լեզվական միավորների համադրման վարժությունն ուղղված է բառի կամ արտահայտության օգտագործմանը հասարակական-քաղաքական թեմաների շրջանակում:

Վարժություն 4. Match these words and phrases from the debate with their meanings and use them in the sentences of your own.

- | | |
|------------------------------------|--|
| 1. embedded in | a. to put a viewpoint at risk |
| 2. problems without passports | b. felt very strongly and difficult to change |
| 3. day in and day out | c. a difficult decision about something |
| 4. the sense of a fork in the road | d. the feeling of a time when you have to make a clever and dishonest trick played to avoid something |
| 5. diplomatic dodge | e. to acknowledge how pertinent, connected, or to show or express yourself self-confidently, so that people take you more seriously and listen to your ideas and opinion |
| 6. to hazard an opinion | f. applicable something is to a given matter |
| 7. to have one's hands full with | g. troubles which cross all frontiers uninvited |
| 8. to concede the relevance | h. regularly, all of the time |
| 9. to project power | i. to be busy or totally occupied with someone or something |
| 10. a scathing peer review | j. a professional evaluation of a colleague's work which criticizes it very severely |

Կարևորելով թիմային մտածողության, անկաշկանդ հաղորդակցության դաշտի ստեղծման հանգամանքը՝ հաջորդվարժության ներքին մեջ կիրառվել է դերախաղի մեթոդը: Ուսանողը ստանձնում է այս կամ այն քաղաքական գործչի, լրագրողի կամ հանդիսատեսի դերը, ստեղծվում է ազատ անկաշկանդ շփում: Ստորև ներկայացված անուղղակի խոսքով շարադրված վարժությունն մեջ պահանջվում է անուղղակի խոսքը դարձնել ուղիղ և դերախաղով ներկայացնել տվյալ թեման:

Վարժու թյ ու ն 5. Role-play the debate changing the reported speech into an active discussion.

The interviewer asks Philip Gordon what the role of Russia in the conflict resolution of Abkhazia and South Ossetia is.

Ph. Gordon comments that they have different points of view from those of the Russians concerning the issues of South Ossetia and Abkhazia. They believe in Georgia's sovereignty and territorial integrity, while Russia does not. He agrees that it needs a dialogue, adding that Georgia has a reintegration strategy which is based on the notion that the conflict cannot be settled through military force. So they agree on that, it is only that they have fundamental differences on the basics.

Յաջորդ` «Արտահայտիր քո կարծիքը» վարժու թյ ու նը նույնպես ստեղծագործական բնույթի է: Այն սովորողներին առաջարկում է տրված իրադրու թյ ու նը խմբային աշխատանքով մշակել, ապա դերախաղով ներկայացնել բանավեճեր, հարցազրույցներ, զեկույցներ, ելույթներ, հեռախոսազրույցներ, կլոր սեղաններ, աշխատանքային զրույցներ և այլն: Այս վարժու թյ անը կից ներկայացվող հաղորդակցական և եզրվի բառապաշարի ցանկն օգնում է ավելի արդյունավետ կատարել հանձնարարված աշխատանքը:

Վարժու թյ ու ն 6. Have your say ! Guided by the information related in the statements, role-play the UN Security Council Session.

In a group write down and role-play a press conference with the newly appointed Prime Minister. In a group write down and role-play a press conference with the newly appointed Prime Minister. Let the Prime Minister present the main guidelines of his future domestic and foreign policy to you, speak about the changes and novelty his newly formed government is planning to put into effect.

Prepare and ask many challenging questions, trying to corner the Prime Minister about certain domestic and foreign policy issues. Questions of private character are also permitted, as the Prime-Minister is trying to build up a populist profile.

The language box below will help you to cope with some communicative problems.

Conversation gambits and collocations

to seek the solution to the problems, to engage directly in a dialogue, as we've done both publicly and privately ...,as for the idea of...,to try to sort these differences out,

peacefully and pragmatically. It's based on the notion that...We are also very clear that...We are focused on... We haven't completely tackled that problem.We have a strong vision of...diversity. It has been something that we've been committed from the start, to play a key role, to rely so heavily on.

Այս կամ այն իրադրային քերականական երևույթն ուսումնասիրելու և ամրապնդելու համար վարժող յոլենների շարքում ներառվել են նաև՝

- ընդօրինակման վարժող յոլեններ (imitation), որի ժամանակ ուսումնասիրվող քերականական երևույթի կառուցվածքը պետք է մասնակիորեն փոփոխվի և վերարտադրվի,
- տեղադրման վարժող յոլեններ (substitution tables)
- փոխակերպման վարժող յոլեններ (transformation), որոնք զարգացնում են հաղորդակցման ընթացքում քերականական կառույցները միավորելու, փոխարինելու հմտող յոլենները
- ընդլայնման վարժող յոլեններ (extention)
- հարց ու պատասխան ակնկալող վարժող յոլեններ, որոնք զարգացնում են սովորողների երկխոսության կարողությունները:

Չափաօգտագործվում են կարճ հարցեր գրույցը շարունակելու և իրենց հետաքրքրող յոլենը ցույց տալու համար, օրինակ՝

How's (it) going (=Are you enjoying it or being successful at it?) Գործերդ լավ են: կամ Why is that? (=What's the reason?) Պատճառը: Like what, exactly? (=Can you give me an example?) Օրինակ ո՞նց: How come (=Why? What's the reason?) Ինչու՞, ո՞նց եղավ:

Չաղորդակցումը հարուստ է իրադրային երանգներով և կարող է արտահայտել բազմաթիվ հաղորդակցական մտադրող յոլենների (communicative intentions) դրսևորման ձևեր, օրինակ՝ հաստատում, համաձայնող յոլեն կամ մերժում, ներողություն, խնդրանք, առաջարկող յոլեն, ցանկող յոլեն, զարմանք, դրական կամ բացասական կարծիք քաղաքավարի ընդհատում և այլն: Չաղորդակցության անբաժանելի մաս կազմող խոսքային այս կառույցների գործածող յոլենը պետք է լինի ավտոմատացված, որին կարելի է հասնել քերականական մեխանիզմների զարգացման շնորհիվ:

Մասնագիտական դասընթացում վարժույթ ունենրի համակարգը մշակելիս պետք է հաշվի առնել ներմուծվող քերականական երևույթի բնույթը և բարդության աստիճանը: Պրոդուկտիվ խոսքային վարժույթ ունենրը փոխկապված են, որոնց ընտրույթ ունը բխում է հմտույթ ունենրի և կարողույթ ունենրի մակարդակից, քերականական երևույթի բարդության աստիճանից, քերականական երևույթների ուսուցանման դժվարույթ ունենրի հաղթահարման աստիճանից, վարժույթ ունենրի տարբերակված մոտեցումներից, քերականական կառույցների ձևավորման և մտապահման կարողույթ ունից, խոսքային գործուներույթ ան շրջանակներում վերարտադրման ավտոմատացման աստիճանից, որոնք մոտեցնում են հաղորդակցման պայմաններին (Մ.Գ. Աստվածատրյան 2010: 13-18):

Պրոդուկտիվ վարժույթ ունենրի շարքում հետաքրքիր է ձևավորել միևնույն իրադրային քերականական կառուցվածքը՝ օգտագործելով տարբեր խոսքային գործուներույթ ան օգտագործման հմտույթ ունը:

Վերոնշյալ վարժույթ ունենրի նպատակը քերականական նյութի ավտոմատացված գործածույթ ունն է քերականական մեխանիզմների զարգացման շնորհիվ: Սովորողների ուշադրույթ ունը կենտրոնանում է տվյալ երևույթի ճիշտ ընկալումն ապահովող քերականական հատկանիշների վրա, որոնք պետք է բավարար լինեն տարբեր խոսքային ակտեր՝ ներողույթ ուն, մերժում, ինդրանք, տեսակետ, կարծիք արտահայտել ու համար:

Միջանձնային հաղորդակցույթ ուն կազմակերպել ու համար շատ արդյունավետ է խաղերի կիրառումը, որի ժամանակ սովորողները, օգտագործելով յուրացված քերականական կառույցները, արտահայտում են տարբեր զգացմունքներ՝ ուրախույթ ուն, տխրույթ ուն, հիացմունք, զարմանք, ինչպես նաև օգտագործում են մշակույթային կաղապարներ, որոնք սովորողին այս կամ այն չափով ծանոթ են.

1. Համընդհանուր փորձառույթ ուններ.

- ամենօրյակյանք (երբ են ճաշում, ինչ են սովորաբար ուտում, ինչ կերակուրներով են տարբերվում, ազգային տներ,

ուտեստներ, աշխատանքային ժամեր, ազատ ժամանակի զբաղմունքներ և այլն),

- ապրելու պայմաններ (կենսակերպ, բնակչության էթնիկ կազմ և այլն),
- միջանձնային հարաբերություններ (հասարակության դասային կառուցվածք, ընտանեկան հարաբերություններ, հիմնական քաղաքական խմբավորումներ և այլն),
- հիմնական արժեքներ և վերաբերմունք (սոցիալական դաս, բարեկեցություն և անվտանգություն, ազգային ինքնություն, քաղաքականություն, կրոն և այլն):

2. Սոցիալական պայմանականություններ և ծեսեր

- մարմնի լեզու (body language), սովորողը ծանոթ է տարբեր երկրների պայմանական նշաններին, մասնավորապես ձեռքսեղմմանը, գրկախառնությանը, համբուրելուն, աչքերի մեջ նայելուն և այլ շարժումների նշանակությանը,
- այցելությունների արարողակարգ, սովորողը պետք է տեղյակ լինի, թե արդյոք նրանք ճշտապահ են, ինչ են հագնում, ինչ են նվիրում, ինչ պիտի ուտեն կամ խմեն հանդիպման ժամանակ և այլն,

3. Ուտելու և խմելու սովորություններ

Քաղաքավարի խոսքի կիրառումը հիմնականում խոսակցի նկատմամբ հարգանքի դրսևորման արտահայտություն է, որը պետք է`

1. Չլինի կատեգորիկ

- I think, I believe, I expect և նմանատիպ արտահայտությունների գործածում` խոսքը ներկայացնելու համար: Դրանց կիրառումը ասվածին հաղորդում է վստահության և որոշակիության պակաս:
- Անջատական հարցերի կիրառում` ակնկալելով խոսակցի համաձայնությունը կամ հաստատումը:
- You know, of course –ի կիրառում` ակնարկելու խոսակցի տեղեկացված լինելու փաստը:

2. Լինի հանդուրժող

- Անհամաձայնության մեղմ արտահայտում (I don't like to complain but...)

- Համաձայն նույն օրոնում (I hope you don't mind me saying so but...)
- Ներողամտությամբ հայցում (I'm sorry, but...)
- Մեղմասությամբ օգտագործում (Your work isn't very good)
- 'Please' բառի ավելացում խոսքին
- Խնդրանքով հրամայականներից (Can you open this tin for me, please?)

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ որքան էլ քաղաքավարի դիմելի աճներն ընդունված են անգլախոս միջավայրերում, այնուամենայնիվ դրանք կախված են միջարք գործոններից.

- տվյալ սոցիալական խմբի պատկանելիությունից,
- խոսողի անձից,
- ծանոթության աստիճանից,
- իրավիճակի բնույթից:

Նախապատրաստման փուլը, անշուշտ, մեծ դեր է կատարում հմտությունների ձևավորման և ավտոմատացման գործում, այնուհանդերձ չպետք է անտեսել խոսքային վարժությունները, որոնք «մուտք» են գործում բուն հաղորդակցական շփման ոլորտ: Մեր կողմից մշակված վարժությունների համակարգում հատուկ տեղ են գրավում այսպես կոչված խաղային/դերային տեխնոլոգիաները:

Հաղորդակցական մեթոդիկայում առանձնահատուկ տեղ է հատկացվում խաղային տեխնոլոգիաների կիրառմանը, որոնք ուղղված են հաղորդակցական կարողությունների արդյունավետ զարգացմանը: Խաղի միջոցով ստեղծվում է օտարալեզու միջավայր, որտեղ սովորողն իրեն դրսևորում է լեզվական, քերականական, խոսութային գիտելիքներով և զգացմունքներով:

Օրինակ՝

Shashi Tharoor: No, no. Wait a minute. The point I'm trying to say is, if the UN didn't exist tomorrow ...

James Traub: That was part two of my question to Ruth.

Shashi Tharoor: ...is there any country on earth that is actually prepared to go to war to impose peace on Darfur?

James Traub: You may answer both or either of those questions.

Shashi Tharoor: There isn't. We have to make do with the best we can.

And you have a fork in your tongue, my dear. (Laughter)

Դերախաղերն ուղղված են հաղորդակցական հմտության ունենրի ու կարողության ունենրի ձևավորմանը, ինքնաբուխ խոսքի զարգացմանը: Դերախաղերի կիրառման շնորհիվ հեշտանում է ուսանողների խոսքի յուրացումը, բարձրանում է նրանց հաղորդակցական ակտիվության աստիճանը բնական միջավայրում: Դերախաղի մասնակիցները պետք է կարողանան բացահայտել միջանձնային հարաբերության ունենրի սոցիալական, զգացմունքային և ճանաչողական կողմերը (Ն.Ի. Գեզ): Ստանձնելով այս կամ այն դերը՝ նրանք ներկայացնում են կամ իրենց կամ որևէ մեկին առանձնահատուկ իրավիճակում: Նրանք ազատ են, որովհետև համոզված են, որ այդ շփումը կստացվի, և «նրանք ճիշտ կհասկանան, որովհետև դերախաղում չկա հանդիսատես, չկա վախի զգացում, որ կարող է չստացվել շփումը կամ կարող են սխալ հասկացվել» (E.A.Маслыко 1996:449):

Դերախաղի ժամանակ ուսանողները կարող են ներկայացնել իրենց սեփական կարծիքը և յուրովի մեկնաբանել տարբեր իրադրության ունենր՝ օգտագործելով սերտած խոսքային նմուշներ, քերականական կաղապարներ:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մեծ նշանակություն ունի ուսանողների քերականական մեխանիզմների և մտածողության զարգացման համար: Խաղերին տրամադրված հիմնական ժամանակը հատկացվում է բուն առաջադրանքի կատարմանը, իսկ ավարտական փուլում տեղի է ունենում վերլուծության և գնահատում:

3.3. Իրադրային քերականության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարկում

Փորձարարական ուսուցումն իրականացվել է 2014թ. սեպտեմբեր-հոկտեմբեր և 2015թ. մարտ-ապրիլ ամիսներին, 2015-2016 ուս.տարվա մարտին:

Փորձարարական ուսուցման վայրը՝ ՀՊՄՅ օտար լեզուների ֆակուլտետի III և IV կուրսերում («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ամբ),

Փորձարարական ուսուցման մասնակիցների թիվը՝ ՀՊՄՅ օտար լեզուների ֆակուլտետի III և IV կուրսերի 107 ուսանող (2014-2015 ուս.տարի) և IV կուրսի 85 ուսանող (2015-2016 ուս.տարի):
 Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 192:

Փորձարարական ուսուցման նպատակը՝ բացահայտել իրադրային քերականության ուսուցման համակարգի արդյունավետությունը:

Քերականության ուսուցման նկատմամբ ուսանողների դիրքորոշումները և մոտեցումները պարզելու համար նրանց հանձնարարվել է լրացնել հետևյալ հարցաթերթիկը, որից հետո փորձարկվել է մեր կողմից առաջադրված իրադրային քերականության ուսուցման կադապարը:

1. Քերականական կանոններն ինչպե՞ս են սովորում
 - ա) կանոնները թարգմանում են հայերեն
 - բ) կանոնները սովորում են անգլերեն
 - գ) կանոնները սովորում են միայն նմուշ օրինակների հիման վրա
2. Սկզբում ի՞նչ են սովորում
 - ա) կանոնները, հետո մտապահում են օրինակները
 - բ) օրինակները, հետո սովորում են կանոնները
 - գ) զուգակցում են մեկը մյուսի հետ
3. Կանոնները սովորում ենք
 - ա) վերարտադրելով իրական իրադրություններ
 - բ) կանոնները չեն սովորում
 - գ) կանոնները թարգմանում ենք
4. Նորմատիվ քերականությունը ուսումնասիրում ենք
 - ա) այն անհրաժեշտ է օտար լեզվով հաղորդակցվելու համար
 - բ) այն անհրաժեշտ է գրավոր խոսքը զարգացնելու համար
 - գ) այն միշտ էլ, որ անհրաժեշտ է օտար լեզվով հաղորդակցվելու համար
5. Խոսակցական քերականությունն ուսումնասիրում ենք
 - ա) այն անհրաժեշտ է օտար լեզվով հաղորդակցվելու համար
 - բ) այն օգնում է յուրացնել նորմատիվ քերականությունը
 - գ) այն անհրաժեշտ է օտար լեզու գրավոր խոսքը զարգացնելու համար

6. Նորմատիվ քերականությանը ունենուցանում ենք

ա) ավանդական մեթոդներով

բ) ինտերակտիվ մեթոդներով

գ) չեմ կողմնորոշվում

7. Նորմատիվ քերականությանը ունը ուսուցանվում է

ա) ուսումնական տեքստերով

բ) բնագրայ ին տեքստերով

գ) չեմ կողմնորոշվում

8. Նորմատիվ քերականությանը ունը ուսուցանվում է

ա) համեմատելով գործածվող քերականական երևույթների հետ

բ) համեմատելով հայերեն համապատասխան քերականական

երևույթների հետ

գ) կիրառելով քերականական կառույցները իրականին մոտ

տարբեր ուսումնախոսքայ ին իրադրությաններում

9. Քերականությանը ունենուցանում ենք

ա) օտարալեզու բանավոր խոսքը զարգացնելու համար

բ) օտարալեզու գրավոր խոսքը զարգացնելու համար

գ) քննությանը հաջող հանձնելու համար

10. Քերականության իրադրայ ին ուսուցումը ենթադրում է


ա) քերականության ուսուցում

բ) քերականության ուսուցում տարբեր իրադրությաններում

գ) ուսումնասիրվող քերականական կառույցների և


երևույթների ակտիվ գործածության խոսքում:

Տրամագիր 3.




Փորձարարան թեստավորման արդյունքում հարցման ենթակա ուսանողների 34%-ը նշում են, որ կանոնները թարգմանում են հայերեն: 58 %-նշում են, որ կանոնները սովորում են անգլերեն: Եվ միայն 8 %-ը են նշում, որ կանոնները սովորում են միայն կոնկրետ օրինակների հիման վրա:


Տրամագիր 4.



«Սկզբում ի՞նչն էք սովորում» հարցին հարցման ենթակա ուսանողների 59%-ը նշում են, որ սովորում են կանոնները, հետո օրինակները: 19%-ը սովորում են օրինակները, հետո կանոնները: Եվ միայն 22%-ն են զուգակցում կանոնների ուսուցումը օրինակների ուսուցման հետ:




Ուսանողների միայն 15%-ն են նշում, որ կանոնները սովորում են վերարտադրելով իրական իրադրությունները: Ուսանողների 51%-ը նշում են, որ կանոնները չեն սովորում: Եվ միայն 34 %-ը նշում են, որ կանոնները թարգմանում են:




Տարբեր են նաև ուսանողների մոտեցումները նորմատիվ քերականության ուսուցման գործառույթների վերաբերյալ: Նրանց միայն 23 %-ը նշում է, որ նորմատիվ քերականությունն ուսուցանում են օտար լեզվով հաղորդակցվելու համար: Ուսանողների 36 %-ը նշում է, որ միշտ չէ, որ քերականությունն անհրաժեշտ է օտար լեզվով հաղորդակցվելու համար, իսկ 41 %-ը նշում է, որ կարող են հաղորդակցվել առանց նորմատիվ քերականության իմացության:


Տրամագիր 7.



Ինչ վերաբերում է խոսակցական քերականության ուսուցմանը, ապա ուսանողների 53%-ը նշում է, որ այն անհրաժեշտ է օտար լեզվով հաղորդակցվելու համար: 34%-ը գտնում է, որ այն օգնում է յուրացնել նորմատիվ քերականությունը: 13%-ը նշում է, որ այն անհրաժեշտ է օտարալեզու գրավոր խոսքը զարգացնելու համար:




Ուսանողների 65%-ը նշում է, որ նորմատիվ քերականությունը ուսուցանում են ավանդական մեթոդներով: 16%-ը՝ ինտերակտիվ մեթոդներով և 19%-ը նշում է «չեմ կողմնորոշվում» պատասխանը:




Ուսանողների 66%-ը նշում է, որ նորմատիվ քերականությունը ուսուցանում են ուսումնական տեքստերով, 20%-ը նշում է, որ

Նորմատիվ քերականության ուսուցանում են բնագրային տեքստերով, և 14%-ը նշում է «չեմ կողմնորոշվում» պատասխանը:

Տրամագիր 11.




Ուսանողների 26%-ը նշում է, որ նորմատիվ քերականության ուսուցանում են՝ համեմատելով խոսակցական քերականական երևույթների հետ, 57 %-ը նշում է, որ նորմատիվ քերականության ուսուցանում են համեմատելով հայերեն համապատասխան քերականական երևույթների հետ, իսկ 17%-ը նշում է, որ նորմատիվ քերականության ուսուցանում են՝ կիրառելով քերականական կառույցները տարբեր իրականին մոտ ուսումնախոսքային իրադրություններում:



Ինչ վերաբերում է քերականության ուսուցման նպատակներին, ապա ուսանողների 21%-ը նշում է, որ նրանք քերականությունն ուսումնասիրում են օտարալեզու բանավոր խոսքը զարգացնելու համար: Ուսանողների 46%-ը նշում է, որ քերականությունն ուսումնասիրում են օտարալեզու գրավոր խոսքը զարգացնելու համար: Ուսանողների 33%-ը նշում է, որ քերականությունն ուսումնասիրում են քննությունները հաջող հանձնելու համար:

Տրամագիր 12.



Վերջին հարցը նույնպես վերաբերում է ուսանողների մեթոդական կոմպետենցիայի մակարդակը որոշելուն: Ուսանողների 45 %-ը նշում է, որ իրադրային քերականության ուսուցումը միտված է խոսակցական քերականական կառույցների և երևույթների յուրացմանը: Ուսանողների 33 %-ը նշում է, որ իրադրային քերականության ուսուցումը միտված է նորմատիվ քերականական կառույցների և երևույթների յուրացմանը: Ուսանողների 22%-ը նշում է, որ իրադրային քերականության ուսուցումը միտված է ուսումնասիրվող քերականական կառույցներն ու երևույթները ակտիվ խոսքում գործածելուն:

Հարցաթերթիկի արդյունքներն ամփոփելուց հետո իրականացվել է փորձարարական ուսուցում, որի ընթացքում կարևորվել է ուսանողների ինքնուրույն աշխատանքը. նրանց հանձնարարվել է գտնել, ներկայացնել և վերլուծել այն խոսքային իրադրությունները, որոնք տիպական են և բարենպաստ պայմաններ են ստեղծում այս կամ այն իրադրային քերականական կառույցի ներմուծման համար:

Իրադրային քերականության ուսուցման կաղապարը հիմք է ծառայել ոչ միայն առաջարկվող մեթոդական համակարգը, այլև ուսանողների քերականական կոմպետենցիայի գնահատման չափանիշները մշակելու համար:

Փորձարարական ուսուցումն իրականացվել է 2014-2015 ուս. տարվա մայիս և հոկտեմբեր ամիսներին, իսկ 2015-2016 ուս.տարում՝ մարտին և ապրիլին:

Փորձարարական ուսուցման վայրը՝ ՀԳՄՅ օտար լեզուների ֆակուլտետ, անգլերեն լեզու և գրականություն բաժին:

Փորձարարական ուսուցման մասնակիցների թիվը՝ 2014-2015 ուս. տարվա 3-րդ և 4-րդ կուրսերի 107 ուսանող (94 և 13), 2015-2016 ուս. տարվա 4-րդ կուրսի 85 ուսանող: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 192 (107 և 85 ուսանող):

Փորձարկման ընթացքում ընդգրկվել են հետևյալ թեմաները՝

- Գլոբալացում և կրթություն (Globalization and Education)

- Վարքագիծ և վարվեցողություն (Perfect behavior and Good manners)
- Առողջություն և բարեկեցություն (Health and Well-being)
- ճաշակ և նորաձևություն (Taste and Fashion)
- Լրատվամիջոցներ և քաղաքականություն (Media and Politics)

Լեզվական նյութը`

- տվյալ թեմաներին առնչվող *համապատասխան բառապաշար*
- *Քերականական* նյութ` բայական ժամանակածևեր, հասկապեսներկա, անցյալ, ապառնիչարուևակականի (Present, Past, Future Continuous) կիրառում բաղաբավարության ռեգիստրում, ուղղակի խոսք, տեղեկատվություն (միջոցառումների ծրագրեր) ներկայացնելու համար

- *խոսքային նմուշներ`* հետաքրքրություն, պատճառ, հարցում, ճշգրտում, հաղորդակցական մտադրություններ դրսևորելու համար, օրինակ`

- How's (it) going (=Are you enjoying it or being successful at it?) Գործերդ լավվեն:
- Why is that? (=What's the reason?) Պատճառնը:
- Like what, exactly? (=Can you give me an example?) Օրինակնոնց:
- How come (=Why? What's the reason?) Ինչու, ոնց եղավ:

- *անորոշություն արտահայտող պատրաստի կաղապարությունները (phrasal chunks), խոսության նշաններ արտահայտող միավորներ`* thing, stuff, or so, like, or something, or anything, and so on, or whatever, kind of, sort of, more or less, I mean, you know, by the way, etc. (բանը, մոտավորապես, նման, ոնց-որ, ինչ-որ, ինչ էլ որ, մի տեսակ, քիչ, թե շատ, ուզում եմասել, գիտե՞ք, ի դեպ այլև)

- *Կրավորական սեռ`* **get-passive-ի** կիրառում **be-passive-ի** փոխարեն, երբ խոսքը պատահական, անսպասելի գործողությունների կամ դժվար գործընթացի մասին է:

- *Գոյական+Գոյական (N+N)* կառուցվածք` student project report որպես տեղեկատվություն հաղորդող ամփոփկառույց:

- *Տարբեր տիպի խոսքային նմուշներ`* իրադրային զեղչումներ, վերածևակերպումներ, կրկնողություններ, երկրորդական նախադասությունների շարք այլև:

Փորձարարական ուսուցման ընթացքում տիպական քերականական կառուցվածքները ենթակա էին ամրապնդման համապատասխան վարժությունների միջոցով:

Հաշվի առնելով ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի անգլիական բաժնում կիրառվող ուսումնամեթոդական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութը՝ առաջարկվել են լրացուցիչ տեքստեր, առաջադրանքներ և վարժություններ:

Հիմնվելով մեր կողմից մշակված մեթոդական կադապրի վրա (տե՛ս 3.2)՝ փորձարարական աշխատանքների վերջում թեստավորման միջոցով անցկացվել է ստուգողական աշխատանք՝ պարզելու, թե արդյոք մշակված ռազմավարություններն ու վարժությունները ծառայել են նպատակին, որքանով են իրացվել և կիրառվել իրարայրին քերականական կառույցները հաղորդակցման ընթացքում, և որքանով է դրանց տիրապետումը նպաստել բանավոր խոսքի զարգացմանը:

Փորձարարական ուսուցումն ավարտվել է ստուգողական աշխատանքով, որի նպատակն էր ի հայտ բերել փորձարարական աշխատանքների արդյունքում սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

Հետփորձարարական ստուգողական աշխատանքն իրականացվել է 2015թ. հոկտեմբեր ամսին, որին մասնակցել են չորրորդ կուրսի 92 ուսանող:

Աշխատանքներն անցկացվել են հավասար պայմաններում. 1-4 առաջադրանքների կատարման համար տրվել է 40 րոպե, 5-6 կատարման համար՝ 40րոպե:

Հետփորձարարական ստուգողական աշխատանքը բաղկացած էր վեց առաջադրանքից.

Առաջադրանք 1

Match the features of situational English listed in the box with the following pieces of dialogue.

Իրարայրին քերականության հատկանիշները համապատասխանեցնել երկխոսություններին, կազմել երկխոսություններ նույն սխեմայով:

- a Overlaps
- b Supportive comments
- c Hesitation
- d Repetition
- e Discourse markers
- f Add-on clause structure
- g Ellipsis
- h Reformulations

Ստորև տրված է առաջարկանքի կատարման նմուշը.

0 A: So what will we have to do?

B: It will need a reformulation of the theory. This reformulation will take some time.

d

1 A: What do you think of my plan?

B: Well, you know, I haven't really had time to think about it.

—

2 A: You'll never guess who I saw yesterday. Raul Hernandez!

B: Really! How exciting! Tell me more.

—

3 A: Please explain your concern.

B: The rate of incidence is quite frightening. What I mean is that it happens so often that we should be very worried.

—

4 A: I really would like you to understand that...

B: But I do understand you, I mean...

A: No, you don't. You just think you do.

—

5 A: So what is this?

B: This is the new model of converter, and you can see that it is very modern... and we have included all the new parts... but of course replaced those which you identified as unworkable.

—

6 A: So what do you think?

B: Well, um, I'm not, er, sure, what to say.

7 A: What shall I do with this?

B: In the car.

Առաջադրանք 2

Fill in the gaps in the discourse with the appropriate words. Բաց թողնված մասերը լրացնել համապատասխան խոսու թայի նշույ թներով՝ առաջարկելով ևս մի քանի նշույ թյուրաքանչյուր տողում:

I ⁰reckon _____ that there is now no question that the takeover will take place.

¹T _____ is, McDougalls have agreed to take over 65% of the company.

²Y _____ k _____, I am personally very pleased with this result.

³B _____ and I _____, this company has been performing very poorly in recent years, and we've had to deal with poor management, bad timekeeping, that

⁴k _____ of t _____. But then ⁵a _____, that meant we could be

late too! No, seriously, I think we will be a lot better off. ⁶A _____, we'll have a

future, which we wouldn't have if we hadn't signed the takeover. And as ⁷f _____

McDougalls, I'm sure they will be a very good parent company. So, ⁸a _____ in

a _____, the future looks bright. Oh, and ⁹b _____ I f _____,

there's a cocktail party tonight to celebrate the takeover. See you all there.

Պատասխաններ 1 That 2 You know 3 By (and) large 4 kind (of) thing 5 again

6 Anyway 7 for 8 all (in) all 9 before (I) forget

Առաջադրանք 3

Cross out any options which do not sound natural in these sentences. Report your partner what your third friend has just told you.

Ձնչեք այն տարբերակները, որոնք բնական չեն հնչում նախադասության մեջ: Ձեր ընկերոջը հաղորդեք, թե ինչ պատմեց ձեզ երրորդ ընկերը:

1. It's OK, Sam told me you don't/ didn't eat meat, so we are having fish.

2. Jack says he wants/wanted to move out into the country this year.

3. That was Kate on the phone – she says/said she's going to be a bit late.

4. Johnny said/was saying 'No' and his boss was so shocked, she didn't say anything!

5. When they told Georgie she hasn't got/hadn't got the job, she was really upset.

6. Martina told/was telling me that the Waltans' daughter has been/ had been expelled from school!

Առաջադրանք 4

C Replace the underlined word(s) in the sentences with an informal equivalent. Make up another sentence with them. Ընդգծված բառերը փոխարինեք խոսակցական համարժեքներով և օգտագործեք մեկ այլ նախադասություն մեջ:

0 I hate those environmentally-concerned people. They don't think about humans.

tree-huggers

1 You must be insane if you think you can arrange a meeting with the Prime Minister.

_____.

2 His uncontrolled argument about women drivers upset everyone.

_____.

3 Are you still complaining? I am unable to tolerate it anymore.

_____.

4 Don't expend time and effort buying me a present as I don't want one.

_____.

5 When will she stop talking incessantly about the dangers of taking aspirin?

_____.

Exercise C

1 bonkers 2 rant 3 I've had it up to here 4 bother 5 spouting

Առաջադրանք 5.

Role-play the debate changing the reported speech into an active discussion. Դերախաղով ներկայացրեք բանավեճը՝ անուղղակի խոսքը դարձնելով ուղղակի և խոսքային ակտերը (ask, add, mention, doubt, show) վերածելով համապատասխան խոսույթի կամ ձայնարկության:

Barrett was aware that Lindauer had been trying to explain to the Bush Administration that, invading Iraq was insane, that the Iraqis were basically 254 going to do everything

possible to defend themselves, there would be a horrible resistance or a horrible war if there was an invasion.

Lindauer thinks that it is a complicated story. She was one of those few assets covering Iraq before the war. She established contact with the Iraqi Embassy at the United Nations in New York in August 1996. Lindauer was what they call a “back channel”. Her motivation was that she hated the United Nations sanctions, she hated genocidal consequences and suffering of Iraqi people.

Lindauer mentions that both sides understood her polices. They started to develop a comprehensive peace framework. Iraq agreed to give financial records on al- Qaeda to the United States. However, the United States didn’t want to take the records.

Barret asks to explain what that 9/11 was. **Lindauer** says that Richard Fueiz knew all the details of 9/11. By August 2001 Richard was telling her not to go to New York. Richard Fueiz even knew the timing of the attack. The interesting thing is that after 9/11, she got arrested, while Richard got thirteen million dollars in payoffs.

Barret is absolutely amazed. They arrested Lindauer, because they were aware of her and Richard Fueiz’s conversations.

Lindauer adds that there is another strange thing, i. e. Iraq said to her that they would give the United States everything they asked.

So **Barrett** is interested in the purpose of all these.

Lindauer assures that this is an incredibly stupid situation. In the Muslim world there are only about 2000 to 3000 individuals whose entire focus of life is revenge. According to Lindauer this is no more than a school auditorium filled with potential terrorists.

Barrett shows his consent and gratitude.

Առաջադրանք -6

Have your say! Prepare your questions to the speakers. Արտահայտի՛ր քո կարծիքը: Նախապատրաստե՛ք հարցերը անավելճի վերջում ներկայացնելու համար:

The motion under debate, which you are going to conduct, is “Chinese will oust English as a language of international communication in 30 years’ time”.

The moderator will invite the guests to speak for or against the motion. Then he/she will throw the question open to the audience. In the end you will vote on the motion.

Choose the moderator and the keynote speakers and ask them to prepare their speeches. Decide on a 5-minute time limit. Meanwhile prepare your questions to the

speakers. The language box below will help you. After you have made the preparations, role-play the debate.

Conversation gambits and collocations

The purpose of tonight's debate is to *certainly take their side.*

...

...problems which are likely to become more acute

it is heavily dependent on ...

In fact, it strikes me as significant that

...

... able to offer an attractive mode of development

So we have a peculiar situation here.

What it needs to do is to ...

in the fullest meaning of that term

it needs to address these deficiencies

in so doing it will immediately become more attractive to the people

When it comes to...

You need to keep an eye on it.

To me this is an enormously complex issue.

to yearn for the old system

The crux of the problem for ... is that

...

The flipside of this is that ...

It can be marginally useful.

It can provide some opportunities in terms of ...

Not that we discount the ... element,

...

None of that really matters.

Foreign public opinion would almost

Առաջադրանք 1-ը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը իրադրային քերականության հատկանիշների համապատասխանեցումն է երկխոսությանը (ռեցեպտիվ), որը կարողացել են հաղթահարել գրեթե բոլորը: Երկրորդ (պրոդուկտիվ) մասի կատարման դժվարությունը արագ կողմնորոշվելու և ստեղծագործելու պակասն է, որի պատճառով ունենք 78% ճիշտ պատասխան, 11% թերի և 11% սխալ պատասխան: Ստեղծագործական մասում գնահատվել է նաև բայական ժամանակածանցի՝ հատկապես, ներկա, ապառնի և անցյալ շարունակական ժամանակածանցի գործածությունը, որոնք հաճախ են օգտագործվում իրադրային քերականական կառույցներում:

Առաջադրանք 2-ում ուսանողները շատ հստակ կարողացել են գործածել ճիշտ խոսության նշույթները: Թերի և սխալ պատասխաններ գրանցվել են նշված շարքն ավելացնելու, լրացնելու մեջ: Արդյունքում ուսանողների 74% -ը տիրապետում է այդ բառապաշարին, 15%-ը դժվարացել է ավելացնել շարքը, իսկ 11%-ի մոտ գրանցվել են անհամապատասխան նշույթներ:

Առաջադրանք 3-ի արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողները կարողանում են ուրիշի ուղղակի խոսքը հաջողությամբ դարձնել անուղղակի, դժվարությունը կրկին ստեղծագործական աշխատանքի մեջ է, որի ժամանակ ուսանողները վերարտադրում են ընկերոջ խոսքը. արդյունքում 78% -ը ճիշտ են պատասխանել, 10%-ը՝ թերի, սխալ վել է միայն ուսանողների 12%-ը:

Առաջադրանք 4-ի կատարման արդյունքները վկայում են, որ ուսանողների՝ 80% -ը հաղթահարել է այն, 12% -ի մոտ գրանցվել է թերի, իսկ 8%-ի մոտ՝ սխալ պատասխան: Այս առաջադրանքի ճիշտ պատասխանների տոկոսային արդյունքն ամենաբարձրն է՝ 80% հետթեստավորման առաջադրանքների մեջ::

Առաջադրանք 5-ը հաղորդակցական բնույթի է, որտեղ կիրառվել է դերախաղի մեթոդը: Ստանձնելով այս կամ այն քաղաքական գործչի, լրագրողի կամ հանդիսատեսի դերը, ուսանողները պաշտած մակարդակով կարողացել են ներկայացնել այն: Հայտորոշիչ թեստավորման ժամանակ նմանատիպ վարժության կատարման արդյունքում գրանցված 25% -ի դիմաց այժմ ունենք 57%

առաջադիմություն, այսինքն՝ 32%-ի աճ այս առաջադրանքի կատարման համար:

Առաջադրանք 6-ի կատարման համար անհրաժեշտ էր տրված բառերն օգտագործելով արտահայտել կարծիք: Արդյունքները վկայում են, որ ուսանողների հաջողվել է տրված իրադրությունը խմբային աշխատանքով մշակել ու ց հետո դերախաղով ներկայացնել բանավեճը: Բառապաշարի ցանկն օգնել է ավելի արդյունավետ կատարել հանձնարարված աշխատանքը: Այս հանձնարարության կատարման արդյունքները նույնպես ենթադրում են զգալի աճ. հայտորոշիչ թեստավորման 22% -ի դիմաց 59% առաջադիմություն, այստեղ արդեն՝ աննախադեպ 37%-ի աճ:

Փորձարկումն ընթացել է երկու փուլով՝ բուն ուսուցողական և հետփորձարարական ստուգման:

Չափի առնելով ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի անգլիական բաժնում կիրառվող ուսումնամեթոդական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութը՝ առաջարկվել են լրացուցիչ տեքստեր, առաջադրանքներ և վարժություններ:

Չիմնվելով մեր կողմից մշակված մեթոդական կադապարի վրա՝ փորձարարական աշխատանքների վերջում թեստավորման միջոցով անցկացվել է ստուգողական աշխատանք, որի նպատակն է եղել պարզել, թե արդյոք մշակված ռազմավարությունն ու վարժությունների համակարգը ծառայել են նպատակին, որքանով են իրացվել և կիրառվել իրադրային քերականական կառույցները հաղորդակցման ընթացքում, և որքանով է դրանց տիրապետումը նպաստել բանավոր խոսքի զարգացմանը:

Չետփորձարարական ստուգողական աշխատանքներն իրականացվել են 2015թ. հոկտեմբերին, որին մասնակցել են 94 ուսանող¹ և 2016 թ. ապրիլին՝ 85 ուսանող (ընդամենը՝ 179):

Նպատակահարմար է կիրառված մեթոդների արդյունավետությունն ավելի ակնառու ցույց տալու համար համեմատել 4-րդ կուրսի 2014-2015 և 2015-2016թթ. հետփորձարարական թեստերի արդյունքները (ուսանողների թիվը՝ 179) նախորդ 3 տարիների (2012-2013, 2013-2014, 2014-2015թթ.) հայտորոշիչ

¹ Չետփորձարարական թեստավորման մասնակիցների թիվը 2015թ. պակասել է, քանզի 4-րդ կուրսի ուսանողները հետփորձարարական թեստավորման պահին արդեն ավարտել էին բուհը:

թեստավորման արդյունքների հետ (ուսանողների թիվը՝ 231):
 Հարմարության համար մեկ արյունակում ներկայացնենք
 նախաթեստավորման արյունակներից 4-րդ կուրսի 3 տարիների
 արդյունքները՝ ըստ առաջադրանքների:

Աղյուսակ 8.

4-րդ կուրսի ուսանողների 3 տարիների (2011-2012, 2012-2013, 2013-2014 թթ.) հայտրոշիչ թեստավորման արդյունքները


Առաջադրանք		Ուսանողների քանակ (231)			%		
		ճիշտ	Թերի	Սխալ	ճիշտ	Թերի	Սխալ
Առ. 1	Գրավոր	121	56	54	52%	24%	23%
Առ. 2	Գրավոր	130	38	63	56%	16%	27%
Առ. 3	Գրավոր	128	49	54	55%	21%	23%
Առ. 4	Գրավոր	142	47	42	61%	20%	18%
Առ. 5	Գրավոր	58	35	138	25%	15%	60%
Առ. 6	Բանավոր	50	122	59	22%	53%	26%

Աղյուսակ 9.

4-րդ կուրսի ուսանողների հետխորձ արարական թեստերի (2014-2015 թթ. և 2015-2016թթ.) արդյունքները

Առաջադրանք		Ուսանողների քանակ (179)			%		
		ճիշտ	Թերի	Սխալ	ճիշտ	Թերի	Սխալ
Առ. 1	Գրավոր	139	20	20	78%	11%	11%
Առ. 2	Գրավոր	133	27	19	74%	15%	11%
Առ. 3	Գրավոր	140	15	22	78%	10%	12%
Առ. 4	Գրավոր	142	20	15	80%	12%	8%
Առ. 5	Գրավոր	102	28	49	57%	16%	27%
Առ. 6	Բանավոր	106	29	39	59%	16%	22%

Տրամագիր 13.



Ինչպես ակնհայտորեն վկայում են հայտորոշման և հետփորձարարական թեստերի վերլուծության արդյունքները, զգալիորեն աճել է ուսանողների ճիշտ պատասխանների քանակը. մասնավորապես բարձր ցուցանիշներ են գրանցվել (ավելի քան երկու անգամ) հաղորդակցման կարողությունների զարգացման առումով, որտեղ արձանագրվել է ուսանողների կողմից կիրառվող իրադրային քերականական մեխանիզմների ձևավորման դրական դինամիկա(տեղաշարժ):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ համապատասխան փորձարարական ուսուցման վերլուծության արդյունքների ամփոփմամբ հաստատվել են աշխատանքային վարկածի հավաստիությունը, առաջարկվող կաղապարի և մեթոդական համակարգի արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության յուրաքանչյուր հետևյալ եզրակացությունները.

